**ՄԽԻԹԱՐ ԳԱՄՊԱՐՅԱՆ, ԵՂԻՇԵ ԴԱՇՏՈՅԱՆ - ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ԴԵՐԸ ԿԱՐՈՂՈՒՄԱԿ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ՝ ԻԲՐԵՎ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ**

Հիմնաբառեր՝ կառավարման մշակույթ, կառավարման ոճեր, գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, կարողունակություններ, կարողունակահենք մոտեցում, անձ, հանրակրթություն

Հանրակրթության համակարգի հումանացման և ժողովրդավարացման համատեքստում արդիական է շրջանավարտի անձնական բնութագրերի հարաբերակցության, պետության կողմից պահանջների և սոցիալական արժեքների համակարգի ընկալումը:

Այս աշխատանքի նպատակը հանրակրթության դերի տեսական վերլուծությունն է կարողունակ անձի ձևավորման գործում՝ որպես պետության կայուն զարգացման հիմք, անհատականության զարգացման, մշակույթի և կառավարման ոճերի, կրթության կարողունակահենք մոդելի ժամանակակից հասկացությունների տեսանկյունից:

Հոդվածում բացահայտվում է կառավարման մշակույթի էությունը՝ որպես արժեքային կողմնորոշումների համակարգ, որին բնորոշ է կառավարման ամենաօպտիմալ ոճը՝ հիմնված մարդասիրության, բնության և մարդու կյանքի պաշտպանության, դրանց վերարտադրության սկզբունքների և մարդկային կապիտալի վրա: Կառավարման մշակույթը դիտարկվում է որպես միասնական կարգավորող համակարգի ենթահամակարգ, որն ապահովում է սոցիալական գործընթացների ինստիտուցիոնալ կառավարելիությունը՝ հիմնվելով տարածաշրջանի ավանդույթների, մշակույթի և բարոյական արժեքների վրա:

Աշխատանքում բացատրվում են «գիտելիք, կարողություն, հմտություն» և «կարողունակություն» հասկացությունները, դրանց փոխհարաբերությունները: Մանրամասն դիտարկվում է կարողունակության կառուցվածքը, ընդգծվում է կարողունակահենք կրթության զարգացման կարևորությունը՝ դպրոցի շրջանավարտի բնութագրի ձևավորման և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանության գնահատման գործում:

Հոդվածում հիմնավորվում է կրթական հաստատություններին համապատասխան հնարավորություններով ապահովելու անհրաժեշտությունը՝ սերունդների մեջ ձևավորելու բոլոր կարողունակությունները, որոնք համապատասխանում են հանրային շահին և ներդաշնակ, կիրթ ու կարողունակ անձի ձևավորման միջոցով նպաստում են պետության կայուն զարգացմանը:

MKHITAR GASPARYAN, EGISHE DASHTOIAN - THE ROLE OF GENERAL EDUCATION IN THE FORMATION OF A COMPETENT PERSONALITY AS THE BASIS FOR SUSTAINABLE DEVELOPMENT OF THE STATE

***Keywords:** management culture, management styles, knowledge, skills, competencies, competency-based approach, personality, general education*

In the context of the humanization and democratization of the general education system, it is relevant to understand the relationship between the personal characteristics of graduates, state requirements, and the system of social values. This work aims to provide a theoretical analysis of the role of general education in shaping a competent individual as a foundation for the sustainable development of the state. This analysis is conducted through the lens of contemporary concepts of personality development, cultural values, management styles, and the competency-based model of education.

The article examines the concept of managerial culture as a system of value orientations that inform the selection of optimal management styles. These styles are based on the principles of humanism, the preservation of nature and human life, their reproduction, and reliance on human capital. Managerial culture is considered as a subsystem within a unified regulatory framework that ensures the institutional governance of social processes. This governance is rooted in the region's values, customs, traditions, and moral culture.

The concepts of "knowledge, skills, and competencies" and their interrelation are explained, with a detailed examination of the structure of competencies. The article emphasizes the importance of implementing a competency-based approach in defining the profile of a school graduate and assessing educational outcomes. Furthermore, it argues for the necessity of empowering educational institutions to equip the younger generation with competencies aligned with societal needs. Such an approach not only fosters the development of an educated and competent individual but also contributes significantly to the sustainable development of the state.

Ներկայացվել է՝ 17.09.2024 թ.
Գրախոսվել է՝ 30.10.2024 թ.

**«ԴՊՐՈՑԸ ՈՐՊԵՍ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ՃԿՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ**

**ԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԱՍՏԴԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվում է «դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը, դրա ազդեցությունը կառավարման տարբեր, հիմնականում դինամիկ մոդելների ձևավորման վրա: Դպրոցի կառավարման խնդիրներն ըստ արտադրական փոխաբերությունների քննության առնելիս դպրոցը դիտարկվում է որպես ուսուցում «արտադրող» գործարան կամ ձեռնարկություն: Հիմնավորվում է այն գաղափարը, որ գործարարական ոլորտում ընկած կառավարման մոդելների ներդրումը կրթության բնագավառ կարող է նպաստել նոր, ավելի արդյունավետ կառավարման մոդելի ստեղծմանը: Շեշտադրվում է նաև այն գաղափարը, որ դպրոցի ճկուն կառավարման մոդելի ստեղծման տարբեր նախապայմաններից առանձնանում է հատկապես «դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը: Քննության առարկա են դառնում նաև այն մոտեցումները, ըստ որոնց՝ «դպրոցը չի կարելի ուղղակի կամ փոխաբերաբար ընդունել որպես ձեռնարկություն, քանի որ գործ ունենք տարաբնույթ արտադրական հարաբերությունների հետ»: «Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի կարևորությունը հիմնավորվում է նաև այն գաղափարով, ըստ որի՝ փոփոխությունների կառավարման մոդելների ներդրումը նպաստում է ոչ միայն դպրոցի ճկուն կառավարման մոդելի ստեղծմանը, այլև համապատասխան պայմաններ է ստեղծում դպրոցում սովորելու ընթացքում սովորողների համար հետագայում ճիշտ մասնագիտություն ընտրելու, ցանկացած մասնագիտությամբ աշխատելուց «ճկուն» կառավարման մեթոդներով աշխատանքը կազմակերպելու համար: «Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը կարևորվում է նաև այն միտումի բացահայտմամբ, համաձայն որի՝ տեղի է ունենում զարգացած կրթական ավանդույթներ ունեցող եվրոպական երկրներում «կոշտ» կառավարման մոդելներից անցում դեպի «ճկուն» կառավարման մոդելները: Ընդ որում «ճկուն»

կառավարման մոդելներն ուղղակի կամ անուղղակի առջվում են նշված հայեցակարգին: Բացահայտում է «դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի ներդրման արդյունքում ձևավորված կրթության գործընթացի անհատականացման միտումը:

Հիմնաբառեր. ճկուն տեխնոլոգիա, ուսուցողական կազմակերպություն, ներքին բարեփոխում, նվազագույն ստադարտ, անհատական կրթական հետազոծ, անհատական ուսումնական պլան, փոփոխությունների կառավարում:

Ներածություն

Միայն այն դպրոցն է ի գորու բավարարելու այսօրվա պահանջները, որը ճկունորեն արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին: Ժամանակի տարաբնույթ մարտահրավերներին արագ արձագանքող դպրոց ունենալու համար պետք է շարունակաբար այն բարեփոխել, ներդնել կառավարման և ուսուցման նոր տեխնոլոգիաներ: Արդի փուլում դպրոցը ենթարկվում է հարացուցային փոփոխությունների: Նոր, նորարարական, մասնավորապես ճկուն տեխնոլոգիաների կիրառման արդյունքում կրթության փոփոխումները, մանկավարժները սկսեցին դպրոցը ներկայացնել որպես «ձեռնարկություն», «ուսուցողական կազմակերպություն», որը կարող է արագ արձագանքել առաջացող խնդիրներին: Դպրոցի կառավարման նոր հայեցակարգը ենթադրում է, որ այն կարողանում է փոխվել, ինքնակատարելագործվել ներսից: Այստեղ խոսքը «ներքին բարեփոխման» մասին է, որը բովանդակային առումով տեղի է ունենում լրիվ այլ տրամաբանությամբ, երբ այն համեմատում ենք պետության կողմից իրականացվող բարեփոխումների հետ: Ընդ որում, ցանկացած ներքին բարեփոխում, ինչպես ցույց է տալիս սկանդինավյան երկրների փորձը, իրականացվում է քաղաքական աջակցությամբ:

Հեղազոտության հիմնախնդիրները

Դպրոցի կառավարման համակարգը շարունակական բարեփոխման անհրաժեշտություն ունի: Խնդիր է դրվում ավանդական արտաքին գործոնների ազդեցությամբ մոդելը փոխարինել «ներքին բարեփոխման» մոդելով, «կոշտ» կառավարման մոդելը փոխարինել «ճկուն» կառավարման մոդելով: Անհրաժեշտություն է առաջանում կրթության ոլորտում կիրառել կառավարման նոր տեսություններ ու մոտեցումներ: Գործարարական կառավարման մոտեցումները, աչքի ընկնելով իրենց արդյունավետությամբ, դժվարությամբ են ներդրվում կրթության ոլորտ: Դժվար է ներդնել հատկապես փոփոխությունների կառավարման մոդելները, որոնք հիմնականում ստեղծվում են ճկուն

կառավարման մեթոդաբանությամբ: «Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը հիմք ընդունելով՝ հիմնովին փոխվում է դպրոցի կառավարման մեթոդաբանությունը:

Հեղազոտության արդիականությունը հիմնավորվում է գործարարության բնագավառում փոփոխությունների կառավարման մոդելների՝ դպրոցի կառավարման ոլորտ ներդնելու անհրաժեշտությամբ, ճկուն կառավարման մոդելների ստեղծման օրինաչափությամբ:

Հեղազոտության նորոյթը

Դպրոցի ճկուն կառավարման հիմնախնդիրը քննության է առնվել «Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը դպրոցի ճկուն կառավարման մեթոդաբանության ձևավորման և զարգացման տեսանկյունից: Հիմնավորվել է այն գաղափարը, ըստ որի՝ տվյալ հայեցակարգն առանցքային նշանակություն ունի դպրոցի ճկուն կառավարման մոդելի ստեղծման գործում:

Հեղազոտության տեսական նշանակությունը

Ուսումնասիրվել են փոփոխությունների կառավարման որոշ մոտեցումներ և տեսություններ, բացահայտվել են «Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի ներդրման միտումները դպրոցի ճկուն կառավարման մեթոդաբանության ձևավորման և զարգացման գործընթացում:

Հեղազոտության գործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքները հետաքրքիր և արժեքավոր նյութ կարող են լինել դպրոցի կառավարման մեջ ներգրավված անձանց, մանկավարժների, կրթության տարբեր հիմնախնդիրներ ուսումնասիրող անձանց համար:

Հեղազոտության մեթոդները

Հետազոտության առաջադիր խնդիրները լուծելու նպատակով կիրառվել են հետազոտության պատմահամեմատական վերլուծության, հասկացությունների բովանդակային և բաղադրիչային վերլուծության, մոդելավորման մեթոդները:

Հեղազոտության նպատակը

Ուսումնասիրել գործարարական փոփոխությունների կառավարման արդյունավետ տեսությունները, բացահայտել «Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի կիրառման առանձնահատկությունները դպրոցի ճկուն կառավարման մեթոդաբանության ձևավորման և զարգացման գործընթացում:

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը

Կառավարման ճկուն մոդելներ կիրառելու պայմաններից մեկն այն է, որ դպրոցներին տրվում են որոշումներ կայացնելու ընդլայնված հնարավորություններ, այդ թվում՝ ռեսուրսների կառավարման ոլորտում (կախված ուսումնական հաստատության գտնվելու վայրից): Օրինակ՝ Ֆինլանդիայում դպրոցն ինքն է որոշում, թե քանի հոգեբան պետք է վարձի:

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը հիմք ընդունելով՝ հնարավոր է դառնում աշխատանքը բաժանել ըստ գործունեության տեսակների, ավելի ցածր ծախսերով արտադրանք տալ, դպրոցի պարագայում վերջնարդյունք տալ, այսինքն՝ բարձրացնել կազմակերպության արդյունավետությունը: Այսպիսով, ըստ արտադրական փոխաբերությունների քննության առնելով դպրոցի կառավարման խնդիրները՝ հնարավոր է դառնում դիտարկել այն որպես ուսուցում «արտադրող» գործարան կամ ձեռնարկություն: «Դպրոցը որպես ձեռնարկություն» մոդելը ենթադրում է ուսումնական ռեսուրսների համընդհանուր փաթեթ, որը ներառում է ուսուցիչներ, դասարաններ, ուսումնական ծրագրեր և ուսումնական նյութեր և ուսանողներ: Ենթադրվում է, որ ռեսուրսների միջև կա օպտիմալ հարաբերակցություն (օրինակ՝ մեկ ուսուցչի հաշվով աշակերտների թիվը), որը նույնն է բոլոր դպրոցների համար:

Մի կողմից՝ կրթության կազմակերպման հարցում գիտնականները կտրականապես չեն ընդունում «դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը (Лачашвили, Орлова 2018: 1-38): Մյուս կողմից՝ գործարարության կառավարման և կրթության կառավարման մոդելների միջև գիտնականները բացահայտել են որոշակի համընդհանրություն: Ընդ որում, դա արտահայտվում է նրանով, որ գործարարական կառավարման մոդելները ուղղակի և անուղղակի ազդում են կրթության կառավարման ժամանակակից մոդելների ձևավորման վրա (Несмеянова, Липатов 2020. 184-204):

«Արդյունավետ դպրոցի» և «դպրոցի բարելավման» (School Effectiveness and School Improvement) ուսումնասիրությունները, որոնք իրականացվել են ԱՄՆ-ում, Կանադայում, Անգլիայում, Հոլանդիայում և այլ երկրներում, միտված են բացահայտելու դպրոցի կառավարման որակը, որը պայմանավորված է նրանով, թե ինչպես և ինչ հաջողությամբ են ներդրվում իրենց արդյունավետությամբ աչքի ընկած կառավարման մոդելները:

Ընդհանուր առմամբ, նշված ուղղություններով եվրոպական երկրներում իրականացվող բարեփոխումները ցանկալի արդյունք չեն տվել՝ չնայած առաջընթացն ակնհայտ է (Загвоздкин 2008):

Դպրոցի «ճկուն» կառավարման մոդելների ստեղծման միտումները

Համապատասխան ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դպրոցի կառավարման ոլորտում աչքի զարնող միտում է «կոշտ» կառավարման մոդելներից անցում կատարելը «ճկուն» կառավարման մոդելների: Ընդ որում, նշված առաջընթացը վերաբերում է նախ և առաջ այն կրթական համակարգերին, որտեղ «ճկուն» կառավարման մոդելներն ավելի արագ են ներդրվում: Դրա վառ ապացույցն է Ֆինլանդիան:

Գաղտնիք չէ նաև, որ այնպիսի հարուստ ավանդույթներ ունեցող երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, կառավարման ճկուն մոդելները դժվարությամբ են ներդրվում: Նույնը վերաբերում է գերմանախոս երկրներին: Պատճառներից մեկն այն է, որ, անգլոսաքսոնական կրթական ավանդույթի համաձայն (հիմնականում ԱՄՆ-ում և Անգլիայում), նախապատվությունը տրվում է շուկայական մոդելին, որը հիմնված է վարկանիշների, հաջողակ դպրոցների խրախուսման, մրցակցության և կրթության մասնակի սեփականաշնորհման վրա: Հատկանշական է այն, որ նույնը տեղի է ունենում ՀՀ-ում: Կրթության կառավարման նշված ռազմավարությունն ունի բազում առավելություններ և թերություններ: Թերություններից մեկն այն է, որ ակնկալվող արդյունքները միջազգային փորձագետների կամ տվյալ երկրի կրթության պատասխանատուների կողմից բավարար չեն գնահատվում, հատկապես, երբ այդ արդյունքները համեմատվում են սկանդինավյան երկրների արդյունքների հետ: Գերմանախոս երկրները (Գերմանիա, Շվեյցարիա, Ավստրիա), որտեղ այժմ ինտենսիվ քննարկվում և իրականացվում է արդիականացման քաղաքականությունը, որոշվել է հրաժարվել կրթության մեջ շուկայական հարաբերությունների ներդրման ռազմավարությունից: Սակայն նրանք նույնպես տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չեն կարողանում ներդնել իրենց մոտ սկանդինավյան փորձը:

Այստեղ կարևոր դեր է խաղում այսպես կոչված «նվազագույն ստանդարտը» կամ չափորոշիչը, որը ցույց է տալիս կրթական նվաճումների մակարդակը, որին պետք է հասնեն բոլոր ուսանողները: Օրինակ՝ Ֆինլանդիայում ցանկացած դպրոց պետք է ապահովի այս նվազագույն մակարդակը: Ինչպես նշում է Վ. Կ. Ջագվոդկինը. «Եթե երկրի կրթական համակարգը վատ է հանդես գալիս PISA-ում (օրինակ՝ Գերմանիա), ապա պատճառն ուժեղ և թույլ ուսանողների միջև գոյություն

ունեցող մեծ անջրպետն է: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ սովյալ երկիրը չունի պարտադիր նվազագույն չափորոշիչներ (Загвоздкин, 2009, с. 77-78):

Ընդհանրապես, ինչպես ցույց է տալիս Ֆինլանդիայի փորձը, շատ դժվար է որևէ կրթության համակարգում հասնել նվազագույն չափորոշիչների ներդրմանը, քանի որ դա ենթադրում է ուսումնական նյութի յուրացում գրեթե բոլոր սովորողների կողմից (մինչև 95%): «Նվազագույն ստանդարտի մակարդակը որոշվում է էմպիրիկ եղանակով՝ մեծ նմուշի վրա թեստերի վավերացման մեթոդով: Նվազագույն ստանդարտների մշակումը պահանջում է հատուկ հետազոտություն և ներդրումներ» (Загвоздкин, 2009, с. 77-78):

Դպրոցի ճկուն կառավարման գաղափարը մեծ զարգացում ապրեց հատկապես «դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի՝ կրթության ոլորտում շրջանառվելու արդյունքում: Կարելի է պնդել, որ այդ հայեցակարգն առանցքային է դպրոցի ճկուն կառավարման մեթոդաբանության մշակման գործընթացում:

Ճկուն կառավարման տեխնոլոգիաները

Դպրոցի ճկուն կառավարման մյուս նախապայմանը սովորողների անհատական կրթական հետազոծերի նախանշումը կամ մշակումն է: Ինչ-որ առումով այն համարվում է «նոր դպրոցի մոդել», երբ ամեն մի սովորողի համար մշակվում է անհատական զարգացման պլան: Այդ պարագայում, ինչպես նշվեց վերը, դպրոցը հանդես է գալիս որպես «ուսուցանող կազմակերպություն» կամ «ձեռնարկություն»: Ասվածից բխում է, որ հաշվի առնելով «դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը, կրթության կազմակերպիչները կամա, թե ակամա անհատականացնում են ուսուցման գործընթացը: Դա պահանջում է թե՛ նոր մոտեցումներ, թե՛ նոր ռեսուրսներ, թե՛ կրթության բովանդակության արմատական փոփոխություններ:

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի կիրառումը կրթության ոլորտում թույլ է տալիս մանկավարժներին ներդնել այնպիսի «ճկուն» տեխնոլոգիաներ, ինչպիսիք են Scrum-ը, XP, Kanban-ը և այլն (Мухин, Сазерленд, Gandomani, Nafchi): Այս ուղղությամբ աշխատող օտարերկրյա և հայրենական գիտնականները կարծում են, որ Agile-ն կամ ճկուն տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում թե՛ արտադրության որևէ ոլորտում, թե՛ կրթության գործընթացում աշխատանք կազմակերպես փոքր թիմերով կամ խմբերով, ստեղծել նոր, նորագույն արտադրանք, արագ ընդլայնել «արտադրական կարողությունները»:

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը կարող է ներդրվել, եթե լուծվում է սովորողների տարասեռության հիմնախնդիրը: Ինչպես արդեն նշվեց, «թույլ» և «ուժեղ» սովորողների համատեղ ուսուցման կազմակերպումն ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ: Դրա հետ մեկտեղ պետք է նկատել, որ դպրոցի ճկուն կառավարումը ենթադրում է տարասեռության հաղթահարման մեխանիզմների ներդրում, մասնավորապես «նվազագույն չափորոշիների» ներդրման միջոցով: Այդ պարագայում, ինչպես ցույց է տալիս ֆիննական փորձը, սովորողների մեծ մասը յուրացնում է հանրակրթական ծրագիրը: Բացառվում է երկտարեցիությունը: Դպրոցի ճկուն կառավարման մոդելը միտված է «թույլ» և «ուժեղ» սովորողների միջև գոյություն ունեցող անջրպետը վերացնելուն: Դպրոցի ճկուն կառավարման տեսանկյունից կարևորվում են «անհատական ուսումնական պլանները», որոնց ներդրումը պահանջում է համապատասխան մանկավարժական մշակույթ թե՛ դրանց կազմելու, թե՛ դրանք ներդնելու տեսանկյուններից: «Անհատական ուսումնական պլանները» ներդնելու համար անհրաժեշտ է վերանայել տվյալ դպրոցի զարգացման ռազմավարությունը, ուսումնական ծրագրերը և պլանները, շոշափելիորեն կրճատել ուսուցիչների ծանրաբեռնվածությունը, կրճատել նույն դասարաններում սովորող երեխաների քանակը՝ հատկապես քաղաքային դպրոցներում, շեշտը դնել մագիստրոս ուսուցիչներ ներգավելու վրա, ինչպես դա արվում է Ֆինլանդիայում, և, իհարկե, բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը:

Փոփոխությունների կառավարման մոդելները

Փոփոխությունների կառավարման տեսության զարգացման շրջանում մշակվել են բազմաթիվ նման մոդելներ՝ Կ.Լեվինի մոդելը, Մ. Բիրի և «Օ» և Ն. Նորիայի «Է» տեսությունը, ADKAR փոփոխության մոդելները, Վ. Սատիր, Դ. Գարվին և Մ. Ռոբերտո և այլն: Փոփոխությունների կառավարման մոդելների մեծ մասը ստեղծվել է ոլորտի փորձագետների, խորհրդատուների կամ գիտնականների կողմից և ակադեմիական տեսության, կազմակերպչական հետազոտությունների և փորձի համադրություն է (10 основных моделей управления изменениями 2022):

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի գործնականում արտահայտման վառ օրինակ է բիզնեսի փոխանցման մոդելը (Ֆ. Գյարի և Ջ. Քելլի), ըստ որի՝ ձեռնարկությունը նման է կենդանի օրգանիզմի և «կենսաբանական կորպորացիա» է, որը ծնվում է, աճում, հիվանդանում, ընտրություն է կատարում, սովորում...

Փոխակերպման գործընթացը ներառում է չորս տարր. վերակառուցում, վերականգնում, վերակենդանացում, վերանորոգում:

Դ. Դ. Դակայի փոփոխական կորի մոդելը թույլ է տալիս փոփոխությունները ներկայացնել որպես դինամիկ զարգացող գործընթաց, այլ ոչ որպես ստատիկ կանխորոշված հաջորդականություններ:

Ըստ հեղինակի՝ փոփոխական կորը բաղկացած է հինգ հաջորդական փուլերից.

1. «Լճացման» փուլը հաճախ կապված է ընկերության ռազմավարության թուլության, հին տեխնոլոգիաների կիրառման հետ, այս գործոնների համակցությունը զսպում և սահմանափակում է ընկերության զարգացումը,

2. «Նախապատրաստական» փուլ, այս փուլում հիմնական խնդիրն է որոշել փոփոխությունների իրագործելիությունը և մշակել փոփոխությունների իրականացման ռազմավարություն,

3. «Իրականացման» փուլ, ընկերության բարձրագույն ղեկավարությունը ներկայացնում է ռազմավարություն և դրա իրականացման կոնկրետ գործողությունների ծրագիր, առաջադրանքները բաշխվում են աշխատակիցների միջև,

4. «Ստուգման» փուլ - ստուգվում են փոփոխությունները, կատարվում են անհրաժեշտ ճշգրտումներ և բարելավումներ,

5. «Նպատակներին հասնելու» փուլ - այս փուլում ստացված արդյունքները համախմբվում են և բիզնեսը գնահատում է վերափոխման գործընթացում առաջացած նոր առավելությունները (Дак 2002):

Վերլուծելով կազմակերպչական փոփոխությունների կառավարման այս մոդելը՝ կարելի է նկատել կտրուկ անցում «Ստուգում» և «Նպատակներին հասնելու» փուլերի միջև, թվում է, թե ընկերությունը հասնում է իր նպատակին փոփոխությունների փորձական իրականացումից անմիջապես հետո, բայց գործնականում դա տեղի չի ունենում: Այս մոտեցման մեջ առնվազն բացակայում է արդեն ճշգրտված փոփոխությունների «իրականացման» փուլը: Այնուամենայնիվ, հարկ է նշել մի դրական կետ, որը կայանում է նրանում, որ հեղինակը հասկանում է փոփոխության գործընթացում մասնակիցների միջև առաջադրանքների բաշխման կարևորությունը:

Նշվում է, որ որևէ փոփոխության նախագիծ հնարավոր չէ առանց անձնակազմի նորարարության պատրաստականության: Փոփոխությունների կառավարման մեջ հաջողությունը պայմանավորված է անձնակազմի կողմից փոփոխությունների ընդունմամբ: Միաժամանակ հետազոտողները պարզել են, որ աշխատակիցների մոտ 62%-ը

պատրաստ չէ ընկերությունում փոփոխությունների: Այս իրավիճակը հանգեցնում է անձնակազմի դիմադրությանը՝ խոչընդոտելով կազմակերպությունում տեղի ունեցող վերափոխման գործընթացներին (Астафьева, Гончаров, Моисеенко, 2020, с. 24-32, Головина, Воробьева, 2022):

Դպրոցի ճկուն կառավարման մոդելի ձևավորման գործընթացում կարևորվում է Փ. Ջեքսոնի «Դեֆիցիտի մոդելը», որն ներդնելով, հնարավոր է դառնում ստեղծել անհատական մասնագիտական զարգացման ծրագրեր: Մոդելի էությունն այն է, որ ուսուցիչներին պետք է տալ այնպիսի գիտելիքներ և հմտություններ, որոնք նրանք չունեն, բայց անհրաժեշտ են դառնում կոնկրետ իրավիճակում: Ենթադրվում է, որ ուսուցչի պրոֆեսիոնալիզմն աճում է դիսկրետ ձևով՝ մեկ դեֆիցիտից մյուսը, մեկ խորացված վերապատրաստման դասընթացից մյուսը (Hargeaves, 1994): Դեֆիցիտի մոդելը ենթադրում է բացակայող գիտելիքների, հմտությունների, կարողությունների զարգացման անհրաժեշտություն:

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի շրջանակներում ճկուն կառավարման տարրեր է ներառում նաև հետտեխնոկրատ մոդելը, որը ըստ Ա. Հարգրիվսի, ենթադրում է

- մասնագիտական կոմպետենտության մակարդակը մշտապես բարելավելու մոտիվացիա,
 - մասնագիտական կարողությունների գնահատման կանոնավորություն,
 - կրթական կազմակերպության զարգացման ծրագրում մասնագետների մասնագիտական աճի հնարավորությունների ընդգրկման կարևորությունը,
 - «ուսումնական կազմակերպության կարիքների համընկնումը և աշխատողների անձնական աճը» (Hargeaves, 1994):
- Այս պայմաններում ձեռք բերելով նոր իմաստներ՝ լրացուցիչ մասնագիտական կրթությունը կարող է ապահովել.
- կրթական կազմակերպությունների ղեկավարի մասնագիտական որակների և անձի ամբողջականության զարգացման ինտեգրացիոն գործընթաց.
 - ուսանողների կարիքները, հետաքրքրությունները, հնարավորությունները՝ հիմնված կրթական կազմակերպության ղեկավարի անձի ներքին ռեսուրսների բացահայտման և թարմացման վրա.
 - մասնագիտական աճի կառավարում և շարունակական մասնագիտական կրթության անհատական կրթական ռազմավարության ձևավորում.

- աշխարհի, այլ մարդկանց, սեփական անձի նկատմամբ կոմպետենտ փոխազդեցության և արժեքային վերաբերմունքի ձևավորում, որտեղ մասնագիտական գործունեությունը դառնում է փոփոխության և վերլուծության առարկա՝ որպես մասնագիտական և անձնական աճի մեխանիզմ (Ганаева, Масловская, 2018, с. 2-8):

Հետտեխնոկրատ մոդելի կարևոր բաղադրիչ է կրթական կազմակերպության ղեկավարի անձի ներքին ռեսուրսների բացահայտման և թարմացման պահանջը, քանի որ այն ճկուն կառավարման կարևոր բաղադրիչ է:

Փոփոխությունների կառավարման մոդելներում մեծ տեղ է հատկացվում ինչպես կառավարման համար անհրաժեշտ մասնագիտական, այնպես էլ առաջին հայացքից ոչ կարևոր համարվող գիտելիքներին: Օտարերկրյա հետազոտողների մեծամասնությունը համաձայն է, որ լրելայն կամ թաքնված գիտելիքը սկսում է կարևոր դեր խաղալ շարունակական նորարարության պայմաններում և զուցե դառնում է ավելի կարևոր, քան ֆորմալ, կոդավորված, կառուցվածքային և, ըստ երևույթին, նաև կարևոր գիտելիքը (Чечель, 2018, с. 68): Շատ դեպքերում կառավարման հաջողությունը պայմանավորված է նախ և առաջ «թաքնված գիտելիքների» կիրառման կարողություններով:

Փոփոխությունների կառավարման մոդելներից առանձնանում է հատկապես Հարվարդի բիզնես դպրոցի պրոֆեսոր և խորհրդատու Ջոն Կոթթերի առաջարկած մոդելը: Իր դիտարկումների հիման վրա նա բացահայտել է հետևյալ բնորոշ սխալները ընկերություններում փոփոխությունները կառավարելիս.

- Մարդիկ չեն զգում, որ փոփոխությունն իսկապես անհրաժեշտ է:
- Բարեփոխիչների թիմ չկա, կամ պարզապես նրանք այնքան ազդեցություն չունեն, որ իսկապես ինչ-որ բան փոխեն:
 - Ապագայի տեսլական չկա.
 - Ապագայի տեսլականի մասին հաղորդագրությունները հետաձգվում են 10, 100 կամ ավելի անգամ:
 - Խոչընդոտները թույլ են տալիս արգելափակել փոփոխությունները:
 - Չկա պլանավորում, և արդյունքում՝ կարճաժամկետ նպատակներ չեն իրականացվում:
 - Հաղթանակը շատ վաղ է նշվում.
 - Փոփոխությունները ներառված չեն կորպորատիվ մշակույթի մեջ (Cotter, 2007, с. 96-103):

Կարելի է եզրահանգել, որ «Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը կյանքի կոչելու կարևոր պայմաններից է գործարարության կառավարման, մասնավորապես փոփոխությունների կառավարման

մողելները: Փոփոխությունների կառավարման մողելները կարող են դիտարկվել որպես կառավարման տարբեր իրադրություններում փոփոխությունների իրականացման ուղեցույց: Յուրաքանչյուր մողել փոփոխությունները խթանելու յուրօրինակ մոտեցում է ցուցաբերում և կազմակերպչական փոփոխությունները դարձնում մշտական:

Եզրակացություն

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը բարենպաստ հող է ստեղծում գործարարության, տնտեսության այլ ոլորտներում իրենց արդյունավետությամբ աչքի ընկած տեսությունների, կառավարման մողելների կրթության ոլորտ ներդրման համար:

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի կիրառումը նպաստում է բուն ուսուցման գործընթացի անհատականացմանը: «Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգի կիրառումը կրթության ոլորտում մանկավարժներին թույլ է տալիս ներդնել այնպիսի «ճկուն» տեխնոլոգիաներ, ինչպիսիք են Scrum-ը, XP, Kanban-ը և այլն:

«Դպրոցը որպես ձեռնարկություն» հայեցակարգը կարող է ներդրվել, եթե լուծվում է սովորողների տարասեռության հիմնախնդիրը: Կարևոր դրույթ է այն, որ փոփոխությունների կառավարման մեջ հաջողությունը պայմանավորված է անձնակազմի կողմից փոփոխությունների ընդունմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Астафьева О.Е., Гончаров И.Л., Моисеенко Н.А. Анализ опыта управления изменениями в организациях // Управление. 2020. Т. 8. № 3. - С. 24-32.
Astaŕeva O.E., Goncharov I.L., Moiseenko N.A. Analiz opyta upravlenija izmenenijami v organizacijah // Upravlenie. 2020. Т. 8. № 3. - S. 24-32. (in Russian)
2. Ганаева Е. А., Масловская С. В. О профессиональном росте руководителя образовательной организации в системе дополнительного профессионального образования//Вестник марийского государственного университета. -2018. - С. 2-8.
Ganaeva E. A., Maslovskaja S. V. O professional'nom roste rukovoditelja obrazovatel'noj organizacii v sisteme dopolnitel'nogo professional'nogo obrazovaniija//Vestnik marijskogo gosudarstvennogo universiteta. - 2018. - S. 2-8. (in Russian)

3. Головина О.Д., Воробьева О.А. Возможности внедрения модели управления изменениями ДЖ. Коттера в проектный менеджмент организации//Вестник удмурдского университета. Экономика и право. - 2022. Т. 32. Вып. 5. - С. 805-811.
Golovina O.D., Vorob'eva O.A. Vozmozhnosti vnedrenija modeli upravlenija izmenenijami DZh. Kottera v proektnyj menedzhment organizacii//Vestnik udmurdsogo universiteta. Jekonomika i pravo. - 2022. T. 32. Vyp. 5. - S. 805-811. (in Russian)
4. 10 основных моделей управления изменениями//Your Mentor. URL: <https://www.your-mentor.ru/management/107-10-osnovnykh-modelej-upravleniya-izmeneniyami> (дата обращения: 20.06.2022).
10 osnovnykh modelej upravlenija izmenenijami//Your Mentor. URL: <https://www.your-mentor.ru/management/107-10-osnovnykh-modelej-upravleniya-izmeneniyami> (data obrashhenija: 20.06.2022). (in Russian)
5. Загвоздкин В. К. Гибкая школа. Общая стратегическая цель как условие системных изменений в сфере образования// «Управление школой. -№. -19. - 2008 (1sept.ru).
Zagvozdkin V. K. Gibkaja shkola. Obshhaja strategicheskaja cel' kak uslovie sistemnyh izmenenij v sfere obrazovanija// «Upravlenie shkoloj. -№. -19. - 2008 (1sept.ru). (in Russian)
6. Загвоздкин В. К. Программа развития качества образования в школах Гер мании. / В. К. Загвоздкин // Оценка качества образования. - 2009. - №1. - С. 77 78.
Zagvozdkin V. K. Programma razvitija kachestva obrazovanija v shkolah Ger manii. / V. K. Zagvozdkin // Ocenka kachestva obrazovanija. - 2009. - № 1. - S. 77 78. (in Russian)
7. Лачашвили, Р. А., Орлова, Е. В. Формирование организационной культуры школы, (2018. - С. 1-38) //Режим доступа http://www.leaducation.ru/publications/materials/formirovanie_organizatsionnoy_kultury_shkoly/ (Дата обращения 18.02.2024).
Lachashvili, R. A., Orlova, E. V. Formirovanie organizacionnoj kul'tury shkoly, (2018. - S. 1-38) //Rezhim dostupa http://www.leaducation.ru/publications/materials/formirovanie_organizatsionnoy_kultury_shkoly/ (Data obrashhenija 18.02.2024). (in Russian)
8. Мухин К.Ю. Новая эра Agile: есть ли будущее у традиционных подходов в управлении проектами?! // Экономические науки. - 2018. - № 159. - С. 17-21.

Muhin K.Ju. Novaja jera Agile: est' li budushhee u tradicionnyh podhodov v upravlenii proektami?! // Jekonomicheskie nauki. - 2018. - № 159. - s. 17-21. (in Russian)

9. Несмеянова Р. К., Липатов С. А. (2020). Концептуализация школы как организации: обзор литературы // Организационная психология. Т.10. - №4. 184-204. // Режим доступа Концептуализация школы как организации: обзор литературы (cyberleninka.ru).
Nesmejanova R. K., Lipatov S. A. (2020). Konceptualizacija shkoly kak organizacii: obzor literatury // Organizacionnaja psihologija. T.10 № 4. 184-204. // Rezhim dostupa Konceptualizacija shkoly kak organizacii: obzor literatury (cyberleninka.ru). (in Russian)
10. Сазерленд Д. (2016). «Scrum. Революционный метод управления проектами» Пер. на рус. язык, изд-ие на русском языке, «Манн, Иванов и Фербер», - 186 с.
Sazerlend D. (2016). «Scrum. Revoljucionnyj metod upravlenija proektami» Per. na rus. jazyk, izd-ie na russkom jazyke, «Mann, Ivanov i Ferber», - 186 s. (in Russian)
11. Чечель И. Д. (2016). Директор школы и его команда: стратегия и тактика коллективного профессионального развития. М.: Нац. Кн. центр, ИФ «Сентябрь». - 192 с.
Chechel' I. D. (2016). Direktor shkoly i ego komanda: strategija i taktika kollektivnogo professional'nogo razvitija. M.: Nac. Kn. centr, IF «Sentjabr'». - 192 s. (in Russian)
12. Gandamani, T. J. and Nafchi, M. Z. (2016). Agile Transition and Adoption Human-Related Challenges and Issues: A Grounded Theory Approach. Computers in Human Behavior, 62, 257-266.
<https://doi.org/10.1016/j.chb.2016.04.009>
13. Hargeaves A. Changing Teachers Changing Timess (Cassell), London, teachers' work and culture in the postmodern age: Publisher Collection Contributor. -XVI.- 272 p.
14. Kotter, J.P. (2007). Leading Change: Why Transformation Efforts Fail // Harvard Business Review. - Vol. 85, № 1. - pp. 96-103.

ИГОРЬ КАРАПЕТЯН, АСТХИК ВАРДАНЯН - “КОЦЕПЦИЯ “ШКОЛА КАК ПРЕДПРИЯТИЕ” КАК НЕОБХОДИМЫЙ КОМПОНЕНТ ГИБКОЙ МЕТОДОЛОГИИ УПРАВЛЕНИЯ”

Ключевые слова: *гибкая технология, образовательная организация, внутренние изменения, минимальный стандарт, индивидуальная образовательная траектория, индивидуальный учебный план, управление изменениями*

Аннотация: в статье представлена концепция “школа как предприятие”, влияние этой концепции на формирование различных, преимущественно динамических моделей управления. Рассматривая проблемы управления школой с точки зрения производственных метафор, авторы отмечают, что школа является фабрикой или предприятием, “производящим” обучение. На основе такого подхода обосновывается идея о том, что внедрение моделей бизнес-управления в сферу образования может способствовать созданию новой, более эффективной модели управления. Важность концепции “школа как предприятие” обосновывается также идеей о том, что внедрение моделей управления изменениями способствует не только созданию гибкой модели управления школой, но и создает соответствующие условия для выбора учащимися правильной профессии в процессе обучения в школе, для “гибкой” организации работы в дальнейшей трудовой деятельности. Выявлена тенденция индивидуализации образовательного процесса, сформировавшаяся в результате внедрения концепции “школа как производство”.

IGOR KARAPETYAN, ASTHIK VARDANYAN - THE CONCEPT “SCHOOL AS AN ENTERPRISE” AS A NECESSARY COMPONENT OF FLEXIBLE MANAGEMENT METHODOLOGY

Keywords: *flexible technology, educational organization, internal change, minimum standard, individual educational trajectory, individual curriculum, change management*

The article explores the concept of "school as an enterprise" and its influence on the development of various, primarily dynamic, management models. School management issues are often examined through "production" metaphors, and the school is likened to a factory or enterprise that "produces" learning outcomes. This perspective highlights the argument that

adopting business management models in education can facilitate the creation of new, more efficient management approaches.

The relevance of the "school as an enterprise" concept is further supported by the notion that the implementation of change management models not only contributes to creating a flexible school management framework but also provides favorable conditions for students to make informed career choices during their school years. Additionally, this approach promotes the "flexible" organization of work in their future professional activities. The article identifies a tendency toward the individualization of the educational process, which emerges as a result of adopting the "school as production" concept.

Ներկայացվել է՝ 24.09.2024 թ.
Գրախոսվել է՝ 25.11.2024 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՏՃՄ (STEM) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ. ԱՌԱՋԸՆԹԱՑՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԱՆՈՒՇ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Համառոտագիր

Հայաստանում տարիներ շարունակ հանրակրթության ուսումնական ծրագիրը ծանրաբեռնված է եղել չհամակցված փաստական գիտելիքներով, որոնք չեն թարմացվել կամ համապատասխանեցվել հստակ ուսումնական նպատակներին: Գիտելիքներ հաղորդելու վրա հիմնված ավանդական ուսուցումը և տեսական բովանդակությունը գերակշռում էին, և դպրոցները չունեին բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի («ԲՏՃՄ») (STEM) ուսուցման լրբորատորիաներ: Այս պայմաններում ուսումնառության արդյունքները ցածր են եղել հատկապես բնագիտական առարկաների ոլորտում: Սույն հոդվածը ներկայացնում են կարողունակությունների վրա հիմնված կրթական համակարգին անցնելու բարեփոխման քայլերը՝ հայեցակարգից մինչև իրականացում. բարդ և մարտահրավերներով լի ճանապարհ, քանի որ ուսումնական ծրագրերն ու գործընթացները պատմականորեն եղել են գիտելիքի վրա հիմնված և ուսուցչակենտրոն:

Լինելով հանրակրթության ուսումնական ծրագրի բարեփոխման համակարգող և անմիջական մասնակից՝ հեղինակը վերլուծված տվյալները վերցրել է փաստաթղթավորված զեկույցներից և հաղորդագրություններից, որոնք ցույց են տալիս զարգացող երկրում ուսումնական ծրագրերի բարեփոխումների բաղադրիչներն ու գործընթացը: Բարեփոխման ծրագրի արդյունքները վկայում են, որ ուսուցիչներից և սովորողներից շարունակական հետադարձ կապ հայցելն և կարիքներին ու մտահոգություններին անդրադառնալը կօգնի, որ ԲՏՃՄ հանրակրթական ուսումնական ծրագրի վերափոխումը կյանքի կոչվի:

Հիմնաբառեր՝ Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա («ԲՏՃՄ»), կարողունակության վրա հիմնված կրթական համակարգ, առարկայական չափորոշիչներ, ուսումնառության վերջնարդյունքներ, ձևավորող գնահատում, փորձարկում (պիլոտ), մենթորություն, մշտադիտարկում

Ներածություն

Հայաստանը ներկայումս իրականացնում է ուսումնական ծրագրի հավակնոտ բարեփոխում՝ սովորողներին հնարավորություններ ընձեռելով օգտագործելու իրենց ողջ ներուժը և ապահովելու երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացումը: Որպես այս բարեփոխումների մի մաս՝ Հայաստանը ձգտում է անցնել կարողունակությունների վրա հիմնված կրթական համակարգի, որը բարդ և մարտահրավերներով լի ճանապարհ է, քանի որ բոլոր ռեսուրսները, ուսումնական ծրագրերը և կրթական գործընթացները պատմականորեն եղել են գիտելիքահենք և ուսուցչակենտրոն: Կարողունակությունների վրա հիմնված կրթությունը պահանջում է հարցադրումների ու արդյունքների վրա հիմնված աշակերտակենտրոն դասավանդում, ուսումնառություն և գնահատում: Այն կենսական անհրաժեշտություն է և նպաստում է 21-րդ դարի մարդու/քաղաքացու անհրաժեշտ անձնային որակների՝ քննական, համակարգված մտածողության, ստեղծարարության և ճկունության, համագործակցային հմտությունների և ինքնուրույնության ձևավորմանն ու զարգացմանը:

Այս բարեփոխումը, ինչպես ցանկացած բարեփոխում կրթության ոլորտում, բաղկացած էր երեք փուլից.

1. Հայեցակարգի նախագծման փուլ (մտադրություն). բարեփոխումների սկիզբ, նախագծում՝ հիմնված երկրի կարիքների և առաջնահերթությունների վրա,
2. Դաշտային փուլ (իրականացում). գործողությունների իրականացում տեղում,
3. Վերլուծության փուլ. իրականացման գործընթացի և արդյունքների, նախատեսվածի և ձեռք բերվածի, ինչպես նաև ծրագրի հաջողված և թույլ կողմերի, քաղված դասերի և ապագայում ընթացիկ գործողությունների շարունակականության և կայունության ապահովման հնարավորությունների գնահատում:

Այս ուսումնասիրությունը որակական է և նպատակ ունի ներկայացնելու Հայաստանում իրականացվող ուսումնական ծրագրերի բարեփոխումների ուղին: Բարեփոխումը կառավարվել է Համաշխարհային բանկի կողմից և ֆինանսավորվել Եվրոպական միության կողմից 2019 թ-ի դեկտեմբերից մինչև 2023 թ-ի դեկտեմբերը:

Գրականության ուսումնասիրություն

Ուսումնական ծրագիրը կրթության ամենաափիմնական տարրն է, քանի որ այն գործում է որպես նպատակային կրթության հասնելու ուղեցույց և որոշում է կրթական համակարգի որակն ու ազդեցությունը

(Apsari, 2018:11): Ուսումնական ծրագիրը կարևոր դեր է խաղում կրթության մեջ, քանի որ այն ցույց է տալիս ոչ միայն կրթության նպատակը, այլև կրթության բովանդակությունը և նույնիսկ այն, թե ինչպես պետք է բովանդակությունը ուսուցանվի և մատուցվի դպրոցում (Chonghui Li & Christine Cox Eriksson, 2018, p. 3): Ուսումնական ծրագիրը ոչ միայն ենթադրում է բովանդակության ընտրություն և որոշակի մեթոդների կիրառում, այլև սահմանում է աշակերտի, ուսուցչի, դպրոցի ղեկավարության և ընտանիքի դերը: Դրա փիլիսոփայությունը նաև սահմանում է դասագրքերը, տեխնոլոգիաների և ուսումնական նյութերի օգտագործումը (Mkandawire, 2010:7) և ինչպիսի վերապատրաստումներ են տրամադրվելու ուսուցիչներին: Այն ներառում է ամենօրյա դասարանային գործողություններ՝ ներգրավելով սովորողներին և ուսուցիչներին:

Ուսումնական ծրագրի բարեփոխումը կարելի է դիտարկել որպես գործընթաց, որի նպատակն է փոխել ուսուցման խնդիրները և ուսուցման ձևը: Բարեփոխման նախագիծն անդրադառնում է այն նկատառումներին, թե **ինչ** է պետք սովորել, **ինչպես** է պետք սովորել (փոփոխության տեսություն) և **ինչու** է պետք այն սովորել (բարեփոխման հիմնավորումը): Այն նաև անդրադառնում է այն հարցին, թե ինչպես է գնահատվում այս ուսուցման հաջողությունը և ինչ ռեսուրսներ են պահանջվում նախանշված նպատակներին հասնելու համար (OECD, 2020, p. 10):

Ուսումնական պլանի վերանայումը ներառում է գնահատման շրջանակի, բովանդակության և գործիքների վերախմաստավորում, որպեսզի դրանք համապատասխանեցվեն ուսումնական նպատակների, բովանդակության, նյութերի և մանկավարժական մոտեցումների փոփոխություններին (OECD, 2020, p. 38): Ուսումնական ծրագրերի բարեփոխման միջազգային լավագույն փորձը, որն օգտագործվել է այս նախաձեռնության մեջ, առաջարկում է նախագծման հետևյալ ուղին. (1) վերլուծել դասավանդման ընթացիկ պրակտիկան և ուսուցման նպատակները՝ ընդգծելով մարտահրավերները, փոփոխության կարիք ունեցող և հաջողված հատվածները. (2) ուրվագծել շրջանավարտի կատարելատիպին և հետադարձ քարտեզագրում կատարել (backward mapping). (3) ուսումնասիրել սովորողների ուսուցման նպատակների (առարկաների հիմնական գաղափարներ, խաչաձև հասկացություններ և ուսուցման նպատակներ) և դասընթացի նախագծի միջև կապը և այն, թե ինչպես այդ նպատակները պետք է ազդեն դասավանդման մոտեցումներին (ակտիվ ուսուցում, աշակերտակենտրոն ուսուցում). (4) շեշտադրել ձևավորող և ամփոփիչ գնահատման դերը ինչպես ուսուցիչների վերապատրաստման, այնպես էլ նոր ուսումնական ծրագիրը

սովորողներին մատուցելու գործում. (5) մշակել դասավանդման համապատասխան ուղղորդվածություններ և մոտեցումներ առ այն, թե ինչպես կարող են տեխնոլոգիաները, խմբային աշխատանքը և հասակակիցների հետ համագործակցությունը խթանել ուսումնական գործընթացը. (6) հավաքագրել տվյալներ ընթացիկ ազգային և միջազգային հետազոտություններից և (7) մշակել ու իրականացնել սեմինարներ և գնահատել:

Արդյունավետ ուսումնական ծրագրերը ներառում են հասանելի ժամանակի սահմաններում հատուկ առարկաների համար հասանելի ուսուցման լավագույն եղանակներ՝ հատուկ հաջորդականությամբ, որոնք լավագույնս ներդնում են սովորությունների, վերաբերմունքի, գիտելիքների և հմտությունների որոշակի շարք: Արդյունավետ ուսումնական ծրագրերը ներառում են հիմնական հասկացությունների հաջորդականությունը և առաջընթացը: Անհաջող ուսումնական ծրագրերը իրար հետ կապ չունեցող դետալների շարան են: Հայաստանում ուսումնական նոր ծրագիրը կարևորում է ակտիվ ուսուցումը, այսինքն՝ այնպիսի մանկավարժություն, որը պահանջում է սովորողներից լինել նախաձեռնող, իսկ դասարանից՝ ինտերակտիվ:

Հենակետեր և սկզբունքներ

Ներկայիս բարեփոխումը ներառել է հետևյալ կարևոր փուլերը.

- Ազգային և միջազգային փորձագետներից կազմված աշխատանքային խմբերի ձևավորում,
- Հանրակրթության պետական չափորոշիչի վերանայում, վերամշակում,
- ԲՏՃՄ առարկաների առարկայական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի վերանայում, վերամշակում,
- Ուսուցիչների և դպրոցների տնօրենների վերապատրաստում,
- Վերանայված ուսումնական ծրագրի փորձնական ծրագրի մշակում և ներդրում և
- ԲՏՃՄ փորձնական ծրագրի արդյունքների վերլուծություն և առաջարկությունների ձևակերպում:

Նախագծի շրջանակներում յուրաքանչյուր առարկայական ոլորտի համար ձևավորվեց աշխատանքային խումբ, որը մշակեց առարկայական հիմնական գաղափարներն ու խաչվող հասկացությունները՝ ըստ առարկաների և դասարանների: Սրա շնորհիվ ստեղծվեց ուսուցման հետագիծ, որը կառուցված էր կարևոր հասկացությունների շուրջ, և որի հիման վրա կարող էին մշակվել բոլոր մյուս կարողունակությունները: Մրցակցային ընտրության արդյունքում ձևավորված աշխատանքային խմբերը ներառում էին երկրի ամենափորձառու ուսուցիչներին, բուհերի և ոլորտի առարկայական փորձագետներին: Յուրաքանչյուր

աշխատանքային խմբում կար մինչև տասը անդամ, որոնց խնդիրն էր սահմանել կրթության ընթացքը իրենց համապատասխան առարկայից՝ ձևակերպելով ամենակարևոր գաղափարները: Աշխատանքային խմբերի ձևավորումից և միջազգային փորձագետներին ընտրելուց հետո հարկ էր նախևառաջ անդրադառնալ Հանրակրթության պետական չափորոշիչին: Միասնական շրջանակային սույն փաստաթուղթը սահմանում է «շրջանավարտի կատարելատիպը», պետության ակնկալիքները դպրոցից, սովորողներից և հանրակրթության բոլոր մակարդակների շրջանավարտներից: Չափորոշիչն անդրադառնում է նաև ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին՝ ըստ կրթական մակարդակների (տարրական, հիմնական և ավագ), այն կարողունակություններին և որակական պահանջներին, որոնք պետք է ունենա շրջանավարտը դպրոցն ավարտելիս, ինչպես նաև գնահատման սկզբունքներին ու բովանդակությանը: Պետական չափորոշիչը հստակ սահմանում է, թե ինչ պետք է «իմանան և կարողանան անել» շրջանավարտները, երբ ավարտեն 12-րդ դասարանը: Ուսումնական ծրագրերի ամբողջ բովանդակությունն ու գործողությունները այնուհետև կառուցվում են այս նպատակին հասնելու համար: «Հետադարձ քարտեզագրում» հայտնի գործընթացի միջոցով ուսումնական ծրագիրը վերանայվում է հետադարձ ուղղությամբ՝ «դպրոցն ավարտելուց» մինչև «դպրոց հաճախել սկսելը», որպեսզի ապահովեն ուսումնական գործունեության ռացիոնալ և համահունչ հաջորդականությունը և առաջընթացը, որն ավարտվում է դպրոցն ավարտելով:

21-րդ դարում երկրներն աստիճանաբար անցում են կատարում բովանդակակենտրոն ուսումնական ծրագրից դեպի կարողունակություններին կենտրոնացված ուսումնական ծրագիր: Նմանապես նոր միտումը սովորողին դնում է ուսումնական ծրագրի կենտրոնում և համապատասխանեցնում դասավանդման մեթոդները (OECD, 2020, p. 19): Վերանայված պետական չափորոշում ներդրված ամենակարեւոր փոփոխությունը հայեցակարգային էր, քանի որ նոր չափորոշիչը հիմնված է սովորողի կարողությունների և հմտությունների վրա: Հավասարապես ընդգծվում են սովորողի գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքը, արժեհամակարգը, շեշտվում է ակտիվ ուսումնառությունը:

Գծապատկեր 1. Կատարված փոփոխությունները 12-ամյա հանրակրթության բոլոր դասարաններում



Այս առումով ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է. «Խուսափելով ընթացիկ առարկայական մոտեցումներից, երբ ունենք առանձին առարկաներ, մենք նախատեսում ենք անցնել ինտեգրված մոտեցման, որը թույլ է տալիս տեսնել փոխկապակցված թեմաներ, առանձնացնել խաչվող թեմաներ և նպաստել ընդհանուր արդյունքին յուրաքանչյուր առարկայի միջոցով: Այն նաև կօգնի խուսափել կրկնությունից՝ առավելագույնս բովանդակային դարձնելով դպրոցում անցկացրած ժամանակը: Սույն փոփոխությամբ՝ դպրոցականների ծանրաբեռնվածությունը նվազում է առանց բովանդակության կրճատման և ուսումնառության բարձրագույն վերջնարդյունքների թիրախավորման միջոցով: Նախարարի խոսքով՝ նոր մոտեցումը թույլ է տալիս ավելի ճկուն աշխատանք կատարել:

Հայաստանի հանրակրթության ուսումնական ծրագրի բարեփոխումը ներառում էր յուրաքանչյուր առարկայի բովանդակության և թեմաների, առարկաների միջև ժամանակի բաշխման և դասավանդման և ուսումնառության մեթոդների փոփոխություններ (գծապատկեր 1): Բարեփոխման կենտրոնում էր սովորողների կարողունակությունների ամրապնդման, նախագծային ուսուցման վրա՝ սովորողների հետազոտական հմտությունների, ստեղծագործական ունակությունների և ինքնակարգավորվող ուսուցման բարելավումը, ինչը կհանգեցնի նրանց ներգրավմանը համայնքային նախաձեռնություններում: Այն նաև կարևորում է ձևավորող գնահատումը, ամփոփիչ թվանիշային գնահատականից հրաժարվելը կրտսեր դպրոցում՝ խրախուսող նկարագրությունների կիրառմամբ՝ 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից ներդրված ամփոփիչ գնահատմամբ: Անբավարար գնահատականից հրաժարվելը նշանակում է, որ այլևս

երկտարեցիություն չի լինելու: Այսպիսով, իրականացվեց գնահատման ամբողջ շրջանակի վերանայում և համապատասխանեցում՝ ուսումնական ծրագրի բարեփոխումների շուրջ համախմբվածություն բերելու համար:

Այուս կարևոր փոփոխությունը անհատական բաղադրիչի ներդրումն էր, որը թույլ է տալիս աշակերտի կարիքների վրա հիմնված ուսումնական ծրագրի մշակում և դրա հիման վրա ավագ դպրոցի բարեփոխում: Դա ենթադրում էր ճկուն ուսումնական ծրագրի առկայություն, որը թույլ կտա գործող հոսքային ուսուցումից (ավագ դպրոցում) անցում կատարել անհատականացված կրթության՝ ըստ յուրաքանչյուր աշակերտի նախասիրությունների և մասնագիտական կողմնորոշման: Ավագ դպրոցի բարեփոխմանը կնպաստի նաև մոդուլային կրթությունը, որը հնարավորություն կտա աշակերտին մասնագիտական կողմնորոշում ձեռք բերել հանրակրթական ավագ մակարդակի կարճաժամկետ դասընթացների միջոցով:

Ձեռնարկվեցին մասնագիտական խմբերի խորհրդատվություններ, որոնք կարևոր միջոց էին կրթական ծրագրերի արդյունավետ բարեփոխումների իրականացման համար, քանի որ դրանք նպաստում էին շահագրգիռ կողմերի ներգրավվածությանն ու անհատական և կոլեկտիվ իմաստավորմանը: Խորհրդակցությունները նպաստեցին մասնակցային մոտեցմանը՝ հենց սկզբից շահագրգիռ կողմերին ներգրավելով բարեփոխումների գործընթացում՝ խրախուսելով նրանց մասնակցությունը:


Հանրակրթության պետական չափորոշիչի վերանայումից հետո երկիրն անցավ առարկայական չափորոշիչների վերանայմանը, որոնք սահմանում են յուրաքանչյուր դասարանում և յուրաքանչյուր առարկայի բովանդակությունն ու ուսումնական նպատակները, այն, թե ինչ պետք է իմանան և կարողանան անել աշակերտները: Բոլոր ԲՏՃՄ առարկաների համար մշակվեցին և փորձարկվեցին դասավանդման և ուսումնառության նյութեր, ինչպիսիք են գրքերի հատվածները, սովորողի նյութերը, ուսուցիչների նյութերն ու ուղեցույցները, գնահատման նախագծերը, լաբորատոր աշխատանքների տետրերը, առաջարկվող գրականության ցուցակները, նախագծային ուսուցման ուղեցույցները, թեմատիկ պլանները, դասի պլանները, թեմատիկ գրավոր աշխատանքների օրինակները, տեսանյութերը, PowerPoint սահիկաշարերը, ռեսուրսների քարտեզները և ուսուցիչների վերապատրաստման մոդուլները: Համակարգվածություն և համահունչություն ապահովելու համար դիտարկվել են որակյալ ուսումնական ծրագրերի հետևյալ կարևոր հատկանիշները.

- «ուղղահայաց համապատասխանեցում, համադրում». առարկայի հիմնական թեմաների ներկայացում, այնուհետև այդ թեմաների կրկնողություն՝ ավելացված բարդությամբ, երբ սովորողը առաջադիմում է դասարաններով մինչև ավարտական դասարանում գիտելիքների համապատասխան մակարդակի հասնելը: Մշակվում են ամենակարևոր թեմաները, այնուհետև որոշվում է բարդության աստիճանը՝ ըստ դասարանի, որը տանում է դեպի ցանկալի վերջնակետ:
- «հորիզոնական համապատասխանեցում». մի առարկայից պահանջվող գիտելիքներն ու հմտությունները նախապես փոխկապակցված կերպով ուսուցանվում են մեկ այլ առարկայի կամ առարկաների շրջանակներում:
- «մանկավարժական մոտեցումների հետևողականություն». մանկավարժական մոտեցումների հետևողական կիրառում, որի շնորհիվ սովորողներն արդեն ծանոթ կլինեն ուսուցման գործընթացներին, երբ հանդիպեն նոր և ավելի դժվար բովանդակության:
- «տերմինաբանության և բառապաշարի հետևողականություն». նույնական հասկացություններն ու կառուցվածքները նկարագրվում են՝ օգտագործելով նույն կամ համանման տերմինաբանություն և բառապաշար՝ ուսումնական ծրագրերում իրենց տարբեր դրսևորումների միջոցով:

Վերանայված ուսումնական ծրագրի փորձարկում

ԲՏՃՄ վերամշակված ուսումնական ծրագրերի փորձարկմանը մասնակցել է 610 ուսուցիչ և 5847 աշակերտ երկրի մեկ մարզի բոլոր դպրոցներից, չորս դասարաններով և 9 առարկաներով (Գծապատկերներ 2 և 3):

Գծապատկեր 2. Փորձարկման շրջանակը



Փորձարկման նպատակն էր ստուգել նոր մշակված ուսումնական նյութերի համապատասխանությունը, արդյունավետությունը և բարդության մակարդակը, դասավանդման և գնահատման նոր մոտեցումները, ինչպես նաև բացահայտել ուսումնական ծրագրի հնարավոր ծանրաբեռնվածության հետ կապված խնդիրները: Փորձարկման ընթացքում ապացույցներ և տվյալներ են հավաքվել ու վերլուծվել հասկանալու համար նշված գերծանրաբեռնվածության չափը՝ օգտագործելով փորձարկման վայրից ստացվող արձագանքներն ու մեկնաբանությունները: Ուսումնական ծրագրի արդյունավետ իրականացման համար կարևոր էր բացահայտել և փորձել լուծել ուսուցիչների առջև ծառայած խնդիրները: Ելնելով մշտադիտարկման և մենթորության արդյունքներից, որոնք տեղի են ունեցել ծրագրի ընթացքում յուրաքանչյուր առարկայի փորձարկմանն ընդգրկված ուսուցիչների հետ, միջազգային խորհրդատուներն առաջարկել են բովանդակության բեռնաթափում:

Գծապատկեր 3. Փորձարկման շրջանակը. դասարաններն ու առարկաները

Փորձարկման ընդգրկված դասարաններն ու դպրոցական առարկաները	2	5	7	10
Ես և շրջակա աշխարհ	x			
Բնություն		x		
Քիմիա			x	x
Կենսաբանություն			x	x
Աշխարհագրություն			x	x
Ֆիզիկա			x	x
Բնագիտություն				x
Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն	x	x	x	x
Մաթեմատիկա	x	x	x	x



Գործընթացի միջոցով, որը հայտնի է որպես «հետադարձ քարտեզագրում»՝ տրամաբանական առաջընթաց 12-րդ դասարանից մինչև 1-ին դասարան, փորձագետները կառուցել են ծրագիրը «հետադարձաբար»՝ սկսած ավարտական դասարանից մինչև առաջին դասարանը՝ ապահովելու ուսուցման գործողությունների տրամաբանական և համահունչ հաջորդականությունը, որը կհանգեցնի ավարտին: Քանի որ ավարտական դասարանները սովորաբար ամենամոտն են նրան, ինչն ակնկալվում է, որ աշակերտները պետք է կարողանան ցուցադրել իրենց ավարտական քննությունների ընթացքում՝ փորձագետները բեռնաթափման գործընթացում դիտարկել են այն հատվածները, որոնք պետք է հանվեն կամ դասավանդվեն ավելի ցածր դասարաններում:

Այսպիսով, փորձարկման համար ընտրվել է գործնական հետազոտության մեթոդը (action research), որը թույլ է տալիս մշտադիտարկման արդյունքները կիրառել բարեփոխման նախագծման մեջ այնպես, որ ստացված դիտարկումները տրամադրվեն դպրոցներին և ուսուցիչներին, և սովորած դասերը կանոնավոր կերպով ներառվեն փորձարկման մեջ: Այս «արձագանքելու և համապատասխանեցնելու» գործընթացը նպաստեց ուսուցիչների ներգրավվածության բարձրացմանը՝ բարելավելով փորձարկման գործընթացը: Փորձարկումը ամուր հիմքեր դրեց նոր ուսումնական ծրագրի շրջանակի, ծանրաբեռնվածության, համապատասխանության և արդյունավետության հստակեցման վրա՝ նախքան ծրագրի ամբողջական ներդրումը:

Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) կողմից իրականացվող շարունակական մշտադիտարկումը փորձարկմանն ընդգրկված դպրոցներում ծառայում էր երկակի նպատակի՝ հաշվետվողականություն և զարգացում: Դրա միջոցով գնահատվում էր, թե ինչն է ընթանում նախագծին համահունչ և ինչը՝ ոչ, ժամանակին ձեռնարկելու ուղղիչ, շտկողական գործողություններ: Մշտադիտարկումն ընկալվեց որպես ուսուցման գործիք, որը նպաստեց ընդհանուր նպատակին և ստեղծեց համագործակցության մթնոլորտ:

Ուսուցիչների դերը

Ուսուցիչները կրթական ծրագրերի բարեփոխումների առաջնագծի «մարտիկներն» են, որոնք ամեն օր դասասեսնյակում զբաղված են ուսումնական ծրագրի պլանավորմամբ և լավագույնս տեղյակ են սովորողների կարիքներին: Նրանք կենտրոնական դեր խաղացին սույն վերանայված ուսումնական ծրագրի փորձարկման մեջ, քանի որ նրանք ոչ թե պասիվ կատարողներ են, որոնք դերակատարում ունեն միայն բարեփոխումների վերջին փուլում, այլ ակտիվ դերակատարներ, որոնց կարծիքը հաշվի է առնվել բարեփոխումների ողջ գործընթացում:

Ուսուցիչների վերապատրաստումները

Ուսուցիչների վերապատրաստումը և պաշտոնական մենթորությունը բացարձակապես վճռորոշ նշանակություն ունեցան նոր ուսումնական ծրագրի հաջող իրականացման համար: Ուսուցում և մենթորություն էր անհրաժեշտ ակադեմիական բովանդակության, դասավանդման մեթոդների, գնահատման, լաբորատոր ընթացակարգերի և սարքավորումների, ներառյալ լաբորատոր անվտանգության և էրգոնոմիկայի ասպեկտների շուրջ: Փորձարկման մեջ ներգրավված ուսուցիչներն անցան վեց շաբաթ տևողությամբ լայնածավալ վերապատրաստում: Վերապատրաստման մոդուլները կենտրոնացած էին ուսուցման մեթոդների և մանկավարժական մոտեցումների վրա՝ խթանելու սովորողների՝ հարցումների վրա հիմնված ուսուցումը և գործնական աշխատանքները, որոնք օգնում են զարգացնել խնդիրների լուծման և քննական մտածողության հմտությունները, թիմային աշխատանքը և ինքնակարգավորվող ուսուցումը՝ աջակցելով բոլոր սովորողներին (օրինակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների): Բացի այդ, մոդուլները ներառում էին տեղեկությունների ստացման, վերլուծման և դասակարգման, ինչպես նաև թվային տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունների ամրապնդման, ինչպես նաև անդրադարձ

միջառարկայական և ներառարկայական կապերի համադրման խնդիրներին:

Կարողությունների հզորացման տարրի շրջանակներում ուսուցիչները ծանոթացան նոր ուսումնական ծրագրի հիմքում ընկած սկզբունքներին, ներառյալ՝ առարկայական հիմնական գաղափարներին ու խաչվող հասկացություններ, առարկայական հասկացությունների հաջորդականություն (կրկնությունից խուսափող, բայց թեմաներին նորից անդրադարձող՝ խորանալով), վաղ փուլերում բարդ թեմաների ու հասկացությունների ուսումնասիրությունից խուսափում, նոր մանկավարժական գաղափարներ (ակտիվ ուսումնառություն, աշակերտակենտրոն, հարցումների վրա հիմնված ուսուցում), ուսուցման նորարարական եղանակներ, ինչպես նաև գնահատման նոր համակարգեր և դասագրքերի օգտագործում: Դասընթացի հաջորդ փուլը ներառում էր ուսուցչի մենթորության մոդուլի մատուցում, որն իրականացվել է ողջ ուսումնական տարվա ընթացքում: Այս տարրը ուսուցիչների վերապատրաստման գործընթացի անբաժանելի մասն էր, որն ապահովեց ուսուցիչների միջև փոխգործակցությունը, ուսուցման շարունակականությունը և կարծիքների պարբերական փոխանակումը:

Մենթորությունը ներառում էր դասապրոցեսի դիտարկումներ, թե ինչպես էին ուսուցիչները դասավանդում ԲՏՃՄ առարկաները, և ինչպես էին սովորողները սովորում դրանք՝ առաջարկելով մանկավարժական, գնահատման և առարկայական աջակցություն մենթորների կողմից փորձարկմանը մասնակցող ուսուցիչներին: Այս շուրջտարյա մենթորությունը ուսուցիչներին տրամադրեց այն հմտություններն և գիտելիքները, որոնք անհրաժեշտ են կրթական փոփոխությունն առավելագույնս իրականացնելու համար: Շարունակական մենթորությունը բարձրացրեց փորձարկմանը մասնակցող ուսուցիչների վստահությունը: Ուսուցիչները «բախվեցին» սթրեսի, վախի և անորոշության հետ, սակայն, իրենց տրամադրվող ամենօրյա մանկավարժական և առարկայական մենթորական ուղղորդման շնորհիվ նրանք դրական վերաբերմունք ձևավորեցին նոր ուսումնական ծրագրի նկատմամբ, դարձան ավելի ինքնավստահ, իրավիճակին տիրապետող և պատրաստակամ՝ ներդնելու ժամանակ և էներգիա: Այս սատարումը կանխեց նոր ուսումնական ծրագրի ներդրման հնարավոր ձախողումը:

Փորձարկմանը մասնակցող ուսուցիչների հետ իրականացված ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ բացահայտված եզակի առավելությունը այդ ուսուցիչների միջև ստեղծված կապն ու համագործակցությունն էր: Ուսուցիչները միասին աշխատեցին մարտահրավերների բացահայտման ուղղությամբ և օգտագործեցին

միմյանց հմտությունները, գիտելիքները և փորձը՝ փորձարկելով նոր գաղափարներն ու հասկացությունները, ինչպես նաև սովորեցնելու եղանակները՝ բարելավելով սովորողների ուսումը: Նրանց մեջ ձևավորվեց համատեղ հանձնառության, պատասխանատվության և նպատակամղվածության զգացում՝ ուղղված սովորողների ուսուցման բարելավմանը: Այս ուսուցիչները աջակցում էին միմյանց նորարարական պրակտիկայի և ռիսկի դիմելու գործում, կառուցում ուսուցման համայնքներ: Այս ներկառուցված համագործակցային մոտեցումը խթանեց կոլեկտիվ իմաստավորմանը, նպաստեց նոր ուսումնական ծրագրի ընդհանուր մեկնաբանությանը և ուսումնական ծրագրի համահունչ ձևավորմանը:

Բարեփոխման հիմնական շահառուները


Սույն ծրագրի շահառուներն են Հայաստանի քաղաքացիները, մասնավորապես՝ **սովորողները**, որոնք կստանան որակյալ ԲՏՃՄ կրթություն՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան, **ուսուցիչները**, որոնք կկարողանան կիրառել նոր ուսումնական ծրագրին համապատասխան արդիականացված ուսուցում, երկրի **գիտական համայնքը**՝ ուսումնական ծրագրի բարեփոխմանը մասնակցող մասնագետները և գերատեսչությունները (ԿԳՄՍ նախարարություն, կրթական գործակալություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, դպրոցական խորհուրդներ), աշխատանք փնտրողները, որոնց գործնական հմտությունները կբարձրացնեն նրանց աշխատունակությունը, ինչպես նաև գործատուները, որոնք կարող են աշխատանքի ընդունել պահանջարկին առավել համապատասխան, կարողունակ աշխատուժից: Հատկապես կարևոր է նշել **դպրոցի ղեկավարների** (տնօրինության) դերը, որոնք առանցքային դեր են խաղում ուսուցիչներին ներգրավելու, մղելու և մոտիվացնելու նոր ուսումնական ծրագիրն իրականացնելու գործում և կկարողանան գնահատել նոր ռեսուրսների օգտագործումն ու օգուտները՝ իրենց դպրոցներում կրթության որակն ավելի լավ կառավարելու և վերահսկելու համար: Տնօրենները կարող են ստեղծել փոփոխությունների մշակույթ և նախաձեռնել ու պահպանել բարելավումը դպրոցի մակարդակում (Thompson, Gregg and Niska, 2004, p. 14): Քիչ բանի կարելի է հասնել և պահպանել՝ առանց տնօրենների ներգրավվածության:

Ծրագրի գնահատում

Բարեփոխման գործընթացի վերջին փուլը դրա գնահատումն էր՝ իրականացման գործընթացի և արդյունքների, նախատեսվածի և ձեռք բերվածի, ինչպես նաև ծրագրի հաջողված և թույլ կողմերի, քաղված

դասերի վերլուծությունը: Ծրագրի գնահատումն կատարվում է ուսումնական ծրագրի իրականացման մշտադիտարկմանն աջակցելու և կրթական համակարգի թափանցիկությանը նպաստելու նպատակով: Այն հիմնված է ցուցիչների շրջանակների, գործիքների (գնահատումներ, հարցումներ, ախտորոշման գնահատումներ և այլն) և գործընթացների վրա (ակնարկներ, ֆոկուս խմբերի քննարկումներ և երկխոսություններ գերատեսչական մարմինների, տեղական իշխանությունների և դպրոցների միջև և այլն), որոնք պետք է արտացոլեն ուսումնական ծրագրի նոր նպատակներն ու պահանջները և հավաքագրեն ուսումնական ծրագրի իրականացմանը վերաբերող տեղեկություն: Օրինակ՝ ուսուցիչների վերապատրաստման (ընդ որում՝ դրա ընթացքում նրանց գնահատման արդյունքների, վերապատրաստման դասընթացների քանակի) մասին տվյալները, ուսուցիչների և դպրոցների հարցումները կարող են վկայել ուսուցչի գիտելիքների, վերաբերմունքի և ուսումնական ծրագրի փոփոխությունների վերաբերյալ համոզմունքների փոփոխության մասին (OECD, 2020, p. 40):

Գծապատկեր 4. Գնահատման նպատակը. Հասկանալ ծրագրի իրականացումը



- Գնահատման նպատակներն են (Գծապատկերներ 4 և 5).
- **Վերլուծել իրականացման գործընթացը** և այն, թե որքանով է վերանայված ԲՏՃՄ ուսումնական ծրագրի բարեփոխումը իրականացվել և հարմարեցվել է պլանավորվածի համաձայն,

- **Հիմք ստեղծել բարեփոխման մշտադիտարկման և գնահատման համար** և հավաքագրել տեղեկություններ՝ հետևելու սովորողների ուսումնառության վերջնարդյունքներին,
- **Հայաստանի համար.** Տեղեկացնել և առաջարկություններ տրամադրել՝ վերանայված ԲՏՃՄ ուսումնական ծրագիրը մյուս մարզերի դպրոցների համապատասխան դասարաններում ներդնելու համար,
- **Համաշխարհային մակարդակով՝** որպես հանրային բարիք. ծրագրի զեկույցը ներկայացնում է կրթական ծրագրերի բարեփոխման գործընթացի ճանապարհային քարտեզ:

Գծապատկեր 5. Գնահատման նպատակը. Հիմք ստեղծել բարեփոխման մշտադիտարկման, գնահատման և սովորողների գիտելիքների գնահատման գործիքների վերաբերյալ

- Համադրել դասավանդման և ուսումնառության նույնըր սովորողների գնահատման մեթոդների հետ՝ հիմնվելով նոր ուսումնական ծրագրերի և թեստային հատկորոշիչների վրա:
 - Նախագծել ամփոփիչ գնահատումներ, որոնք համահունչ են նոր ուսումնական ծրագրին, ինչպես նաև համապատասխանում են հին ուսումնական ծրագրին որպեսզի հնարավոր լինի ապահովել համեմատելիություն և ուսումնառության վերահսկում:
- Մշակել լրագրիչ հարցաթղթերն ու դպրոցի, ուսուցիչների և աշակերտների համար:
 - Տեղեկություններ հավաքագրել դասադրոցի վերաբերյալ
 - Հասկանալ ուսուցչի նախասիրությունները և
 - Հավաքագրել տվյալներ դպրոցների տնօրենների և դպրոցական ենթակառուցվածքների վերաբերյալ
- Կիտառել այս գործիքները ընտրված մարզերում (փորձարկմանը մասնակցող և չմասնակցող) և դասարաններում (փորձարկմանը մասնակցող և չմասնակցող)՝ գնահատելու վերանայված ԲՏՃՄ ուսումնական ծրագրի պատճառահետևանքային կարծաժամկետ ազդեցությունը փորձարկման ընդգրկված սովորողների հմտությունների ձեռքբերման վրա:
- Շարունակել մշտադիտարկել այս դպրոցների սովորողների ուսումնառությունը՝ օգտագործելով մշակված գործիքները:

Ծրագրի գնահատումը ներառել է սովորողների ընտրանքի (2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների) ուսման գնահատում: Ստացված արդյունքները՝ աշակերտների և դպրոցների տնօրենների հարցումների, ինչպես նաև ուսուցիչների հարցումների և ստուգատեսների հետ համակցված, էական տեղեկություն են տրամադրում ՀՀ-ում կրթության քաղաքականության մշակման և հանրակրթության բովանդակության շարունակական բարեփոխման համար:

Հաշվի առնելով ելակետային տվյալների բացակայությունը (COVID-19-ի սահմանափակումների պատճառով), որոնք թույլ կտային գնահատել սովորողների հմտությունները վերանայված ԲՏՃՄ ուսումնական ծրագրի իրականացումից առաջ և հետո, կիրառվել է կիսափորձարարական

դիզայն (quasi-experimental design): Թիրախավորվել են փորձարկմանը մասնակցած և դրանց հաջորդող դասարանները (վերջիններս չեն մասնակցել փորձարկմանը) (Գծապատկեր 6), և Տավուշի մարզի տվյալները համեմատվել են Շիրակի և Լոռու մարզերի հետ, որոնք, ըստ ազգային ստուգատեսների տվյալների, դպրոցական միջավայրում ունեն նմանատիպ առանձնահատկություններ և միտումներ՝ ուսումնառության վերջնարդյունքների առումով: Փորձարկման գնահատման մեթոդաբանությունը համաձայնեցվել է ԿԳՄՆ նախարարության հետ 2021 թվականի դեկտեմբերին, որից հետո կատարվել են գնահատման աշխատանքներ: 2022 թվականի մայիսին մրցույթով հաղթած ընկերության կողմից երեք մարզերի 210 դպրոցներում ընտրված առարկաների ուսուցման գնահատումներ են կատարվել փորձարկմանը մասնակցած և չմասնակցած դասարաններում: Այս գնահատումները զուգակցվել են սովորողների և տնօրենների հարցումների, ինչպես նաև ուսուցիչների շրջանում հարցումների և ստուգատեսների հետ՝ ուղղորդելու ՀՀ-ում կրթության քաղաքականության մշակման և ընթացիկ ուսումնական բարեփոխումների համազգային մակարդակով ներդրման աշխատանքները:

Գծապատկեր 6. Սովորողների գնահատում

Դասարան	2	3	5	6	7	8	10
Ես և շրջակա աշխարհ	x	x					
Բնություն			x	x			
Քիմիա					x		x
Կենսաբանություն					x		x
Աշխարհագրություն					x	x	x
Ֆիզիկա					x		x
Բնագիտություն							x
Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն	x		x		x		x
Մաթեմատիկա	x	x	x	x	x	x	x

Գնահատման արդյունքները տրամադրեցին տեղեկույթ վերանայված ԲՏՃՄ ուսումնական ծրագրի՝ սովորողների հմտությունների և գիտելիքների ձեռքբերման ազդեցության վերաբերյալ: Ընդհանուր

առմամբ, ուսումնական ծրագրի բարեփոխումը դրական և զգալի ազդեցություն ունեցավ ուսուցման վրա: Մասնավորապես, նոր չափորոշչով սովորողների շրջանում երկու տարվա ընթացքում դինամիկայի 6 ամսվա աճ է գրանցվել: Ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի է թե՛ մաթեմատիկայի, թե՛ բնագիտական առարկաների գնահատումների համար: Բացի այդ, ցածր առաջադիմություն ունեցող սովորողները առնվազն հավասարապես, կամ ավելի, քան բարձր առաջադիմություն ունեցող սովորողները, շահեցին այս բարեփոխումից: Մինչ բարեփոխումը նկատվում էր, որ ուսուցիչները հիմնականում կենտրոնանում էին բարձր առաջադիմություն ունեցող սովորողների վրա: Միջին հաշվով, այն սովորողները, որոնք սկզբում գտնվում էին փորձարկվող (treatment) կրտսեր խմբի ստորին մասում, ավելի շատ բարելավեցին իրենց հմտությունները, քան նրանք, ովքեր համեմատվող (comparison) խմբում էին:

Այլ երկրների կրթության բարեփոխումների մոդելների լավագույն փորձը

Ուսումնական ծրագրերի բարեփոխման մեջ չկա միակողմանի մոտեցում: Ուսումնական ծրագրերի բարեփոխումը ազգային առաջնահերթության խնդիր է, և յուրաքանչյուր երկիր պետք է որոշի, թե որն է լավագույնն իր համար՝ ելնելով իր համատեքստի առանձնահատկություններից և ռազմավարական առաջնահերթություններից: Յուրաքանչյուր երկիր ունի իր ուրույն պատմությունը, արժեքները, մշակույթը և ինստիտուցիոնալ կառուցվածքը, որոնք ձևավորում են կրթական համակարգը և որոշում, թե ուսումնական ծրագրերի բարեփոխումներն ինչպես առավել արդյունավետ կլինեն իրենց յուրահատուկ համատեքստում: Հետևաբար, պետությունը պետք է սահմանի այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք ամենաարժեքավորն են և իր ապագա քաղաքացիներին պատրաստելու համար ամենաանհրաժեշտը: Միևնույն ժամանակ, կարևոր է ուսումնասիրել միջազգային զարգացումները, ինչպիսիք են սովորողների միջազգային ստուգատեսների արդյունքները և որոշ ընդհանուր սկզբունքներ, որոնք կիրառելի են՝ անկախ առանձնահատկությունների տարբերությունից:

Այսպիսով, Հայաստանում որպես գիտության նոր ուսումնական ծրագրերի հիմք (առարկայական հիմնական գաղափարներ, գիտության և ճարտարագիտական պրակտիկա, խաչվող հասկացություններ և պրոգրեսիայի սկզբունքը՝ 1-ից 12-րդ դասարանները), բարեփոխման շրջանակներում որդեգրվեցին Հաջորդ սերնդի գիտության ստանդարտները (Next Generation Science Standards (NGSS), որոնք

մշակվել են ԱՄՆ Գիտությունների ակադեմիայի կողմից: Ուսումնասիրվել են Պորտուգալիայի, Բելգիայի և Նիդերլանդների ժամանակակից, բարձրորակ դասագրքերի օրինակները՝ ցույց տալու, թե մեր օրերում տարբեր դասագրքերն ինչքանով են տարբերվում Հայաստանում դեռևս գործող դասագրքերից: Ծրագրի միջազգային փորձագետները նաև օգտագործել են Ֆինլանդիայի, Նիդերլանդների և այլ երկրների օրինակները՝ ընդգծելու ուսուցիչներին ճկունություն և ինքնավարություն շնորհելը՝ որպես կարևոր քայլ ժամանակակից ուսումնական ծրագրերում և դպրոցական պրակտիկայում: Սա ներառում է ուսումնական ծրագրին և դասագրքերին անվերապահորեն հետևելուց անցում դեպի այն կողմնորոշումը, թե ինչ պետք է իմանան սովորողները և կարողանան անել վերջում (կենտրոնանալով հասկացությունների և ընդհանուր հմտությունների վրա): Խորհրդատվություն ստանալու համար, թե ինչ սարքավորումներ և ինչ փորձեր է կարևոր կատարել դպրոցական լաբորատորիաներում, ծրագրի թիմը նմանապես հիմնվել է ԵՄ մի քանի երկրների լավագույն փորձի վրա: Ուսուցիչների կանոնավոր պատրաստումը և վերապատրաստումը ևս մեկ հայեցակարգ է, որը լայնորեն կիրառվում է ԵՄ շատ երկրներում և որդեգրվել է սույն ծրագրի կողմից:

Ուսուցիչներից ստացված տեղեկությունը

Փորձարկման յուրաքանչյուր ուսումնական կիսամյակից հետո փորձարկմանը մասնակցած ուսուցիչների հետ անցկացվող ֆոկուս խմբային քննարկումներն ու հարցազրույցները նպատակ ունեին պարզելու արձանագրված հաջողություններն ու մարտահրավերները: Այս տվյալների հիման վրա էլ միջազգային փորձագետները մշակեցին առաջարկություններ՝ բարեփոխման հետագա ընթացքի շուրջ: Քննարկումներն ապացուցեցին, որ նոր ուսումնական ծրագիրը **գերծանրաբեռնված** էր գրեթե բոլոր առարկաներից, և ուսումնական ծրագրի պահանջները (երկարություն, սահմանազատում, բովանդակության հստակության) չափազանց բարդ էին: Որոշ առարկաների դասավանդմանը տրամադրված ժամանակը (դասաժամերը) անբավարար էր: Ուսուցիչները դասավանդում էին նոր ուսումնական ծրագրով՝ դասապրոցեսում օգտագործելով ակտիվ ուսուցման մոտեցումը: Ուսուցիչները նշեցին, որ աշակերտներին հատկապես դուր էր գալիս ուսուցման այն բովանդակությունը, որը համապատասխանում և կապված էր իրական կյանքի իրավիճակների հետ, և նրանք կարևորում էին գործնական աշխատանքների, փորձարկումների, խմբային աշխատանքների և նախագծերի վրա հիմնված առաջադրանքների մեջ ներգրավվելու հնարավորությունները:

Ուսուցիչները զեկուցել են, որ աշակերտների մեծամասնությունը հասել է նոր ուսուցման իրենց կարողությունների առավելագույն չափով՝ որոշ բացառություններով: Ուսուցիչների մեծ մասը մեծապես ապավինում էր ձևավորող, բնութագրող գնահատմանը, թեև շատ ուսուցիչների համար զգալի ժամանակ էր պահանջվում այս նոր մոտեցմանը հարմարվել: Ուսուցիչները նաև նշել էին, որ փոխգնահատումը և ինքնագնահատումը առավելապես հետաքրքրում են սովորողներին:

Ֆոկուս խմբային քննարկումների հաջորդ փուլը ցույց տվեց, որ ուսուցիչների վերապատրաստումը և պաշտոնական մենթորությունը Հայաստանի բոլոր մարզերում բոլոր ուսուցիչների համար բացարձակապես կենսական նշանակություն ունեն նոր ուսումնական ծրագրի հաջող իրականացման համար ողջ երկրում: Ուսուցիչներին ամբողջ տարվա ընթացքում աջակցելու համար նախատեսված մենթորական սխեման արդյունավետ էր, և ուսուցիչները հայտնեցին, որ այն դրական ազդեցություն ունեցավ իրենց փորձի և ինքնավստահության բարձրացման վրա: Ուսուցիչների միջև համագործակցությունը չափազանց մեծ էր և շատ դրական:

Ինչ վերաբերում է մարտահրավերներին, դասավանդման և ուսումնառության նյութերը, ներառյալ համակարգիչները և լաբորատոր սարքավորումները, մատչելի չէին՝ դրանց բաշխման հետաձգման պատճառով, և շատ դեպքերում ինտերնետ կապը խնդրահարույց էր ուսումնառության առցանց նյութերի համար: Այս խնդիրները մեծապես խանգարում էին դասավանդմանն ու ուսումնառությանը: Ուսումնական ծրագրի իրականացման մյուս խնդիրները, որոնց բախվել են ուսուցիչները փորձարկման ընթացքում, հետևյալն են.

- Դասավանդման ավանդական մեթոդներին ապավինելը,
- Աշխատանքի ծանրաբեռնվածության ավելացումը,
- Նոր ներդրված մոտեցումներին, ինչպիսիք են ձևավորող գնահատումը և նախագծային ուսուցումը, չտիրապետելը,
- ԲՏՃՄ աբորատորիաներից օգտվելու անկարողությունը:

Ակադեմիական բովանդակության, դասավանդման մեթոդների, գնահատման և լաբորատոր ընթացակարգերի ու սարքավորումների, ներառյալ լաբորատոր անվտանգության և էրգոնոմիկայի ասպեկտների ուսուցումն և մենթորությունը անհրաժեշտություն էին: Ուսումնական ծրագրի բեռնաթափման հրատապ անհրաժեշտություն կար: Տավուշի դպրոցների ուսուցիչները մանրամասն արձագանքում էին մի առարկայի գիտելիքների անհամապատասխանության հարցերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են որոշակի դասարանում մեկ այլ առարկայի յուրացման համար:

Նույնը պետք է արվեր դասարաններում և դրանց միջև թեմաների հաջորդականության պահպանման համար, քանի որ կային դեպքեր, երբ թեմաները տեղափոխվել և ուսուցանվում էին ավելի ցածր դասարաններում: Թեև ուսուցման համար միայն մեկ դասագրքի վրա հենվելու փոխարեն՝ ուսուցիչների կողմից տեղեկատվական այլ աղբյուրներ ձեռք բերելը կարևոր հմտություն է, պաշտոնական դասագրքերի բացակայությունը խանգարում էր ուսուցմանը: Բավարար քանակությամբ համակարգիչների առկայության և ինտերնետային կապի հասանելիության բացակայությունը խոչընդոտում էր նոր ուսումնական ծրագրի ներդրմանը, հատկապես գյուղական վայրերում: Անհրաժեշտ էր նաև ուշադրություն դարձել լաբորատոր սարքավորումների և նյութերի օգտագործման, պահպանման, որակի վերահսկման, պահեստավորման և անվտանգության խնդիրներին, որից հետո սրանք պիտի գրված լինեն դասավանդման լեզվով, տվյալ դեպքում՝ հայերեն:

Եզրակացություն

Ուսումնական ծրագիրը կրթության ամենահիմնական տարրն է, քանի որ այն նպատակային կրթության ուղեցույց է և որոշում է կրթական համակարգի որակն ու ազդեցությունը:

Ուսումնական ծրագրերի բարեփոխումը ազգային առաջնահերթության խնդիր է, և յուրաքանչյուր երկիր պետք է որոշի, թե որն է լավագույնն իր համար՝ ելնելով իր առանձնահատկություններից, ռազմավարական առաջնահերթություններից, ինչպես նաև միջազգային լավագույն փորձից:

Հայաստանը ներկայումս իրականացնում է ուսումնական ծրագրի հավակնոտ բարեփոխում՝ սովորողներին հնարավորություններ ընձեռնելով օգտագործելու իրենց ողջ ներուժը և ապահովելու երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացումը: Որպես այս բարեփոխումների մի մաս՝ Հայաստանը ձգտում է անցնել կարողունակության վրա հիմնված կրթական համակարգի, որը բարդ և մարտահրավերներով լի ճանապարհ է, քանի որ բոլոր ռեսուրսները, ուսումնական ծրագրերը և կրթական գործընթացները պատմականորեն եղել են գիտելիքահենք և ուսուցչակենտրոն:

Բարեբախտաբար, փորձարկման փուլի բոլոր բաղադրիչների վերաբերյալ ստացված արձագանքները՝ սկսած գերձանրաբեռնվածության խնդիրներից մինչև լաբորատոր սարքավորումներից օգտվելու անվտանգության նորմեր, հաշվի են առնվում ապագա ծրագրերում՝ իրականացումը բարելավելու համար: Շարունակական հետադարձ կապ հայցելն և կարիքներին ու

մտահոգություններին անդրադառնալը կօգնի, որ նոր ուսումնական ծրագրի իրականացումը չընկալվի որպես լրացուցիչ բեռ (The World Bank, 2024:64): Բարձր որակի տվյալների և շահագրգիռ կողմերի ներգրավվածության վրա հիմնված շարունակական բարելավման նման մոտեցման հանձնառությամբ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը երաշխավորում է, որ ուսումնական ծրագրի բարեփոխումը կհասնի իր ողջ ներուժին և երկրի սովորողներին կզինի այն գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարում բարգավաճելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Apsari, Y. (2018). Teachers' Problems and Solutions in Implementing Curriculum 2013. *Acuity: Journal of English Language Pedagogy, Literature and Culture*, vol. 3, no. 1, 2018, pp. 11-23.
2. Chonghui Li & Christine Cox Eriksson (2018). Curriculum Reform and Second Language Acquisition: A literature review on curriculum reform and English as second language teaching and learning. <http://du.diva-portal.org/smash/get/diva2:1190526/FULLTEXT01.pdf> (Accessed 16.08.2023)
3. Mkandawire, B. (2010). Challenges of Curriculum Implementation in Learning Institutions. Sitwe.
4. OECD /Organisation for Economic Co-operation and Development/. (2020). Curriculum Reform: a Literature Review to Support Effective Implementation, OECD Working Paper No. 239, OECD Publishing. [https://one.oecd.org/document/EDU/WKP\(2020\)27/En/pdf](https://one.oecd.org/document/EDU/WKP(2020)27/En/pdf) (Accessed 11.01.2023)
5. Thompson, S., L. Gregg and J. Niska (2004). Professional Learning Communities, Leadership, and Student Learning, *RMLE Online*, Vol. 28/1, pp. 1-15. <http://dx.doi.org/10.1080/19404476.2004.11658173> (Accessed 12.01.2023)
6. The World Bank (2024). Curriculum and Learning: Towards a Competency-based Science, Technology, Engineering, and Mathematics (STEM) Curriculum Reform in Armenia <https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/90dc691a-c4d0-49fa-b767-7791eeaffa3f/content> (Accessed 12.02.2024)

АНУШ ШАХВЕРДЯН - НЕДАВНЯЯ РЕФОРМА УЧЕБНОЙ ПРОГРАММЫ STEM В АРМЕНИИ: ПРОГРЕСС И ПРОБЛЕМЫ

Ключевые слова: Наука, технологии, инженерия и математика («STEM»), компетентностное образование, предметные стандарты, результаты обучения, формирующее оценивание, пилотирование, наставничество, мониторинг

В Армении в течение многих лет учебные программы были перегружены разрозненными фактическими знаниями, которые не обновлялись и не интегрировались с явными целями обучения. Традиционное преподавание на основе лекций и теоретическое содержание были весьма распространены, а в школах не было научных лабораторий для преподавания STEM. Как следствие, показатели результатов обучения были низкими. В статье представлены шаги, предпринятые в рамках подхода “от концепции к реальности” и нацеленные на проведение реформы учебной программы, направленной на переход к системе образования, основанной на компетенциях, что является сложным и трудным путем, поскольку все ресурсы, учебные программы и процессы исторически основаны на знаниях и ориентированы на учителя. Анализируемые данные подкреплены личным участием автора в процессе реализации реформ, составления отчетов и налаживания коммуникации – все это призвано иллюстрировать процесс реформы учебной программы в развивающейся стране. Автор приходит к выводу о вероятной трансформации общеобразовательной программы STEM в случае продолжения сбора отзывов, решения имеющихся проблем и удовлетворения потребностей учителей и учащихся.

ANUSH SHAHVERDYAN - ARMENIA'S RECENT STEM CURRICULUM REFORM: PROGRESS AND ISSUES

Keywords: Science, Technology, Engineering and Mathematics (“STEM”), Competency-Based Education, Subject Standards, Learning Outcomes, Formative Assessment, Pilot, Mentoring, Monitoring

In Armenia, curricula have long been overloaded with disconnected factual knowledge, often outdated and lacking integration with explicit learning goals. Traditional lecture-based teaching methods and theoretical content have dominated, while schools have frequently lacked the necessary

science laboratories to effectively teach STEM subjects. Consequently, learning outcomes, particularly in science, have remained low.

This paper presents the steps undertaken from concept to implementation of a curriculum reform aimed at transitioning to a competency-based education system. This transformation is a complex and challenging endeavor, as the existing resources, curricula, and processes have historically been rooted in knowledge-based and teacher-centered approaches.

The analysis draws on the author's firsthand experience in the reform process, supported by documented reports and communications that comprise the components and steps in curriculum reform in a developing country. The findings suggest that the transformation of the STEM general education curriculum is achievable, provided that continuous feedback is solicited and the needs and concerns of both teachers and students are systematically addressed.

Ներկայացվել է՝ 15.11.2024 թ.
Գրախոսվել է՝ 27.11.2024 թ.

**ՖԻԹՆԵՍԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒՍԱՆՈՂ-ԱՂՋԻԿՆԵՐԻ ՎՐԱ**

ԷՌՆԵՍ ԱՎԱՆԵՍՈՎ

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամում (ԲՊՀ) ֆիթնեսի ուղղվածության ֆիզիկական կուլտուրայի դասերի ներգործության հիմնական առանձնահատկությունները ուսանող-աղջիկների շարժողական պատրաստության, առողջական վիճակի և բարոյականային հատկանիշների վրա: Աշխատանքում վերլուծվում են հարցումների միջոցով ԲՊՀ և ՀՀ մի քանի պետական այլ բուհերում աշխատող ֆիզիկական կուլտուրայի դասախոսների, ինչպես նաև ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, որոնց հիման վրա հստակեցվել են ուսանող-աղջիկների ֆիզիկական դաստիարակության նախընտրելի, արդյունավետ ուղղությունները: Մանրամասն վերլուծվում և ձևավորող մանկավարժական գիտափորձով հիմնավորվում է ֆիթնեսի հիման վրա կազմակերպվող ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետությունն ուսանող-աղջիկների շարժողական պատրաստության, առողջական վիճակի և բարոյականային հատկանիշների վրա:

Հիմնաբառեր՝ բուհ, ուսանող-աղջիկներ, ֆիզիկական դաստիարակություն, ֆիթնեսի մարզումներ, ձևավորող մանկավարժական գիտափորձ:

Հեղազոտության արդիականությունը

Կրթական շարունակական վերափոխումների համատեքստում ոլորտի շատ մասնագետների հավաստմամբ ներկայումս ուսանողների ֆիզիկական դաստիարակության համակարգն ունի արդիականացման կարիք: Այս համատեքստում կարևոր է, որպեսզի իմաստավորվեն դրա բաղադրամասերը, բովանդակությունը, արժեքային ուղղությունները, խնդիրները, ձևերը, մեթոդներն ու մանկավարժական այն տեխնոլոգիաները, որոնք ի զորու կլինեն նպաստելու ֆիզիկական դաստիարակության առջև դրված հիմնական խնդիրների լուծմանը (5):

Այդ ուղղություններից մեկը ֆիթնեսի հիման վրա ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպումն է:

Ֆիթնեսի ժամանակակից ուղղությունների հնարավորությունները նախընտրելի է կիրառել ուսանողների առողջական վիճակի բարելավման և պահպանման հետ կապված խնդիրների լուծման նպատակով (3):

Հեղազոտության նպատակը

Բացահայտել և գիտափորձով հիմնավորել բուհի ուսանող-աղջիկների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման առավել արդյունավետ մեթոդիկան:

Հեղազոտության հիմնական խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել, վերլուծել ու համադրել բուհի ուսանող-աղջիկների ֆիզիկական դաստիարակության կամակերպմանը վերաբերող տեսական հայեցակետերը:
2. Պարզաբանել բուհի ուսանող-աղջիկների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման առավել արդյունավետ մոտեցումները:
3. Գիտափորձով հիմնավորել բուհի ուսանող-աղջիկների ֆիզիկական դաստիարակության նորարարական մեթոդիկայի արդյունավետությունը:

Հեղազոտության հիմնական մեթոդներն են՝

1. Գրական աղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն և համադրում:
2. Անկետային հարցումներ:
3. Ձևավորող մանկավարժական գիտափորձ:
4. Մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ:

Հեղազոտության կազմակերպումը

Բուհի ուսանողների ֆիզիկական դաստիարակության հիմնախնդրի առանձնահատկությունները բացահայտելու նպատակով մեր կողմից նախապես մշակված հարցաթերթիկներով 2021-2022 ուստարում հարցում է կազմակերպվել բուհի ֆիզիկական դաստիարակության դասախոսների և ուսանողների շրջանում: Հարցաթերթիկները երկու դեպքում էլ բաղկացած էին երկու խումբ հարցերից: Հարցերի առաջին խումբը վերաբերում էր ֆիզիկական կուլտուրայի դասերի առկա վիճակի ուսումնասիրությանը, մյուսը՝ այդ դասերի կատարելագործման ուղիների որոնմանը:

Հարցմանն ընդանուր առմամբ մասնակցել են «Վ. Բյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ազգային ազրարային

համալսարանի, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի 44 դասախոսներ: Հարցման մասնակիցների 40,9%-ը իգական, իսկ 59,1%-ը արական սեռի ֆիզիկական կուլտուրայի դասախոսներ էին, որոնց ընդանուր ստաժը կազմում էր մի քանի տարուց մինչև 45 տարի:

2022 թվականի փետրվարին ընտրվել են մեկական ստուգողական և փորձարարական խմբեր: Ստուգողական խմբում (ՍԽ) ընդգրկվել էին 1-ին կուրսի 16, իսկ փորձարարական խմբում (ՓԽ) 14 ուսանող-աղջիկներ: Ստուգողական խումբը 2022թ-ի փետրվարից մասնակցել է շաբաթական մեկ անգամ կազմակերպվող ֆիզիկական կուլտուրայի ավանդական դասերին, իսկ փորձարարական խմբի ուսանողները՝ շաբաթական երեք անգամ կազմակերպվող ֆիթնեսի ուղղվածությամբ ֆիզիկական կուլտուրայի արտասուսմանական մարզումներին, որոնք իրականացվել են մեր կողմից մշակված ծրագրով: Հաշվի առնելով հետազոտվողների անհատական մի շարք առանձնահատկություններ՝ տարիքը, սեռը, հետազոտության ընթացքում առողջական վիճակը և անձնական դրդապատճառները, այդ ընթացքում կազմակերպվել են քաշի նվազեցմանն ուղղված կարդիո-ուժային տեսակի մարզումներ:

Մինչ գիտափորձը սկսելը ուսումնասիրվել են ՍԽ և ՓԽ ուսանողների ելակետային ցուցանիշները՝ արագաուժային, արագային, դիմացկունության և որովայնի մկանների ուժի շարժողական ընդունակությունների մակարդակը: Այդ նպատակով նախապես ընտրվել էին նշված շարժողական ընդունակությունների ստուգողական ֆիզիկական վարժություններ՝ տեղից հեռացատկ, 30 մ վազք, 500 մ վազք, մեջքին պառկած դիրքից իրանի բարձրացում և իջեցում:

Կարևոր էր նաև պարզել այդ մարզումների ներգործությունը հետազոտվողների սրտի կծկումների հաճախականության վրա: Այդ նպատակով ուսումնասիրվել է ուսանողների սրտի կծկումների հաճախականությունը հինգ փուլով՝ մինչ մարզումը, նախավարժանքի հետո, հիմնական մասից հետո, եզրափակիչ մասից հետո և հանդերձափոխվելուց հետո:

Ֆիթնեսի ուղղվածության ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ներգործությունն ուսանող-աղջիկների բարոյականային հատկանիշների վրա պարզելու նպատակով մեր կողմից նախապես մշակվել էր ուսանողների ինքնագնահատման հարցաթերթիկ, որի համաձայն ՓԽ-ի ուսանողներն իրենք իրենց պետք է գնահատեին 0-5 միավորանոց սանդղակով:

Հեղափոխության արդյունքների վերլուծություն

Հարցված տարբեր բուհերի դասախոսների գերակշռող մեծամասնության կարծիքով՝ 90,9 %, ֆիզիկական կուլտուրայի դասերին առավել մեծ հաճույքով հաճախում են 1-ին կուրսի ուսանողները: Առանձնակի հետաքրքրություն է առաջացնում այն հանգամանքը, որ ուսանողների հետաքրքրությունն ուսման ողջ ընթացքում աստիճանաբար նվազում է: Այս հանգամանքը կարելի է բացատրել 1-ին կուրսեցիներին բնորոշ հետաքրքրության առկայությամբ, իսկ հետագայում այդ հետաքրքրության նվազմամբ՝ հատկապես պայմանավորված մարզումների համար ՀՀ բուհերի մեծ մասին բնորոշ նյութատեխնիկական հնարավորությունների ոչ բավարար ռեսուրսներով: Ի դեպ այս տրամաբանական կապը հաստատվել է նաև մասնագետների շրջանում անցկացված մեր հարցման արդյունքում:

Սա այն պարագայում, երբ մի կողմից՝ առկա են ազգային անվտանգությունը խարխլող մի շարք մարտահրավերներ, իսկ մյուս կողմից՝ ներկայումս գործում են ՀՀ երկու օրենքներ (1, 2), որոնցում ամրագրված է, որ ուսումնական բոլոր հաստատություններում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդումը պետք է իրականացվի ուսումնառության ամբողջ ընթացքում:

Պարզվում է նաև, որ ֆիզիկական կուլտուրայի մասնագետներից քչերին են բավարարում ուսանողների հանձնած նորմատիվային ֆիզիկական վարժությունների տվյալները: Մեր կարծիքով՝ դրանք ցանկալի է վերանայել պրոֆեսիոնալ կիրառական ֆիզիկական պատրաստության (ՊԿՖՊ) համատեքստում, ինչը պետք է հաշվի առնվի նաև ֆիզիկական կուլտուրայի բուհական ծրագրի բովանդակային հատվածում:

Ուսանողների համար ֆիզիկական կուլտուրայի դասերը հետաքրքիր դարձնելու հիմնական ձևը նրանց նախընտրած մարզման ձևերի հիման վրա դասի անցկացումն է: Այս թեմայով հարցվածների մեջ կան նաև դասերի քանակի ավելացման կողմնակիցներ


Ուսանողների շրջանում կազմակերպված հարցմանը մասնակցել է «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի 264 ուսանող՝ 91%-ը առաջին, 40,3%-ը՝ երկրորդ, 19,8%-ը երրորդ, իսկ 5,3%-ը չորրորդ կուրսում սովորողներ:

Հարցումների արդյունքում պարզվել է, որ ուսանողների ֆիզիկական պատրաստության ներկայիս վիճակը չի բավարարում մասնագետների

մեծ մասին, ինչը իսկապես մտահոգվելու տեղիք է տալիս: Ինչ վերաբերում է դրանց կատարելագործմանը, ապա հարցվածների մեծ մասը վստահ է, որ ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացը պետք է կազմակերպվի նրանց հետաքրքրող մարզման ձևերով: Հատկապես ուսանող-աղջիկների դեպքում կարևորվում է նրանց ֆիզիկական դաստիարակության գործընթացում ֆիթնես տեխնոլոգիաների ակտիվ կիրառումը: Ոլորտի մասնագետները համոզված են, որ այդ դեպքում կբարձրանա հետաքրքրությունը ֆիզիկական կուլտուրայի դասերի նկատմամբ:

Ինչ վերաբերում է ուսանողների կարծիքի ուսումնասիրմանը, ապա բուհի տարբեր կուրսերի ուսանողների մեծ մասին բավարարում են ֆիզիկական կուլտուրայի ներկայիս դասերը: Ուշագրավ է այն փաստը, որ դրա հետ մեկտեղ հարցվածների մեծամասնությունը նշել էր նաև ընտրած մարզման ձևերի հիման վրա դասերի կազմակերպման անհրաժեշտության մասին նշելով, որ դրանք կհանդիսանան դասերի արդյունավետության բարձրացման լավագույն միջոց:

Ստորև 1-ին գծապատկերից պարզ երևում է, որ մասնագետների 62,8% -ի կարծիքով ընտրած մարզման ձևի հիման վրա կազմակերպող ֆիզիկական կուլտուրայի դասերն առավել հետաքրքիր կդարձնեն ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացը, ինչի արդյունքում նաև կբարելավվեն ուսանողների հաճախումները՝ 60,5%: Այս ամենն անշուշտ կնպաստի բուհում սովորողների շարժողական կարողությունների և հմտությունների ձևավորմանը՝ 46,5%, ինչպես նաև ընդհանուր առմամբ պատրաստականության բարձրացմանը՝ 39,5%:



Գծապատկեր 1.

Ընտրած մարզման ձևի վրա հիմնված ֆիզիկական կուլտուրայի դասերի ներգործության հիմնական ուղղությունների մշտադիտարկում

Ինչ վերաբերում է ուսանողների հարցմանը, ապա դրա արդյունքում պարզվեց, որ 57,5%-ի կարծիքով ֆիզիկական կուլտուրայի նման կերպով դասի կազմակերպումը կբարձրացնի դասի հանդեպ իրենց հետաքրքրությունը, ինչի արդյունքում կբարելավեն դասերի հաճախումները: Ուսանողների կարծիքները փաստում են, որ ներկայիս ավանդական ֆիզիկական կուլտուրայի դասերը կորցրել են իրենց երբեմնի հետաքրքրությունը (գծապատկեր 1): Այս համատեքստում կարևոր է գտնել բուհի ուսանողների ֆիզիկական դաստիարակության նոր, առավել արդյունավետ մոտեցումներ:

Ի դեպ, մեր հարցման արդյունքում պարզվում է, որ ըստ ուսանողների՝ ֆիթնեսի ուղղվածությամբ դասերը գերադասելի են, քան նույնիսկ այդքան բարձր հուզականություն ապահովող մարզախաղերը: Հարցված ուսանողների մեծ մասը՝ 56,3%-ը, որպես ֆիզիկական կուլտուրայի դասի անցկացման նախընտրելի ձև նշել է ֆիթնեսը: Համեմատած ավելի քիչ պահանջարկ ունեն մարզախաղերը՝ վոլեյբոլը՝ 40,7%, բասկետբոլը՝ 21,7%, սեղանի թենիսը՝ 33,8%, լողը՝ 35%, ֆուտբոլը՝ 15,2%, հանդբոլը՝ 5,3% և ըմբշամարտը՝ 3,8%:

Աղյուսակ 1. Գիտափորձի ընթացքում ֆիթնեսի ուղղվածության ֆիզիկական կուլտուրայի դասերի ներգործությունը հետազոտվող ուսանողների շարժողական ընդունակությունների վրա

Հ/Հ	Ստուգողական վարժություններ	Ելակետային ցուցանիշներ (2022թ., փետրվար)	Ամփոփիչ ցուցանիշներ (2022թ., դեկտեմբեր)	Տարբերության ստույգություն		
				%	t	p
1.	Տեղից հեռացատկ (սմ)	160.75 ± 17.56	167.75±17.8	4.17	7.83	< 0.05
2.	Վազք 30 մ (վրկ.)	5.34±0.62	5.41±0.64	-1.32	0.84	> 0.05
3.	Վազք 500 մ (ր., վրկ.)	1.98±0.315	2.17±0.14	-8.76	0.26	> 0.05
4.	Մեջքին պառկած դրությունից իրանի բարձրացում իջեցում (անգամ)	50.05±24.30	85.9±69.66	41.73	0.17	> 0.05

Վերլուծելով գիտափորձի արդյունքում ստացված թվային տվյալները՝ պարզ է դառնում, որ մարզական վիճակագրության մեջ, հայտնի Ստյուդենտի T սանդղակի համաձայն, ավելի մեծ հավաստի փոփոխություն է նկատվել ՓԽ-ի տեղից հեռացատկի ցուցանիշներում (աղյուսակ 1), իսկ ՍԽ-ի հետազոտվողների մոտ նույն այդ ստուգողական վարժության դեպքում անգամ 2,1 %-ով հետաճ է արձանագրվել (աղյուսակ 2):

Հետաճ է գրանցվել նաև ՓԽ-ի 30 մ վազքի (1,32%) և 500մ. վազքի (8,76%) ցուցանիշներում, իսկ ՍԽ-ի 500մ վազքի (4,09%) արդյունքներում: Այստեղ 30մ վազքի տվյալները թեպետ ոչ հավաստի բայց չնչին (0,48%-ով) աճել է:

Ինչ վերաբերում է ամենամեծ փոփոխություններին, ապա ինչպես երևում է 1-ին և 2-րդ աղյուսակներից, թե՛ ՓԽ-ում, թե՛ ՍԽ-ում այդպիսիք արձանագրվել են մեջքին պառկած դիրքից իրանի բարձրացում և իջեցում ստուգողական վարժության դեպքում:

Աղյուսակ 2. Ավանդական ֆիզիկական կուլտուրայի դասերի ներգործությունը ուսանողների շարժողական ընդունակությունների վրա


Հ/Հ	Ստուգողական վարժություններ	Ելակետային ցուցանիշներ (2022 թ., փետրվար)	Ամփոփիչ ցուցանիշներ (2022 թ., դեկտեմբեր)	Տարբերության ստուգություն		
				%	t	p
1.	Տեղից հեռացատկ (սմ)	159.7 ± 17.86	156.4 ± 17.6	-2.1	3.57	< 0.05
2.	Վազք 30 մ (վրկ.)	5.71 ± 0.75	5.68 ± 0.42	0.48	0.02	> 0.05
3.	Վազք 500 մ (ր., վրկ.)	2.23 ± 0.34	2.33 ± 0.13	-4.09	0.09	> 0.05
4.	Մեջքին պառկած դիրքությունից իրանի բարձրացում իջեցում (անգամ)	36.5 ± 3.48	38.16 ± 8.72	4.36	0.02	> 0.05

Թեպետ երկու խմբերում էլ այս ստուգողական ֆիզիկական վարժության ցուցանիշները ոչ հավաստի են փոփոխվել, այնուամենայնիվ ՍԽ-ի և ՓԽ-ի ելակետային և ամփոփիչ տվյալները համեմատելիս պարզ է դառնում, որ ՍԽ-ում այդ ցուցանիշների դրական տեղաշարժ է տեղի ունեցել 4,36%-ով, իսկ ՓԽ-ում գրանցվել է անհամեմատ մեծ տեղաշարժ՝ 41,7%:

Կարևոր էր նաև պարզել ֆիթնեսի ուղղվածության դասերի առողջարարական ներգործությունն ուսանող-աղջիկների վրա: Այդ նպատակով ուսումնասիրվել է ՓԽ-ի ուսանող-աղջիկների սրտի կծկումների հաճախականությունը (ՍԿՀ) ֆիտնեսի ուղղվածության դասից առաջ, դասի բոլոր մասերում, ինչպես նաև դասից հետո: Ստացված թվային տվյալները ներկայացված են ստորև ներկայացված գծապատկերում (գծապատկեր 2):


2-րդ գծապատկերում ներկայացված ՓԽ-ի հետազոտվողների ՍԿՀ-ի բոլոր տվյալները գտնվում են թույլատրելի սահմաններում, իսկ առավելագույն ցուցանիշները գտնվում են բեռնվածության միջին լարվածության գոտում (4): Հետաքրքրական է, որ հետազոտության միջինացված թվային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ՓԽ-ի ուսանող-աղջիկների ֆիթնեսի ուղղվածության դասի ընթացքում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է դասի ներգրավվիչ մասում, ինչն առաջին հայացքից տարօրինակ է ֆիզիկական կուլտուրայի դասերի համար, սակայն ըստ մասնագետների՝ այս հանգամանքն օրինաչափ է և բնորոշ է քաշի նվազեցմանն ուղղված կարդիո-ուժային տեսակի ֆիտնես-մարզումներին:

Գծապատկեր 2. Ֆիթնեսի ուղղվածության դասերին մասնակցող ուսանողների անոթազարկի հաճախականության ցուցանիշները



Ֆիթնեսի ուղղվածության ֆիզիկական դաստիարակության պարապմունքների առողջարարական ուղղվածությունից բացի՝ կարևոր էր հասկանալ, թե այդ դասերն ինչպե՞ս են անդրադառնում ուսանող-աղջիկների բարոյականային հատկանիշների վրա: Այդ նպատակով մեր կողմից նախապես կազմված ինքնագնահատման հարցաթերթիկով հետազոտության ավարտին ՓԽ-ում և ՍԽ-ում ընդգրկված ուսանող-աղջիկները գնահատել են իրենք իրենց այնպիսի բարոյականային


հատկանիշները, ինչպիսիք են համբերատարությունը, պատասխանատվությունը, համառությունը, ընկերասիրությունը, կամքը և այլք:



Գծապատկեր 3.

Փորձարարական խմբի հետազոտվողների բարոյականային հատկանիշների բարելավումը գիտափորձի ընթացքում

Ինչպես երևում է 3-րդ գծապատկերից, ըստ հետազոտվողների՝ ֆիթնեսի ուղղվածության ֆիզիկական դաստիարակության դասերին հաճախելու արդյունքում բարելավվել են իրենց թե՛ դրական, թե՛ բացասական բարոյականային հատկանիշները:



Գծապատկեր 4.

Ֆիզիկական կուլտուրայի ավանդական դասերի ներգործությունն ուսանող-աղջիկների բարոյականային հատկանիշների վրա

Հետաքրքրական պատկեր է նկատվել ֆիտնեսի ուղղվածության ֆիզիկական դաստիարակության պարապմունքների և ֆիզիկական

կուլտուրայի ավանդական դասերի արդյունքների համեմատության ժամանակ (զծապատկեր 3, 4): Պարզվում է, որ ՍԽ-ի ՓԽ-ի համեմատությամբ՝ հետազոտվողների մոտ «համբերատարություն» և «պատասխանատվություն» բարոյականային հատկանիշների դեպքում առավել մեծ տեղաշարժեր են գրանցվել, իսկ «նախանձի» ու «խարդախության» պարագայում պատկերը հակառակն էր: Ընդանուր առմամբ կարելի է արձանագրել, որ Ֆիթնեսի ուղղվածության ֆիզիկական դաստիարակության պարապմունքները դրական են անդրադարձել ուսանող աղջիկների դրական հատկանիշների ձևավորման, իսկ ֆիզիկական կուլտուրայի ավանդական դասերը՝ բարոյականային բացասական հատկանիշների զարգացման վրա (զծապատկեր 4):

Եզրակացություն

Ստացված տվյալները վերլուծելով՝ կարելի է եզրակացնել, որ Ֆիթնեսի ուղղվածությամբ մարզումների մեր ծրագիրը հատկապես նպաստել է որովայնի մկանային ուժի, ինչպես նաև արագաուժային ընդունակությունների բարելավմանը: Ավանդական ֆիզիկական դասերին հաճախող ուսանող-աղջիկների մոտ չնչին դրական տեղաշարժ է նկատվել արագության և որոշակի աճ՝ կրկին որովայնի մկանների ուժի ցուցանիշներում: Ֆիթնեսի ուղղվածության մարզումները, բացի հետազոտվողների շարժողական պատրաստության բարելավումից, նպաստել են նաև նրանց առողջական վիճակի բարելավմանն ու դրական են անդրադարձել բարոյականային հատկանիշների կատարելագործմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Մանկապատանեկան սպորտի մասին ՀՀ օրենք, 2004. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120999>
Mankapatanean sporti masin HH o'renq, 2004. (in Armenian)
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120999>
2. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին ՀՀ օրենք, 2001. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67146>
Fizikakan kowltowrayi & sporti masin HH o'renq, 2001. (in Armenian)
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=67146>

3. Величко А. С., Прокопенко Л. А. Факторы риска здоровья в самооценке студенческой молодежи // Международный журнал экспериментального образования. – 2014. – № 7-1. – С. 47-48.
Velichko A. S., Prokopenko L. A. Faktory riska zdorov'ja v samoocenke studencheskoj molodezhi // Mezhdunarodnyj zhurnal jeksperimental'nogo obrazovanija. – 2014. – № 7-1. – S. 47-48. (in Russian)
4. Куликова Е. В., Левченко Л. Е. Сравнительный анализ физической подготовленности учащихся вузов, занимающихся анаэробными упражнениями, с помощью теста купера / Выпуск: Том 11: Материалы XVIII Международной Бурденковской научной конференции. 2022 г.- С. 561-566.
Kulikova E. V., Levchenko L. E. Sravnitel'nyj analiz fizicheskoj podgotovlennosti uchashh'hsja vuzov, zanimajushh'hsja anajerobnymi uprazhnenijami, s pomoshh'ju testa kupera / Vypusk: Tom 11: Materialy XVIII Mezhdunarodnoj Burdenkovskoj nauchnoj konferencii. 2022 g.- S. 561-566. (in Russian)
5. Подорув Ю. В., Пихаев Р. Р., Заппаров Р.И. Система фитнеса в процессе физического воспитания студентов / Ученые записки университета имени П.Ф. Лесгафта. – 2017. – № 9 (151) С. 218-223.
Podoruev Ju. V., Pihaeв R. R., Zapparov R.I. Sistema fitnesa v processe fizicheskogo vospitanija studentov / Uchenye zapiski universiteta imeni P.F. Lesgafta. – 2017. – № 9 (151) S. 218-223. (in Russian)

ЭРНЕСТ АВАНЕСОВ - ОСОБЕННОСТИ ВЛИЯНИЯ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ ФИТНЕСС-ПРИРОДЫ НА СТУДЕНТОК

***Ключевые слова:** Университет, студентки, физическое воспитание, фитнес-тренировка, формирующий педагогический эксперимент*

В статье представлено влияние уроков физической культуры фитнес-природы на двигательную подготовку, уровень здоровья и морально-волевые характеристики студенток Армянского государственного университета имени В. Брюсова (БГУ). В статье анализируются результаты опросов среди преподавателей физической культуры, работающих в БГУ и в ряде других государственных вузов РА, а также среди студентов. На основе соответствующих данных были определены наиболее предпочтительные и эффективные направления

физического воспитания студенток. При опоре на формирующий педагогический эксперимент подробно анализируется эффективность процесса физического воспитания, организованного на основе фитнеса, на двигательную подготовленность, состояние здоровья и морально-волевые качества студенток.

ERNEST AVANESOV - PECULIARITIES OF THE INFLUENCE OF FITNESS-ORIENTED PHYSICAL EDUCATION ON FEMALE STUDENTS

Keywords: *University, female students, physical education, fitness training, pedagogical research, scientific experience*

This article examines the key features of fitness-oriented physical education and its impact on the motor skills, health status, and moral development of female students at Brusov State University Foundation (BSU). It analyzes survey results collected from physical education lecturers and students at BSU and several other state universities in the Republic of Armenia (RA). These findings identify the most preferred and effective approaches to physical education for female students.

The study highlights the effectiveness of fitness-based physical education, demonstrating its positive influence on the physical fitness, overall health, and moral characteristics of female students. The detailed analysis is supported by formative pedagogical and scientific research,

Ներկայացվել է՝ 21.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 25.11.2024 թ.

**ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**ՆԵԼԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԷՎԵԼԻՆԱ ԱԴԱՄՅԱՆ**

Համառոտագիր

Սույն հոդվածում ներկայացված են դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում ընտանեկան ավանդույթների բովանդակային ուղղությունները, գործառույթները, կառուցվածքը, կիրառման պայմանները: Մանկավարժական պայմանների ուսումնասիրության համար վերլուծվել են գրական աղբյուրներ, ֆիզիկական դաստիարակության ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, սեղմագրեր, որոնք առնչվում են ազգային ավանդույթներին, սովորույթներին, ընտանեկան դաստիարակության, այդ թվում՝ ֆիզիկական դաստիարակության ավանդույթներին:

Մեր հետազոտության խնդիրներով պայմանավորված՝ դիտումներ ենք անցկացրել Հայաստանի հանրակրթական դպրոցներում, ընտանիքներում՝ ուշադրություն դարձնելով.

- 1) Հայկական ազգային խաղերին առնչվող միջոցառումներին, շարժախաղերի կիրառմանը, խաղահրապարակներից օգտվելու հաճախականությանը,
- 2) հանրակրթական դպրոցներում անցկացվող տոնակատարություններին, ծնողների հետ համագործակցությանը՝ կապված երեխաների դաստիարակության, այդ թվում՝ ֆիզիկական դաստիարակության հետ: Անցկացվել է հարցաթերթիկային հարցում՝ պարզելու ծնողների դիրքորոշումը և կարծիքը ավանդույթների և սովորույթների վերաբերյալ: Հարցումն անցկացրել ենք Գյումրու թիվ 21, 30, 23, 37 դպրոցներ հաճախող կրտսեր դպրոցականների ծնողների շրջանում (հարցմանը մասնակցել է 138 ծնող):

Հիմնաբառեր՝ ֆիզիկական դաստիարակություն, ավանդույթ, սովորույթ, ազգային շարժախաղեր, ընտանիք, ֆիզկուլտուրային արժեքներ, մանկավարժական պայման, անձի ձևավորում

Ներածություն

Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունները նոր պահանջներ են առաջադրում ազգային ավանդույթների և սովորույթների բացահայտման ուղղությամբ, քանզի յուրաքանչյուր սերունդ անցյալի և ապագայի միջև մշակույթի կրող այն օղակն է, որն ապահովում է հաջորդականության ու ժառանգման կապը:

Ավանդույթներն ու սովորույթները ժողովրդի կողմից ստեղծված, նրանց գիտակցության մեջ արմատացած տնտեսական, կենցաղային, մշակութային ունակությունների, սկզբունքների, կենսակերպի արտահայտությունն են, որ ստեղծվել են պատմական զարգացման գործընթացում (7): Հայ ժողովրդի ավանդույթներին պետք է վերագրել դարերի ընթացքում հասարակական հարաբերություններում ծնված ազգային գաղափարախոսությունը, բարքերը:

Հեղազոտության արդիականությունը պայմանավորված է ներկա ժամանակաշրջանում անձի զարգացման և ձևավորման վրա ազգային ավանդույթների, սովորույթների ընտանեկան ազդեցության բացահայտման խնդիրներով:

Հայկական ազգային ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները ձևավորվել են դարերի ընթացքում, կուտակվել և սերունդներին է փոխանցվել երեխաների ընտանեկան դաստիարակության, ներընտանեկան փոխհարաբերությունների, ազգային ծեսերի, ավանդույթների հարուստ փորձը (2):

Միևնույն ժամանակ, ավանդույթներն ու սովորույթները պետք է դիտարկել որպես ժողովրդական մանկավարժության դաստիարակչական գործընթացի արդյունք, որի միջոցով հայ ժողովուրդը վերարտադրում է իրեն, իր հոգևոր մշակույթը, բնավորությունը, սերունդների մտածելակերպը (4):

Հիմնահարցի հրատապությունը հիմնավորվում է նաև նրա մշակվածության աստիճանով: Եթե առանձին ավանդույթների վերաբերյալ գրվել են գրքեր, ատենախոսական աշխատանքներ («Ազգային ավանդույթների և սովորույթների դերը դեռահասների ազգագիտակցության ձևավորման գործում» (11), «Ազգային ավանդույթների օգտագործումը որպես դպրոցականների բարոյական դաստիարակության օպտիմալացման միջոց» (6), «Ազգային ավանդույթներն ու սովորույթները անձի ձևավորման համակարգում» (10), «Ընտանեկան դաստիարակության ավանդույթները Հայաստանում» (9) և այլն), ապա երեխաների ֆիզիկական դաստիարակության համակարգում ավանդույթների, հատկապես՝ ընտանեկան դաստիարակության ավանդույթների վերաբերյալ հրատարակումները

գրեթե բացակայում են: Սակայն որոշ հետազոտողների ընդհանուր դիրքորոշումը թույլ է տալիս փաստել, որ ընտանիքը մեծագույն դեր է կատարում նախադպրոցականների և կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման հարցերում: Դեռ ավելին, Յու. Գ. Գրիգորյանը դիտարկում է, որ ընտանիքը համարվում է նախադպրոցականների, և շատ դեպքերում նաև՝ կրտսեր դպրոցականների ֆիզկուլտուրային արժեքների փոխանցման հիմնական օղակը (7):

Մյուս կողմից խիստ մտահոգիչ է, որ ընտանեկան ֆիզիկական դաստիարակության ժողովրդական ավանդույթները մեծապես կորսված են (16), իսկ շատ դեպքերում՝ գործնականում ուղղակի անտեսված: Պատճառներից մեկն էլ այն է, որ ֆիզիկական կուլտուրայի գիտական ոլորտում այդ հիմնախնդիրները հատուկ ուսումնասիրության չեն ենթարկվել, ինչպես նաև թույլ է դիտարկվել դրանց ներգործությունը երեխաների ֆիզիկական կուլտուրայով պարբերաբար զբաղվելու պահանջմունքի ձևավորման տեսանկյունից:

Երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում ընտանեկան ավանդույթների ձևերի ու միջոցների բացահայտումը, անկասկած, համարվում է արդիական:

Հեղազոտության նպատակը

Բացահայտել ժամանակակից ընտանիքներում ֆիզիկական դաստիարակության ավանդույթների բովանդակությունը և ձևավորման մանկավարժական պայմանները:

Վերը նշված նպատակի իրականացման համար առաջադրվում է հետևյալ խնդիրների լուծումը.

1. Ուսումնասիրել ընտանիքում կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում խաղերի, ազգային շարժախաղերի ընդգրկվածությունը:

2. Բացահայտել կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության արդյունավետության բարձրացման ուղիներն ու միջոցները:

3. Վերլուծել ֆիզիկական դաստիարակության համակարգում ազգային ավանդույթների ու սովորույթների առկայությունը:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ազգային ավանդույթների ու սովորույթների գաղափարախոսությունը (2,5,6,10), կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության տեսությունն ու (11,7,3), ընտանեկան դաստիարակության, այդ թվում՝ ֆիզիկական դաստիարակության տեսությունն ու պրակտիկան (15,13,12,14):

Ավանդույթ, տրադիցիա (լատ.՝ tradition- հաղորդում)՝ պատմականորեն կազմակերպված և սերունդներին հաղորդվող սովորույթ, կարգ, վարքի չափանիշ:

Հայ մշակույթը հարուստ է պատմականորեն ձևավորված և կազմակերպված ավանդույթներով: Ներկա ժամանակաշրջանում ազգային կրթության կառույցի հենարանը ազգային ավանդույթներն են: Ազգային ավանդույթների պահպանման և փոխանցման միջոցներ են ժողովրդական բանահյուսությունը, ազգային խաղերը, ծեսերը, տոները, պարը, տարազը, զրույցը, ծնողների անձնական օրինակը և այլն: Դրանք՝ որպես մանկավարժական արժեքներ, մեծ նշանակություն ունեն դաստիարակության ողջ համակարգի համար: Ժողովրդական տոների և խաղերի մանկավարժական կարևոր կողմն այն է, որ դրանցում առավել արդյունավետ են գործադրվում դաստիարակության բազմապիսի մեթոդները: Ավանդույթները կարևոր դերակատարություն ունեն երեխաներին ավանդական դաստիարակության գործընթացում:

Ժողովրդական ավանդույթների կրողը գլխավորապես ընտանիքն է: Հանրակրթական դպրոցները պետք է լավատեղյակ լինեն իրենց սաների ընտանեկան կյանքին, նրանց ավանդույթներին և կոնկրետ ձևով ներգործեն ընտանեկան դաստիարակության ընթացքի վրա: Ժողովրդական ֆիզիկական դաստիարակության ավանդույթները դպրոցականների դաստիարակության իսկական գործոններ կդառնան, եթե դաստիարակները, ուսուցիչները լավատեղյակ են դրանցից, եթե նրանց հաջողվում է ընտրել ծրագրային այնպիսի նյութ, դաստիարակչական այնպիսի միջոցներ, որոնք կարող են երեխաներին հաղորդակից դարձնել ժողովրդի դարավոր իմաստությանն ու փորձին, ցույց տալ դրանց դերը երեխայի համակողմանի, ներդաշնակ զարգացման գործում:

Երեխաների դաստիարակության համակարգի ամենամեծ նվաճումը ժողովրդական բազմատեսակ խաղերի հարստությունն է (1): Գիտական աշխատություններում նկարագրվում են հայ ժողովրդի բազմազան խաղերը (5): Այսպես, օրինակ՝ 1993 թվականի դպրոցական ծրագրում ներառված էին «Ազգային խաղերի» խմբերում և երեխաներին ուսուցանում էին խաղալ «Փայտ քաշոցի», «Բերդ», «Լախտի», «Երկեն էշ», «Քարկտիկ» և այլն:

2015 թվականի ապրիլի 18-ին Միջազգային օլիմպիական կոմիտեն ճանաչեց հայկական ազգային «Կոխ» ըմբշամարտը՝ որպես աշխարհի հնագույն ազգային ըմբշամարտ (Խ.Գ. Յուզբաշյան, 2019):

Ավանդույթների պահպանման տեսակետից մեր հնարույր Գյումրին համարվում է շտեմարան, ավանդույթների գանձարան, ավանդապահ

մարզ, որտեղ արտացոլված են հայ ազգի լավագույն ավանդույթները: Հայաստանը իրավամբ կարելի է համարել մարզական ավանդույթների կրող և զարգացնող երկիր: Այսօր, բարձր նվաճումների սպորտում մենք հպարտությամբ ենք ներկայացնում մարզական ընտանիքներին՝ հայր և որդի Ազարյաններին, հայր և որդի Միրզոյաններին, հայր և որդի Մխիթարյաններին, հայր և որդի Ջուլֆալայաններին, եղբայրներ Կարապետյաններին, Միլիտոսյանների գերդաստանին և, իհարկե, հայր և որդի Ալեքսանյաններին:

Հետազոտության արդյունքների քննարկում: Կատարված հետազոտությունում խնդիր էր դրված ուսումնասիրել, թե ինչպես է իրականացվում կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակությունն ընտանեկան պայմաններում:

Հարցման միջոցով պարզեցինք՝

- ա) կրտսեր դպրոցականների ծնողների դիրքորոշումը երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ,
- բ) դպրոցականների ֆիզիկական դաստիարակության ձևերի կիրառման հաճախականությունն ընտանեկան պայմաններում,
- գ) կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության միջոցների, այդ թվում՝ «Ձմեռային միջոցների» օգտագործման առանձնահատկություններն ընտանեկան պայմաններում:


Մեզ համար կարևոր էր պարզաբանել ծնողների կրթությունը երկու նկատառումով: Առաջին նկատառումը վերաբերում էր ուսուցման և կրթության ընթացքում նրանց գիտելիքների, շարժողական կարողությունների և հմտությունը ձևավորելու ավանդույթների փոխանցմանը, երկրորդը՝ տվյալ ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության ավանդույթների առկայությանը:

Ըստ հարցման արդյունքների՝ ծնողների 45%-ն ուներ բարձրագույն կրթություն, 39%-ը՝ միջին մասնագիտական և 16%-ը՝ միջին: Այս տարիքային շրջանում մեծ կարևորություն ունի ծնողների կողմից ուշադրությունը երեխայի կեցվածքի, ֆիզիկական զարգացման ցուցանիշների (մարմնի քաշ, հասակ, կրծքավանդակի շրջագիծ) վրա:

Հարցումը ցույց տվեց, որ ծնողների 68 տոկոսը մշտապես հետաքրքրվում է դրանով, 21 տոկոսը՝ դեպքից դեպք, իսկ 11 տոկոսը գրեթե չի հետաքրքրվում: Մյուս կողմից՝ պարզաբանեցինք, թե ծնողները համեմատում են իրենց երեխայի ֆիզիկական զարգացման ցուցանիշները այդ տարիքին համապատասխան նորմերի հետ:

Պարզվեց, որ ծնողների 77 տոկոսը նման համեմատություն չի արել, 24 տոկոսը նշել է, որ դա անցկացրել է տարածաշրջանի պոլիկլինիկան, այն էլ՝ երեխայի նախադպրոցական տարիքում:

Մեր հետազոտության խնդիրն էր պարզել, թե երեխայի օրվա ռեժիմի կառուցվածքում ի՞նչ տեղ է հատկացվում ֆիզիկական դաստիարակության հիմնական ձևերի կիրառմանը: Ստացված տվյալները վկայում են, որ ծնողների 9 տոկոսը օրվա ռեժիմի կառուցվածքում տեղ է հատկացնում առավոտյան հիգիենիկ մարմնամարզությանը, 7 տոկոսը՝ կոփման արարողություններին, 15 տոկոսը՝ ֆիզկուլտ դադարներին, 17 տոկոսը՝ երեկոյան զբոսանքին: Հարցումից պարզվեց, որ ծնողների 22 տոկոսն օրվա ռեժիմում նախատեսել է թվարկած ձևերից երկուսը, 8 տոկոսը՝ երեքը, և միայն ծնողների 3 տոկոսն է, որ կիրառում է նշված բոլոր ձևերը: Հարցվողների 19 տոկոսը չի կիրառում որևէ ձև (տրամագիր 1):



- 9% - առավոտյան մարմնամարզություն
- 7% - կոփման արարողություն
- 15% - ֆիզկուլտ դադար
- 17% - երեկոյան զբոսանք
- 22% - թվարկած ձևերից երկուսը
- 3% - թվարկած ձևերից բոլորը
- 8% - թվարկած ձևերից երեքը
- 19% - թվարկած ձևերը չի կիրառում


Տրամագիր 1. Երեխայի օրվա ռեժիմի կառուցվածքում ֆիզիկական դաստիարակության հիմնական ձևերի կիրառումը

Գրեթե նույն պատկերն ենք ստացել կոփման միջոցների կիրառման վերաբերյալ: Այսպես, ըստ ծնողների՝ ջրային կոփումները կատարում է

դպրոցականների 9 տոկոսը, 7 տոկոսը՝ արևային և նույնքան տոկոս էլ՝ օդային: Ընդ որում, միայն 5 տոկոսն է կոփման միջոցներից կիրառում երկուսը, 3 տոկոսը՝ երեք ձևերը, իսկ մյուսները կոփման թվարկած ձևերից ոչ մեկը չի կիրառում:

Կրտսեր դպրոցականների համակողմանի, ներդաշնակ դաստիարակության համար անհրաժեշտ է համակարգված կիրառել ֆիզիկական դաստիարակության չափորոշիչ ծրագրով նախատեսված ձևերը և միջոցները:

Մեր այն հարցին, թե «Ի՞նչ պետք է անել, որպեսզի ձեր շրջապատի բնակիչները ձգտեն զբաղվել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով», հարցվողների 50 տոկոսն առաջնային է համարել մարզակառույցների կառուցումը, 24 տոկոսը՝ քարոզչական աշխատանքների ընդլայնումն ու ակտիվացումը, 11 տոկոսը՝ ֆինանսական ներդրումները, 5 տոկոսը՝ ծառայության գների մատչելիությունը, 4 տոկոսը՝ ինքնակրթության բարձրացումը, համապատասխան գիտելիքների ձեռքբերումը, 6 տոկոսը հարցը չի կարևորել և չի նշել որևէ պատասխան (տրամագիր 2):



50% - մարզակառույցների կառուցում

24% - քարոզչական աշխատանքներ

11% - ֆինանսական ներդրումներ

6% - հարցը չեն կարևորել

5% - ծառայության գները մատչելի չեն

4% - ինքնակրթության բարձրացում

Տրամագիր 2. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի աշխատանքներն ակտիվացնելու պայմանները

Ընտանեկան դաստիարակության, երեխաների մոտ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ հետաքրքրության, սեր և սովորույթ ձևավորելու, ինչպես նաև ավանդույթներ ամրագրելու, հաստատելու համար կարևոր նշանակություն ունի բնակավայրերի բնակիչների ֆիզկուլտուրային և սպորտային ակտիվությունը խթանող պայմանների առկայությունը, որը չի գտնվում բավարար վիճակում: Այս պարագայում պետք է մշակել բնակավայրերում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նոր ավանդույթների ձևավորման ծրագրեր և ապահովվել մանկավարժական պայմաններ:

Հետաքրքիր էր, թե որոշ դպրոցներում արդյո՞ք կազմակերպվում են «Նավասարդյան խաղեր», որոնք հայերի մրցումների ամենահանդիսավոր տոնախմբություններն են եղել ամեն տարի բերքահավաքից հետո և կազմակերպվել են օգոստոսի 11-ից 16-ն ընկած ժամանակահատվածում:


Հարցման արդյունքները մտահոգիչ են, քանի որ գրեթե մեծամասնությունը նույնիսկ չգիտեր, թե դա ինչ միջոցառում է: Ներկայումս ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային պատմության արժեքները դպրոցում փաստացի չեն փոխանցվում նոր սերնդին:

Մինչդեռ հայտնի է, որ «Նավասարդյան խաղերն» իրենց բովանդակությամբ և ծրագրով անտիկ ժամանակաշրջանի տիպիկ հայկական օլիմպիական խաղերն էին: Այդ արժեքները մենք պարտավոր ենք փոխանցել մատաղ սերնդին: Ավելին՝ հարցվողների մեծ մասը նշել է, որ սիրով և ցանկությամբ կմասնակցի, եթե դպրոցում կազմակերպվեն նմանատիպ տարբեր մարզական միջոցառումներ:

Բոլորը գիտեն, որ բացօթյա ֆիզկուլտուրային պարապմունքները, դահուկաքայլքը, սահնակով ու չմուշկներով սահքը և ընդհանրապես սահքը, տարբեր տեսակի ձմեռային խաղերը և զվարճալիքները լայն հնարավորություն են ընձեռում՝ կոփելու երեխայի օրգանիզմը, զարգացնելու և հարստացնելու նրանց շարժողական գործողությունները, բարձրացնելու օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությունը: Ակնհայտ է նաև նշված շարժողական գործողությունների դաստիարակչական նշանակությունը: Այն մեծապես նպաստում է արիության, համարձակության, կարգապահության, ընկերասիրության, փոխօգնության, աշխատասիրության դաստիարակմանը:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ծնողները և երեխաների մեծամասնությունը կարող են խաղալ ձմեռային խաղեր, սահել սառույցի վրա, սահնակով իջնել բլրակից: Սակայն ծնողները չեն կարողացել թվարկել կամ նկարագրել այն խաղերը, որոնք ընդգրկված են դպրոցականների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրում:

Գոհացուցիչ է այն հանգամանքը, որ ծնողների գերակշռող մեծամասնությունը՝ 82%-ը, ձմռան ժամանակաշրջանում երեխաների հետ ֆիզիկական վարժություններով զբաղվելը համարում է պարտադիր պայման, սակայն նրանց 57%-ը երեխաների հետ զբաղվում է դեպքից դեպք: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ հարցվողների միայն 18 տոկոսն է նշել, որ իրենց բնակավայրերում կան համապատասխան պայմաններ դահուկներով, և հատկապես՝ սահնակով սահելու համար: Եթե հարցում անցկացվեր գյուղերում, համոզված ենք, որ ծնողների պատասխանների արդյունքը միանգամայն այլ պատկեր կունենար: Մեր աշխատանքում առանձնակի ուշադրություն ենք դարձրել՝ բացահայտելու ծնողների տեսական գիտելիքների առկայությունը կրտսեր դպրոցականների դահուկասահքի ուսուցման վերաբերյալ: Հետազոտությունը ցույց տվեց, որ հարցվողների միայն 18 տոկոսը հստակ գիտի, որ շարժողական գործողությունից պետք է ուսուցանել դահուկասահքը, 21 տոկոսը պատասխանել է մոտավոր ճշտությամբ, իսկ 61 տոկոսը տվել է սխալ պատասխան (տրամագիր 3):




Ճիշտ

պատասխան - 18%
 Մոտավոր ճիշտ պատասխան - 21%
 Սխալ պատասխան - 61%

Տրամագիր 3. Ծնողների պատասխանները դահուկասահքի ուսուցման վերաբերյալ

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ծնողներն ընդհանրապես պատկերացում չունեն, թե շաբաթվա ընթացքում քանի՞ անգամ պետք է պարապել երեխաների հետ: Նրանք նույնիսկ չկարողացան մոտավորապես նշել այն տարածությունը, որը պետք է հաղթահարի իրենց երեխան ուսումնական տարվա վերջում:

Մեր այն հարցին, թե «Դուք ինքներդ կարողանո՞ւմ եք սահել դահուկներով», արձանագրել ենք հետևյալ պատասխանները. ծնողների 27 տոկոսը պատասխանել է դրական, 69 տոկոսը՝ բացասական (տրամագիր 4): Մտահոգիչ է այն փաստը, որ կրտսեր դպրոցականների ընդամենը 21 տոկոսն է կարողանում սահել դահուկներով:



Տրամագիր 4. Ծնողների և երեխաների կողմից դահուկասահքի տիրապետումը

Ավելի ցածր տվյալներ ենք արձանագրել չմշկասահքի տիրապետման հարցերում: Այսպես, ծնողների ընդամենը 4 տոկոսն է տիրապետում չմշկասահքին, երեխաների՝ 9 տոկոսը: Նման պայմաններում կարող ենք փաստել, որ ֆիզկուլտուրային և մարզական ավանդույթների՝ ծնողներից երեխաներին փոխանցման գործընթացը խաթարված է:

Ընդհանրացնելով հարցման արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ մի կողմից՝ ծնողները բարձր են գնահատում ֆիզիկական դաստիարակության ձմեռային միջոցների կիրառումը, մյուս կողմից՝

նրանց գիտելիքների և գործնական կարողությունների տիրապետման մակարդակը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա, որը հնարավորություն չի ընձեռի մեթոդապես ճիշտ կազմակերպել երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացն ընտանիքում: Ընտանեկան ֆիզիկական դաստիարակության ավանդույթների վերածննդի համար պահանջվում է ծնողների նվազագույն ֆիզկուլտուրային կրթվածություն, որն ընդգրկում է գիտելիքների, կարողությունների, մեթոդական հնարքների տիրապետում և ֆիզկուլտուրային ձևերի մշտական կիրառում:

Եզրակացություն

Այսպիսով, հետազոտության արդյունքների հիման վրա կատարվել են հետևյալ եզրահանգումները:

1. Գրական աղբյուրների ուսումնասիրությունը, վերլուծությունը և ընդհանրացումը փաստեցին, որ ժողովրդական ավանդույթները երեխաների զարգացման կարևոր գործոններ են: Դրանք նպաստում են դպրոցականների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Ուստի դրանց ուսումնասիրությունը և նոր սերնդի հայեցի դաստիարակության նպատակին ծառայեցնելը ներկայումս մանկավարժական գիտության կարևորագույն խնդիրն է:
2. Ժողովրդական ավանդույթների լայն կրողն ընտանիքն է: Հանրակրթական դպրոցը պետք է լավատեղյակ լինի երեխաների ընտանեկան կյանքին, նրա ավանդույթներին, մյուս կողմից, ընտանեկան ֆիզիկական դաստիարակության ժողովրդական ավանդույթները մեծապես մոռացված են, ֆիզիկական կուլտուրայի ոլորտում այդ հիմնախնդիրները հատուկ ուսումնասիրության չեն ենթարկվել, ինչպես նաև թույլ է դիտարկվել դրանց ներգործությունը երեխաների՝ ֆիզիկական կուլտուրայով պարբերաբար զբաղվելու պահանջմունքի ձևավորման վրա:
3. Ընտանիքում երեխաների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման արդյունավետ ուղին ծնողների և երեխաների համատեղ շարժողական գործողությունների, ֆիզիկական վարժությունների շարժախաղերի, մարզախաղերի տարրերի կատարումն է, որը հնարավորություն է ընձեռում ֆիզկուլտուրային արժեքները փոխանցել մի սերնդից մյուսին:
4. Հարցման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ ավագ սերնդի ներկայացուցիչներն ունեն ակտիվ դիրքորոշում թոռնիկների դաստիարակության, այդ թվում՝ ֆիզիկական դաստիարակության հարցերում, սակայն այդ ներուժն անհրաժեշտ

չափով չի կիրառվում: Այսպես, Գյումրիում իրենց թոռնիկների ֆիզիկական դաստիարակությամբ պարբերաբար զբաղվում է մեծահասակների 9 տոկոսը: Մյուս կողմից հարցվողների 81 տոկոսը նշել է, որ իրենց տան մեծահասակները շատ են սիրում սպորտը և ցանկանում են, որ իրենց թոռնիկները զբաղվեն որևէ մարզաձևով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Աթոյան Կ. Պ. (1985), Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում, Երևան, 374 էջ:
At'oyan K. P. (1985), Fizikakan kowltowrayi & sporti hnagowyn akownqnerj' Hayastanowm, Erevan, 374 e'j: (in Armenian)
2. Անաստասյան Բ. Հ. (1991), Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում: Ընտանիքի և ազգային հոգեբանության նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ:
Anastasyan B. H. (1991), Azgayin avandowyt'neri, sovorowyt'neri dery' erexaneri y'ntanekan dastiarakowt'yan gorc'owm: Y'ntaniqi & azgayin hogebanowt'yan nyowt'eri jhoghovac'ow, Erevan, HH lowsavorowt'yan naxararowt'yan mankararjhakan gitowt'yowneri gitahetazotakan institowt:(in Armenian)
3. Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ. (2008), Ֆիզիկական կուլտուրա: Ուսուցչի ձեռնարկ հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների համար, Երևան, «Աստղիկ», 184 էջ :
Ar'aqelyan V. B., Ghazaryan F. G., Grigoryan Yow. G. (2008), Fizikakan kowltowra: Owsowcchi d'er'nark hanrakt'akan dproci 1-4-rd dasaranneri hamar, Erevan, «Astghik», 184 e'j: (in Armenian)
4. Բաղդասարյան Ա. Ռ. (2006), Ազգային ավանդույթների օգտագործումը որպես դպրոցականների բարոյական դաստիարակության օպտիմալացման միջոց: Մանկ., գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 21 էջ:
Baghdasaryan A. R'. (2006), Azgayin avandowyt'neri o'gtagorc'owmy' orpes dprocakanneri baroyakan dastiarakowt'yan o'ptimalacman mijoc:

Mank., git. t'eknac'owi gitakan astitwani haycman atenaxosowt'yan seghmagir, Erevan, 21 e'j: (in Armenian)

5. Բդոյան Վ. Հ. (1963), Հայ ժողովրդական խաղեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., գիրք 1, 284 էջ:
Bdoyan V. H. (1963), Hay jhoghovrdakan xagher, Erevan, HSSH GA hrat., girq 1, 284 e'j: (in Armenian)
6. Բդոյան Վ. Հ. (1980), Հայ ժողովրդական խաղեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., գիրք 2, 225 էջ:
Bdoyan V. H. (1980), Hay jhoghovrdakan xagher, Erevan, HSSH GA hrat., girq 2, 225 e'j: (in Armenian)
7. Գրիգորյան Ա. Լ. (2001), Ավանդույթները և սովորույթները որպես ինքնագիտակցության, ինքնաճանաչողության, հայեցի դաստիարակության և ազգապահպան միջոց: Մանկավարժական միտք, N 1, էջ 49-56:
Grigoryan A. L. (2001), Avandowyt'nery' & sovorowyt'nery' orpes inqmagitakowt'yan, inqnatwanachoghowt'yan, hayeci dastiarakowt'yan & azgapahpan mijoc: Mankavarjhakan mitq, N 1, e'j 49-56: (in Armenian)
8. Գրիգորյան Ա. Լ. (1986), Ընտանեկան դաստիարակության ավանդույթները Հայաստանում, Երևան:
Grigoryan A. L. (1986), Y'ntanekan dastiarakowt'yan avandowyt'nery' Hayastanowm, Erevan: (in Armenian)
9. Գրիգորյան Յու. Գ. (1997), Ընտանիքը որպես ֆիզկուլտուրային արժեքների փոխանցման հիմնական օղակ: Մշակութային երկխոսությունը և անձի ձևավորումը XXI դարի նախաշեմին: Միջազգային կոնֆերանս, Երևան, 8-10 հոկտեմբերի, էջ 128-129:
Grigoryan Yow. G. (1997), Y'ntaniqy' orpes fizkowltowrayin arjheqneri p'oxancman himnakan o'ghak: Mshakowt'ayin erkxosowt'yowny' & and'i d'&avorowmy' XXI dari naxashemin: Mijazgayin konferans, Erevan, 8-10 hoktemberi, e'j 128-129: (in Armenian)
10. Հովակիմյան Գ. Պ. (2010), Ազգային ավանդույթները և սովորույթները անձի ձևավորման համակարգում: Մանկ. գիտ. դոկ., գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 42 էջ:
Hovakimyan G. P. (2010), Azgayin avandowyt'nery' & sovorowyt'nery' and'i d'&avorman hamakargowm: Mank. git. dok., gitakan astitwani haycman atenaxosowt'yan seghmagir, Erevan, 42 e'j: (in Armenian)

11. Մելիքսեթյան Տ.Ռ., Մեհրաբյան Ա.Ռ. (1993) Ֆիզիկական կուլտուրա 1-3-րդ դասարանների համար, Երևան, «Լույս», 294 էջ:
Meliqset'yan T.R', Mehrabyan A.R'. (1993) Fizikakan kowltowra 1-3-rd dasaranneri hamar, Erevan, «Lowys», 294 e'j: (in Armenian)
12. Չատինյան Ա. Ա., Ուռյան Մ. Ա. (2019), Ընտանեկան դաստիարակության հիմունքները: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Էդիթ Պրինտ, 104 էջ:
Chatinyan A. A., Owr'lyan M. A. (2019), Y'ntanekan dastiarakowt'yan himownqner'y': Owsowmnakan d'er'nark, Erevan, E'dit' Print, 104 e'j: (in Armenian)
13. Атаев А. К. (1983). Теория и практика физического воспитания детей в семье. Автореф., дис., д-ра пед. наук, Киев, с. 35.
Ataev A. K. (1983). Teorija i praktika fizicheskogo vospitanija detej v sem'e. Avtoref., dis., d-ra ped. nauk, Kiev, s. 35. (in Russian)
14. Ким Т. К. (2009). Исходные предпосылки реализации специфических функций физической культуры в условиях семейного быта. Теория и практика физической культуры, N 9, с. 58-62.
Kim T. K. (2009). Ishodnye predposylki realizacii specificheskikh funkcij fizicheskoy kul'tury v uslovijah semejnogo byta. Teorija i praktika fizicheskoy kul'tury, N 9, s. 58-62. (in Russian)
15. Лесгафт П. Ф. (1956). Собрание педагогических сочинений. Том третий, Семейное воспитание ребенка и его значение. М., Физкультура и спорт, с. 439.
Lesgaf't P. F. (1956). Sobranie pedagogicheskikh sochinenij. Tom tretij, Semejnoe vospitanie rebenka i ego znachenie. M., Fizkul'tura i sport, s. 439. (in Russian)
16. Ягодин В. В. (2004). Семейное физическое воспитание как народная традиция. Физическая культура, N 3, с. 54-58.
Jagodin V. V. (2004). Semejnoe fizicheskoe vospitanie kak narodnaja tradicija. Fizicheskaja kul'tura, N 3, s. 54-58. (in Russian)

ՆԵԼԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԷՎԵԼԻՆԱ ԱԴԱՄՅԱՆ - ՓԵԴԱԳՈԳԻԿԵՍԻԿԵ ՍԼՈՎԻԱ ՄԱՍԻՆՈՒՄԻ ՏԵՄԵՅԻՆ ԿՐԻՍՏԻՆՈՒՄԻ Վ ԲՐՈՑԵՍԵ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎՈՍՓԻՏԱՆԻԱ ՏՈՒՆԻՔԻՆԻՔԻ

Ключевые слова: физическое воспитание, традиция, обычай, национальные подвижные игры, семья, ценности физической культуры,

армянское воспитание, педагогическое состояние, формирование личности

В данной статье представлены содержательные направления, функции, структура, условия применения семейных традиций в процессе физического воспитания школьников. В целях изучения педагогических условий мы проанализировали литературные источники, программы по физическому воспитанию, учебные пособия, сводки, которые связаны с национальными традициями, обычаями, семейным воспитанием, в том числе с традициями физического воспитания.

Исследование проводилось в населенных пунктах, общеобразовательных школах и семьях, особое внимание авторы обращали на:

- мероприятия, связанные с национальными играми в населенных пунктах, использование подвижных игр, частота использования детских площадок,
- праздники, проводимые в общеобразовательных школах, сотрудничество с родителями по вопросам воспитания детей, в том числе физического воспитания.

Был проведен анкетный опрос с целью выяснения позиции и мнения родителей относительно традиций и обычаев.

Мы провели анкетный опрос среди родителей младших школьников, посещающих школы № 21, 30, 23, 37 г. Гюмри: в опросе приняли участие 138 родителей.

NELLY AVETISYAN, EVELINA ADAMYAN - PEDAGOGICAL CONDITIONS OF THE APPLICATION OF FAMILY TRADITIONS IN THE PROCESS OF SCHOOLCHILDREN'S PHYSICAL EDUCATION

***Keywords:** physical education, tradition, custom, national outdoor games, family, physical culture values, Armenian education, pedagogical condition, personality formation*

This article examines the content, functions, structure, and application of family traditions in the physical education of schoolchildren. To study the pedagogical conditions, we analyzed various sources, including literature, physical education programs, training manuals, and summaries related to

national traditions, customs, family education, and physical education practices.

In line with our research objectives, we conducted observations in communities, public schools, and families, focusing on:

- Events involving national games in local communities, including the use of outdoor games and playgrounds;
- Celebrations held in public schools and their collaboration with parents in children's education, particularly in physical education.

Additionally, a questionnaire survey was conducted to gather parents' opinions and perspectives on traditions and customs related to physical education. The survey targeted parents of junior schoolchildren from schools No. 21, 30, 23, and 37 in Gyumri, with a total of 138 parents participating.

Ներկայացվել է՝ 21.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.11.2024 թ.

**ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ
ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԸ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ԱՇԽԵՆ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում քննության են առնվում ֆրանսերեն դարձվածային միավորների ընտրության չափանիշներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով ֆրանսերենի մասնագիտական դասընթացի նպատակն ու խնդիրները: Այս չափանիշների ու սկզբունքների վերլուծությունը հիմնավորվում է համապատասխան տիպական օրինակներով:

Կարևորվում է մայրենի և թիրախային լեզուներում կառուցվածքային-իմաստային համարժեքության, անհամարժեքության բացահայտման հիմնախնդիրը: Դարձվածային միավորների սկզբունքներն ընտրելիս հաշվի են առնվել այն դժվարությունները, որոնք առաջ են գալիս դրանց ուսուցման և յուրացման գործընթացում: Մեծ տեղ է հատկացվում խոսակցական բառաշերտի ուսուցմանը, քանի որ այն դարձվածային միավորների հիմնական աղբյուրն է:

Խնդիր է դրվում ուսուցման ընթացքում յուրացնել ոչ միայն լեզվական, այլև ազգային մտածելակերպի միավորները: Այդ համատեքստում առաջին պլան են մղվում հատկաբանական հասկացությունները: Կարևորվում է հասկացության մոտեցման կիրառումը դարձվածային միավորների վերլուծության ժամանակ, քանի որ այն հնարավորություն է ընձեռում ֆրանսերենի դարձվածքները դիտարկել նրանց իմաստային զուգորդական դաշտում:

Շեշտադրվում է այն գաղափարը, ըստ որի՝ ֆրանսերենի դարձվածքների ուսուցման համակարգն ունի ոչ միայն հաղորդակցական, այլև վերլուծական ուղղվածություն: Փորձ է արվում դարձվածանու նվազագույնը ներդաշնակեցնել քերականական, բառային, թեմատիկ-իրադրային, երկրագիտական նվազագույնների հետ:

Բացահայտվում է ֆրանսերեն դարձվածային միավորների ընտրության թեմատիկ, հաղորդակցական արժեքի, լեզվամշակութաբանական, հաճախականության, կիրառելիության,

հոմանիշների բացառման, համարժեքության չափանիշների բովանդակային և տրամաբանական կապը:

Հիմնաբառեր՝ հաղորդակցական արժեք, լեզվամշակութաբանական արժեք, հաճախականության սկզբունք, կիրառելիության սկզբունք, հոմանիշների բացառման սկզբունք, լեզվամշակույթ, խոսակցական բառաշերտ:

Ներածություն

Համալսարանական կրթության համակարգում ֆրանսերեն դարձվածային միավորները որևէ կոնկրետ դասընթացի շրջանակներում չեն ուսումնասիրվում: Դրանց ուսուցումն իրականացվում է ֆրանսերենի տարբեր՝ տեսական և գործնական դասընթացներում: Ֆրանսերենի գործնական դասընթացներում դարձվածքները ուսումնասիրվում են որպես բառապաշարի (լայն առումով՝ խոսքի) կարևոր բաղադրիչներ: Տեսական դասընթացներում նրանք ուսումնասիրվում են առավելապես բառագիտության, ոճաբանության ուսուցման ընթացքում:

Հեղազոտության հիմնախնդիրները

Կարևոր է ֆրանսերենի գործնական դասընթացներում նվազագույն բառապաշարի, դրա շրջանակներում՝ նվազագույն դարձվածային միավորների ընտրության հիմնախնդիրը: Կարևորվում են նաև բառապաշարի և դարձվածային միավորների հարաբերակցության, դրանց նվազագույնների ընտրության և որոշման հիմնախնդիրները:

Հեղազոտության արդիականությունը պայմանավորված է ֆրանսերենի գործնական և տեսական դասընթացներում դարձվածային միավորների ընտրության սկզբունքների և չափանիշների սահմանման, ընտրության և կիրառման անհրաժեշտությամբ:

Հեղազոտության նորույթը

Հստակեցված են դարձվածային միավորների ընտրության չափանիշներն ու սկզբունքները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում:

Հեղազոտության տեսական նշանակությունը

Ուսումնասիրվել է դարձվածային միավորների ընտրության չափանիշների և սկզբունքների վերաբերյալ համապատասխան գրականություն, կատարվել է դարձվածային միավորների բաղադրիչային և գործառական վերլուծություն:

Հեղափոխության գործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքները կարող են ուսումնասիրության առարկա դառնալ ֆրանսերեն ուսումնասիրող ուսանողների և դասավանդող դասախոսների համար:

Հեղափոխության մեթոդները

Կիրառվել են ծագումնաբանական, պատմահամեմատական, բաղադրիչային վերլուծության մեթոդները:

Հեղափոխության նպատակը

Ֆրանսերենի գործնական դասընթացներում նվազագույն բառապաշարի, դրա շրջանակներում՝ նվազագույն դարձվածային միավորների կիրառումը՝ ուսումնասիրելով ֆրանսերեն դարձվածային միավորների ընտրության չափանիշներին և սկզբունքներին վերաբերող հրապարակումները և բացահայտելով դրանց կիրառման հնարավորությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում:

Հեղափոխության խնդիրները

1. բացահայտել ֆրանսերեն դարձվածային միավորների ընտրության չափանիշների և սկզբունքների բովանդակային և գործառական բնութագրերը,

2. հիմնավորել ֆրանսերեն դարձվածային միավորների ընտրության չափանիշների և սկզբունքների կիրառման արդյունավետությունը ֆրանսերենի մասնագիտական դասընթացում:

Դարձվածային միավորների ընտրության չափանիշները.

Հետազոտողներն ընդհանուր առմամբ առանձնացնում են դարձվածային միավորների ընտրության թեմատիկ, հաղորդակցական արժեքի, լեզվամշակութաբանական, հաճախականության, կիրառելիության, հոմանիշների բացառման, համարժեքության չափանիշները:

Դարձվածային միավորների ըստ հաղորդակցության արժեքի ընտրությունը ենթադրում է նախևառաջ հաշվի առնել հաղորդակցական տարբեր իրադրություններում լեզվակիրների հաղորդակցական վարքագիծը: Տեղին է նկատել, որ դարձվածային միավորները պարունակում են ավելի շատ տեղեկատվություն և զգալիորեն ավելի շատ հենքային գիտելիքներ, քան բառը, և ունեն հաղորդակցական մեծ նշանակություն:

Հաղորդակցական արժեքի չափանիշի շրջանակներում կարևորվում է մայրենի և թիրախային լեզուներում կառուցվածքային-իմաստային համարժեքության կամ անհամարժեքության բացահայտման հիմնախնդիրը: Նման դարձվածային միավորներն առանձնահատուկ

դժվարություն են ներկայացնում լեզվակիրների բանավոր և գրավոր խոսքը հասկանալու համար, քանի որ դրանք տարբերվում են ազգամշակութային հատկանիշներով և հիմնականում վերաբերում են ազգամշակութային նշութավորում ունեցող բառապաշարին: Ըստ նույն չափանիշի՝ դարձվածային միավորներն ունեն դրական կամ բացասական հիմնանշանակություն և արտահայտում են տարբեր հույզեր, զգացմունքներ, խոսողի վերաբերմունքը խոսքի առարկայի նկատմամբ:

Նշված մոտեցումներից առանձնանում են բառապաշարի և դարձվածային պաշարի ուսուցման այն սկզբունքները, որոնք հիմնավորվում են ճանաչողական-հաղորդակցական մոտեցման շրջանակներում:

Դարձվածային միավորների ընտրության սկզբունքները.

Որևէ լեզվի դարձվածքների իմացությունը տվյալ լեզվի իմացության չափանիշ է. քերականական կառուցվածքից հետո դարձվածքները լեզվի այն տարրերն են, որոնք ամենից հարագատ են արտացոլում նրա ինքնատիպությունը, տվյալ ժողովրդի լեզվամտածողությունը (Բեդիրյան, 1982, էջ 69):

Դարձվածային միավորների ընտրության սկզբունքները որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն դժվարությունները, որոնք առաջ են գալիս դրանց ուսուցման և յուրացման գործընթացում: Հատկանշական է, որ մեծ դժվարություն է ներկայացնում խոսակցական բառապաշարի յուրացումը, քանի որ լեզվակիրներին բնորոշ լեզվական միջավայրը բացակայում է: Մի կողմից խոսակցական բառաշերտը դարձվածային միավորների հիմնական աղբյուրն է, մյուս կողմից՝ այդ շերտը հայտնի և անհայտ բազմաթիվ պատճառներով դասագրքերի հեղինակները դուրս են թողնում: Ավելին, ուսուցողական նպատակներով բնագրերում առկա դժվարությունները հաճախ հանվում են, որի հետևանքով շատ դարձվածային միավորներ ուղղակիորեն չեն ուսուցանվում:

Կարևոր հիմնախնդիր է դարձվածային միավորների մտածական-հոգեբանական գործոնները հաշվի առնելը: Անգամ լրացուցիչ ծանուցումներով բացատրությունը չի օգնում ուսանողներին՝ յուրացնելու այս կամ այն դարձվածային միավորը: Խնդիր է դրվում ուսուցման ընթացքում յուրացնել ոչ միայն լեզվական, այլև ազգային մտածելակերպի միավորները: Ասվածից հետևում է, որ դարձվածային միավորները դիտարկվում են հասկացութային մոտեցման տեսանկյունից, այն առումով, որ քննության են առնվում որոշակի հասկացութային զուգորդական-իմաստային դաշտի շրջանակներում:

Քննության է առնվել «շուն» հասկացությամբ նրա մեկնաբանության լեզվամշակութային մոտեցման տեսանկյունից և համեմատվել «շուն»

հասկացույթի իմաստային-զուգորդական դաշտում շրջանառվող ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն դարձվածային միավորները (Белая, 2021, էջ 265-280): Դարձվածային միավորների չափանիշ ընդունելով տվյալ դարձվածային միավորը ներկայացնող լեզվամշակույթը՝ ներկայացվում են «շուն» բաղադրիչով ֆրանսերեն դարձվածային տիպական մի շարք միավորներ.

- 1) piquer un chien - թեթև քուն մտնել,
- 2) rompre les chiens - ընդհատել խոսակցությունը,
- 3) courir comme un chien dératé - արագ վազել,
- 4) c'est saint Roch et son chien - անբաժան լինել,
- 5) couper la queue à son chien - ավարտել սկսած գործը,
- 6) s'enmoquer comme un chien d'un bouquet de roses - անտարբեր լինել կամ լուրջ չվերաբերվել:

Piquer un chien «թեթև քուն մտնել» դարձվածային միավորի ներքին ձևի բաղադրիչը փոխկապակցված է մշակույթի գործող կողմի հետ, chien «շուն» բաղադրիչը՝ զոոմորֆիկ ծածկագրի հետ: Բաղադրիչ բառերի հարաբերակցությունը մշակույթի զոոմորֆիկ և գործող կողմերի հետ բացահայտում է դարձվածային միավորի պատկերով մարմնավորված մակերեսային քնի կարծրատիպը:

Արտահայտությունը, ըստ ֆրանսիացի լեզվաբան Մ. Ռայի, ծնվել է թատրոնում, դրա աղբյուրը եղել է «Մոնմոդանսի կույրը» պիեսը, որի պրեմիերան կայացել է 1823 թվականի մարտի 6-ին Փարիզում: Պիեսի գլխավոր հերոսը՝ կույրը, չքնելու համար փայտին մի սուր երկաթյա ծայր է դնում: Երբ քունը տանում է, և գլուխը ցած է ընկնում, փայտի ծայրը խոցում է նրա ոտքերի մոտ պառկած շանը: Շունը վեր է թռչում ու չի թողնում տիրոջը քնել: Այսպիսով, piquer un chien-ը սկսեց նշանակել «քնել» (Белая, 2021, էջ 265-280):

Հասկացության մոտեցման տեսանկյունից «շուն» բաղադրիչով դարձվածային միավորները քննության է առել հայտնի դարձվածաբան, պրոֆ. Ա. Հ. Նազարյանը: Անդրադառնալով rompre les chiens «ընդհատել ձգվող ոչ տեղին խոսակցությունը» դարձվածային միավորին՝ ֆրանսերենի դարձվածաբանության գիտակ լեզվաբանը գրում է, որ «rompre» բաղադրիչը փոխկապակցված է մշակույթի գործող կողմի հետ, chiens բաղադրիչը՝ մշակույթի զոոմորֆիկ կողմի հետ, և խորհրդանշում է զրույցը: Բաղադրիչ բառերի հարաբերակցությունը նշված կողմերի հետ բացահայտում է անտեղի սկսված կամ ընդհատված զրույցի կարծրատիպը՝ մարմնավորված դարձվածային միավորի պատկերով: Արտահայտությունը կապված է որսի հետ, որտեղ նշանակում է «կանգնեցնել շներին որսին հետապնդելիս» (Назарян, 1968, էջ 54):

Ուսուցման բոլոր փուլերում դարձվածային միավորի ընտրության կարևոր չափանիշ է նրա ոճական և ուրիշ առանձնահատկությունների բացահայտումը: Այս տեսանկյունից ուշագրավ է ֆրանսագետ Վ. Ստեփանյանի «Տեքստի մեկնաբանության ձեռնարկը», որտեղ տեքստային աշխատանքում ընդգրկված է Autour d'un mot («Մի բառի շուրջ») բաժինը (Stepanian, 2005, էջ 16): Նախ ներկայացվում է ընտրված բառն իր առաջնային իմաստներով (ֆրանսերեն բացատրությամբ), տվյալ բառից ստեղծված նոր բառերը, ինչպես նաև այդ բառերից կազմված դարձվածքները: Այսպես. Chèvre - chevrotant - parler ou chanter d'une voix chevrotante (նկարագրում է դողացող, անկայուն կամ թույլ ձայնով խոսելը կամ երգելը, որը հաճախ ուղեկցվում է վախի, հուզմունքի կամ ծերության պատճառով առաջացած դողդոջումով): Բաժինը բնագիր տեքստից ներկայացնում է նաև բառն իր ծագումնաբանական իմաստով և բացատրությամբ, որին հաջորդում է հենց այդ բառով կազմված դարձվածքը՝ Grâce - les bonnes grâces de զգո (նշանակում է լինել մեկի բարեհաճության կամ համակրանքի արժանացած, այսինքն՝ վայելել մեկի աջակցությունը կամ հովանավորությունը):

Այսպիսի կառուցվածքը կարևոր է, քանի որ դարձվածքները ներկայացվում են ոչ միայն որպես լեզվական միավորներ, այլև որպես իմաստային կապերի հանգույցներ, որոնք ամրապնդում են սովորողի կարողությունը՝ հասկանալու բառի գործառույթն ավելի լայն համատեքստում: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ճանաչելու և վերլուծելու բառի և դարձվածքի փոխկապակցվածությունը՝ խորացնելով լեզվաբանական և մշակութային ընկալումները:

Դարձվածային միավորների բովանդակային բնութագրերը

Դարձվածային միավորների կարևոր ոճական առանձնահատկություններից է, որ «խոսակցական դարձվածային միավորները հաճախ օգտագործվում են զրուցակցի վրա հուզական ազդեցություն ունենալու, ինչպես նաև խոսքն ավելի համոզիչ դարձնելու և համապատասխան արձագանք առաջացնելու համար: Դրան նպաստում է դարձվածային միավորների փոխաբերական բնույթը» (Лиходкина, 2015, էջ 113-116): Այսպիսով՝ դարձվածային միավորների փոխաբերական բնույթը դրանց ընտրության կարևոր չափանիշ է:

Կարևոր չափանիշ է նաև դարձվածային միավորների ոճական երանգավորումը: Դարձվածային միավորները պատկանում են խոսակցական-առտնին, խոսակցական կամ գրական-գեղարվեստական ոճերին և խոսքին այս կամ այն երանգ են հաղորդում՝ դուրս գալով առօրյա կյանքի խիստ սահմաններից: Մյուս առանձնահատկությունն այն է, որ «դարձվածային արտահայտությունները կրում են ընդգծված

արտահայտչական-հուզական ենթատեքստ և հաճախ ունենում են բացասական երանգ՝ արհամարհանք, անհամաձայնություն, չարաշահում» (Лиходкина, 2015, էջ 113-116):

Դարձվածային միավորների ընտրության չափանիշ կարող է լինել նաև այն, որ առաջնային իմաստից բացի, դարձվածային միավորները հաճախ ունենում են այլաբանական նշանակություն:

Դարձվածային միավորների ուսուցողական նպատակներով ընտրության կարևոր սկզբունք է բնագրայնությունը, որը ենթադրում է ընտրել դրանք գեղարվեստական բնագրերում: Այդ առումով Մ. Ա. Դարաբյանը գրում է. «...դարձվածքների ընտրությունը կատարվում է ոչ թե ըստ իրենց տեսակների, այլ ըստ բնագրային տեքստում տեղ գտած թարգմանական բնույթի դժվարությունների: Այն հարցը, թե ինչքանով է դարձվածքների տեսակների իմացությունը նպաստում բառապաշարի յուրացմանն ընդհանրապես և դարձվածապաշարի յուրացմանը մասնավորապես, մղվում է հետին պլան» (Դարաբյան, 2010, էջ 15-38):

Բնագրայնության սկզբունքի կիրառումը մեծ հնարավորություններ է ընձեռում ժամանակակից տարբեր բնագրերի շուրջ աշխատելու համար: Այն ինչ-որ տեղ գիտակցականության սկզբունքի արդյունավետությունն է հիմնավորում և կիրառվում է վերլուծական մակարդակում: Ֆրանսերենի բուհական դասագրքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դարձվածային միավորներն ընտրվում են թեմատիկ սկզբունքով: Այն շատ դեպքերում հակասում է բնագրայնության սկզբունքին, քանի որ թեմատիկ սկզբունքով ընտրված տեքստերը հիմնականում կրճատվում կամ ադապտացվում (հարմարեցվում) են:

Համակարգայնության սկզբունքի կիրառման տեսանկյունից դարձվածային միավորների ընտրության թեմատիկ սկզբունքը կարող է արդյունավետ թվալ, քանի որ ըստ կոնկրետ թեմաների՝ դարձվածային միավորների ուսուցումը միաժամանակ նպաստում է ուսանողների լեզվաբանական գիտելիքների համակարգմանը:

«Դարձվածային միավորների համակարգվածության ընտրության սկզբունքը ենթադրում է հաշվի առնել արտաքին և ներքին համակարգային կապերը, որոնք որոշում են դարձվածային միավորների միասնությունն ու ամբողջականությունը, դրա ձևի և բովանդակության ներդաշնակությունը» (Жуков, 2010, էջ 21-27):

Ֆրանսերենի ուսուցման բուհական դասընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ ամեն մի դասանյութի շրջանակներում դարձվածային միավորները չեն ներմուծվում համակարգված ձևով: Այդ համատեքստում կարևորվում են ոչ միայն բառապաշարի, այլև դարձվածային նվազագույնի ընտրության սկզբունքները: Այդ սկզբունքները կարելի է

դիտարկել տարբեր՝ ընդհանուր դիդակտիկական, մասնավոր մեթոդական, լեզվաբանական մակարդակներում: Ակնհայտ է, որ առաջին պլան են մղվում դիդակտիկական զննականության, մատչելիության, հաջորդականության, կայունության, գիտականության, գիտակցականության և այլ սկզբունքները:

Դիդակտիկական զննականության սկզբունքով ընտրվում են ոչ միայն դարձվածային միավորները, այլև ստեղծվում են դարձվածաբանական տարատեսակ բառարաններ, որոնք հաճախ ուղեկցվում են համապատասխան նկարագրողումներով: Օրինակ՝ *Avoir d'autres chats à fouetter* արտահատության բառացի թարգմանությունն է «Մտրակելու համար ունենալ այլ կատուներ», իսկ նշանակությունն է՝ «ունենալ ավելի կարևոր գործեր»:

Դարձվածային միավորի ծագումը. 17-րդ դարում անկարևոր բաները նշելու համար ֆրանսիացիներն ասում էին, որ «կատվին մտրակելու առիթ չկա»: Այստեղից միանգամայն տրամաբանորեն հետևում է, որ եթե գործը կարևոր է, ուրեմն կատվին մտրակելու պատճառ կա: Իսկ ավելի կարևոր հարցերը նշանակվել են հենց որպես chats:

Օգտակար և արդյունավետ է կիրառել ուսուցողական նպատակներով տարաբնույթ դարձվածաբանական լուսաբանումներով, այդ թվում՝ նկարագրողումներով բառարանները: Արդի փուլում մատչելի են նաև համացանցային բառարանները (Rey A., Chantreau S. - Dictionnaire Des Expressions Et Locutions-Le Robert, 1989, p. 1333, <https://www.scribd.com/document/764648040/Les-Usuels-Du-Robert-Alain-Rey-Sophie-Chantreau-Dictionnaire-Des-Expressions-Et-Locutions-Le-Robert-1989>):

Իսկ դարձվածային միավորների ընտրության մատչելիության սկզբունքի մասին հարկ է ասել, որ նպատակահարմար է ներմուծել այսպես կոչված «միջազգային», հիմնականում լատիներենից փոխառված դարձվածային միավորները: Այլ կերպ ասած՝ խնդիր է դրվում ներմուծել մատչելի պատճեն-դարձվածքները, որոնք հաճախ հանդիպում են մայրենի լեզվում: Այդ պատճենումները լինում են երկու տիպի՝ անմիջական և միջնորդավորված (Բեդիրյան, 2007, էջ 24-25):

Հաջորդ փուլում ներմուծվում են նույն դարձվածքները ֆրանսերեն: Ըստ այդմ՝ նպատակահարմար է ներմուծել լատիներեն ծագում ունեցող դարձվածքները: Օրինակ՝ *terra incognita* (ինչ-որ անծանոթ բան) կարող է կիրառվել առանց թարգմանության, իսկ *advocatus diaboli* «սատանայի փաստաբան» դարձվածքն ունի *avocat du diable* ֆրանսերեն համարժեքը:

Մատչելիության սկզբունքի կիրառումն օգնում է ուսանողներին՝ հաշվի առնելու և՛ մայրենի, և՛ ուսումնասիրվող լեզվի (տվյալ դեպքում՝ ֆրանսերենի), մշակույթի առանձնահատկությունները: Ինչդիր է դրվում գտնել և համեմատել ոչ թե համարժեք դարձվածային միավորները, այլ համարժեք հանրանշանակությամբ դարձվածքները:

Ինչ-որ առումով դարձվածային միավորների ընտրության մատչելիության սկզբունքի կիրառումը նպաստում է լեզվակիրների հետ անմիջական շփման բացը փոխհատուցելուն, որը, այլ խոսքով, փոխհատուցող ռազմավարության կիրառում է ենթադրում:

Ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման հիմնախնդիրը

Գործնական մակարդակում խնդիր է դրվում ոչ միայն ուսումնասիրել, այլև խոսքում ակտիվորեն կիրառել օտարալեզու դարձվածային միավորներ: Այդպիսի մոտեցումը ենթադրում է նախապատվությունը տալ խոսակցական ուղղվածության դարձվածային միավորների ուսուցմանը: Մի կողմից՝ օտար լեզվի ապագա ուսուցիչները պետք է ճիշտ պատկերացում կազմեն գրքային, հնաոճ կամ վերամբարձ համարվող դարձվածային միավորների մասին, մյուս կողմից՝ պետք չէ մոռանալ օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակները: Այդ համատեքստում ոճական անհամարժեքության, ոճական չեզոքության սկզբունքները կիրառվում են ըստ (ուսումնա)խոսքային իրադրությունների:

Հարկավոր է նշել, որ ֆրանսերենի մասնագիտական դասընթացում անհրաժեշտ է կիրառել թե՛ ընկալողական, թե՛ արտադրողական վարժություններ՝ ըստ դրանց կիրառման վերլուծական և հաղորդակցական ընթացակարգերի: Մասնագիտական ֆրանսերենի կարևոր յուրահատկությունն այն է, որ ուսանողները պետք է զարգացնեն ոչ միայն իրենց լեզվական, այլև լեզվաբանական կոմպետենցիան (կարողունակությունը), որը ենթադրում է ավելի բարձր ռեֆլեքսիվ մակարդակ: Նրանք պետք կարողանան բացահայտել դարձվածային միավորների առանձնահատկությունները, սահմանել դրանք, որոշել դրանց տեսակները, գործառույթները: Ինչ վերաբերում է գործնական կիրառությանը, ապա նրանք պետք է կարողանան դարձվածային միավորները գործածել իրենց ակտիվ խոսքում՝ ճշգրտորեն հաշվի առնելով դրանց ոճաժանրային առանձնահատկությունները:

Ակնհայտ է, որ նշված դասընթացն ունի ոչ միայն հաղորդակցական, այլև վերլուծական ուղղվածություն: Ինչ-որ առումով վերլուծելու և հաղորդակցվելու նպատակներն իրարամերժ են. ավանդաբար տվյալ դասընթացի կազմակերպիչներն ավելի շատ

հակված են վերլուծելու օտարալեզու դարձվածային միավորները: Մենք առաջարկում ենք դարձվածային միավորների փուլային ուսուցում, երբ առաջին փուլում փորձ է արվում ճանաչել դարձվածքները, երկրորդ փուլում՝ համեմատել մայրենիի համարժեք դարձվածքների հետ, երրորդ փուլում՝ վերլուծել դրանք և վերջին փուլում կիրառել ակտիվ խոսքում:

Գծապատկեր 1



Դարձվածային միավորների ընտրության կարևոր սկզբունք է **հայեցակերպային մոտեցման կիրառումը**, որը շեշտադրում է դարձվածքների ուսումնասիրության այս կամ այն մշակութային, միջմշակութային, գործաբանական, ճանաչողական հայեցակերպը: Հատկապես շեշտադրվում է մշակութային, միջմշակութային հայեցակերպերի դերը: Կարելի է պնդել, որ գործնականում չկա որևէ դարձվածք, որի ուսումնասիրությունը չպահանջի մշակութային կամ միջմշակութային բնույթի գիտելիքներ:

Ֆրանսերենի բուհական դասագրքում «Դիմանկարներ և բնավորություններ» թեմայի շրջանակում ներառված է առաջադրանք, որի նպատակը լեզվական և մշակութային ընկալումների համադրման միջոցով ուսանողների միջմշակութային գիտելիքների ձեռքբերումն ու ամրապնդումն է (Ghambarian, Kaplanian, 2007, էջ 42): Առաջադրանքն ունի երկու մաս. մի կողմում ներկայացված են դարձվածային միավորները, իսկ մյուս կողմում տրված է նշում, թե տվյալ դարձվածքը երջանկությո՞ւն է խորհրդանշում, թե՞ դժբախտություն: Առաջադրանքում

ներառված դարձվածքներից են՝ briser un miroir, croiser les doigts, toucher du bois, trouver un trèfle à quatre feuilles, ouvrir un parapluie dans une maison, passer sous une échelle, le chiffre 13, rencontrer un chat noir: Ուսանողները բառարանների օգնությամբ և տեքստային նմուշների հիման վրա կպարզեն յուրաքանչյուր դարձվածքի իմաստը, հաշվի կառնեն բառացի նշանակությունը, ապա կկատարեն առաջադրանքը: Պատկերն այսպիսին է.

- toucher du bois - խուսափել դժբախտությունից կամ հաջողության հույս փափագել (բառացի՝ թակել փայտը),
- trouver un trèfle à quatre feuilles - հաջողության խորհրդանիշ, հազվադեպ իրավիճակ (բառացի՝ չորս տերևանի եռատերև գտնել),
- ouvrir un parapluie dans une maison - վտանգ, դժբախտություն տուն բերել (բառացի՝ տանը անձրևանոց բացել),
- passer sous une échelle - ըստ քրիստոնեական դավանանքի՝ երբ սանդուղքը դրված է պատի վրա, Սուրբ Երրորդությունը խորհրդանշող եռանկյունի է կազմվում, որի ներքո անցնելը բերում է չարություն կամ դժբախտություն (բառացի՝ սանդուղքի տակով անցնել):

Առաջադրանքն ընդգրկում է և՛ հայերենում գոյություն ունեցող դարձվածքներ, և՛ ֆրանսիական տիպական դարձվածային միավորներ՝ հնարավորություն տալով ուսանողներին համեմատելու լեզվամշակութային առանձնահատկությունները, ինչպես նաև ցույց տալու ընդհանրությունները (briser un miroir - դժբախտություն կամ անհաջողություն կանխագուշակել (բառացի՝ հայելի կտրել), croiser les doigts - պաշտպանել չար աչքից (բառացի՝ մատները խաչել), le chiffre 13 - անհաջողակ թիվ (բառացի՝ թիվ 13), rencontrer un chat noir - դժբախտություն պատահել կամ անհաջողություններ կանխագուշակել (բառացի՝ սև կատվի հանդիպել)): Այս մոտեցումը կարևոր է ոչ միայն դարձվածքների յուրացման, այլև դրանց հասարակական-մշակութային համատեքստերի ընկալման համար, որը նպաստում է միջմշակութային կոմպետենտության խորացմանը:

Ակնհայտ է, որ դարձվածքների ընտրության սկզբունքները հնարավորինս չպետք է հակասեն նվազագույն բառապաշարի ընտրության սկզբունքներին: Մյուս կողմից՝ միշտ չէ որ հնարավոր է դարձվածքներն ընտրել բառապաշարի նվազագույնի ընտրության սկզբունքներով: Պետք է նշել, որ ֆրանսերեն բառապաշարն ընդհանուր առմամբ հատկաբանական ուղղվածություն ունի: Սակայն դարձվածքների ընտրության սկզբունքները միտում ունեն կոնկրետանալու, հատկապես

երբ փորձ է արվում բացահայտել դրանց ծագման և զարգացման արտալեզվական գործոնները: Դրա հետ մեկտեղ ճիշտ են Վ. Վ. Մարկովկինը և Է. Մ. Շախսովարովան, որոնք պնդում են, որ «դարձվածային նվազագույնը պետք է համաձայնեցվի քերականական, բառային, թեմատիկ-իրադրային, երկրագիտական նվազագույնների հետ, որոնք ստեղծված են այլ լեզվամիավորների ուսուցման, այլ պայմանների համար» (Морковкин, Шахсуварова, 1984, էջ 98-112):

Ֆրանսերենի դարձվածքների ուսուցողական նպատակներով ընտրության սկզբունքները հստակեցնելիս պետք է հիշել, որ դրանք ավելի են կոնկրետանում դարձվածային սերտաճումների, միախյուսումների ուսուցման ժամանակ: Ավելի բարձր մակարդակում դրանց ներմուծումը կարող է ավելի արդյունավետ լինել, եթե մեծ քանակությամբ տիպական օրինակներ են բերվում:

Իսկ իրադրային արժեքը հաշվի առնելու սկզբունքի պարագայում ակնհայտ է, որ նպատակահարմար է այն կիրառել ոչ թե վերլուծական, այլ հաղորդակցական ուղղվածության առաջադրանքներ կատարելիս: Ահա դարձվածային միավորների մի շարք ցայտուն օրինակներ.

- faire d'une pierre, deux coups - միանգամից երկու արդյունքի հասնել մեկ գործողությամբ (բառացի՝ երկու հարված կատարել մեկ քարով),
- jeter une pierre dans le jardin de qn - քննադատել ինչ-որ մեկին (բառացի՝ քար նետել մեկի այգին),
- la face cachée de l'iceberg - իրավիճակի թաքնված, չերևացող կողմին անդրադառնալը (բառացի՝ այսբերգի թաքնված մասը),
- rien de nouveau sous le soleil - նոր կամ անսպասելի բան տեղի չունենալը (արևի տակ նոր բան չկա),
- avoir du bien au soleil - անշարժ գույք ունենալ (բառացի՝ արևի տակ ունեցվածք ունենալ),
- le soleil brille (luit) pour tout le monde - կան որոշակի առավելություններ, որոնցից յուրաքանչյուրը կարող է օգտվել (բառացի՝ արևը փայլում է բոլորի համար),
- décrocher la lune - հասնել անհնարինին (բառացի՝ ստանալ լուսինը),
- voir la lune en plein jour - հավատալ անհավանական բաների (բառացի՝ լուսինը տեսնել օրը ցերեկով),
- être sur le sable - տնտեսապես ծանր վիճակում լինել (բառացի՝ ավազի վրա լինել),
- avoir du sable dans les yeux - ուզենալ քնել (բառացի՝ աչքերում ավազ ունենալ),

- briser (rompre) la glace - առաջին քայլը կատարել, հանել լարվածությունը և սկսել զրույցը (բառացի՝ սառույցը կոտրել):

Նշված սկզբունքները հաշվի առնելով՝ դարձվածային միավորների ուսուցման նախնական փուլում ուսանողներին ներկայացնում ենք ֆրանսերեն դարձվածային միավորների տեսակները, ծագումնաբանությունը, դրանց հիմնական դասակարգումները:

Ուսուցման հաջորդ փուլում ներկայացնում ենք ռճաժանրային տարբեր առանձնահատկություններ ունեցող ֆրանսերեն բնագրերում դարձվածային միավորների գործառույթները:

Նպատակահարմար է ուսուցման ցանկացած փուլում ուսանողներին առաջարկել ֆրանսերեն բնագրեր: Ընթերցանության նախնական փուլում ուսանողներն ընդգծում են անձանոթ բառերն ու արտահայտությունները: Հաջորդ փուլում ուսանողներն աշխատանք են կատարում միայն անձանոթ բառերի և արտահայտությունների ուղղությամբ: Նպատակն է առանձնացնել դարձվածքները: Կարևոր սկզբունք է նաև այն, որ տեքստերի բնագրայնությունն ապահովվի դրանցում խոսակցական բառապաշարի առկայությամբ: Ընդ որում՝ այդ պարագայում նախապատվությունը պետք է տրվի բնագրի հաղորդակցական ներուժին: Հաղորդակցությանը խոչընդոտող դարձվածքները պետք է ներմուծել անհրաժեշտ ծանուցումներով: Օրինակ՝ découvrir l'Amérique - Ամերիկա հայտնագործել, la nouvelle Babylone - նոր Բաբելոն:

Առաջինը հայերենում կիրառվում է, իսկ երկրորդը՝ հազվադեպ, քանի որ նոր Բաբելոն նշանակում է ֆրանսերենում նշանակում է Փարիզ: Դժվարություն է ներկայացնում, օրինակի համար, նաև «Paris vaut bien une messe» (բառացի՝ «Փարիզը մի պատարագ արժե») դարձվածային միավորը, քանի որ այն նշանակում է՝ «մեծ կամ արժեքավոր նպատակի համար արժե զիջումներ անել»: Արդյունավետ կլինի բացատրությունը նույնպես տալ ֆրանսերեն:

Վերլուծական առաջադրանքներից կարելի է առանձնացնել փոխառությունների, և՛ պատճենումների ճանաչմանը և՛ վերլուծությանը միտված աշխատանքները: Հաշվի առնելով այն փաստը, որ դարձվածային փոխառությունների և պատճենների մեծ մասը վերաբերում է հունարենին և լատիներենին, արդյունավետ է գտնել դրանց հայերեն տարբերակները:

Ուսուցման ընթացքին կնպաստի, եթե հաշվի առնվի նաև դարձվածքների առաջացման ժամանակագրությունը: Ըստ այդմ՝ առանձնանում են անտիկ դիցաբանական դարձվածային միավորներ, հունարենի զարգացման միջին շրջանին վերաբերող դարձվածքներ և լատինական ծագում ունեցող դարձվածային միավորները:

Այդ առումով դժվարություն է առաջանում բնագրերի ընտրության հարցում, քանի որ տարբեր ժամանակաշրջաններին վերաբերվող բնագրերը վերլուծելիս դժվար է գտնել ամեն ժամանակաշրջանին համապատասխանող տեքստեր: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կարելի է առաջարկել ուսանողներին ցանկացած տեքստ՝ նրանց հանձնարարելով կոահել դարձվածքի ծագման ժամանակաշրջանը կամ գտնել դրանց ծագումնաբանությանը վերաբերող տեղեկատվություն բառարաններում: Կարևորվում է նաև դրանց հետ աշխատանքի ընթացակարգերի մշակումը, որով առաջարկվում է ամեն մի դարձվածային միավոր ներմուծել համապատասխան բնագրով՝ հաշվի առնելով այն փաստը, որ ֆրանսերեն (և ոչ միայն) դարձվածքների հիմնական աղբյուրներն են Աստվածաշունչը, ժողովրդական հավատալիքները և լեգենդները, և, իհարկե, դասական համարվող գրական գործերը:

Ֆրանսերեն դարձվածքների ծագման ժամանակաշրջանը որոշելու կարևոր սկզբունք է, երբ «կառուցվածքային և իմաստային առումով վաղ շրջանի դարձվածային միավորները տարբերվում են բաղադրիչի ավելի պարզ կազմով, արխաիզմների և հնացած հասկացությունների առկայությամբ, իմաստային մեկնաբանության մի քանի տարբերակների հնարավորությամբ, որը պայմանավորված է նախնական իմաստի թուլացմամբ: (Беданоккова, 2007, էջ 1-6):

Օրինակ՝ ներկայացված են հետևյալ դարձվածքները՝

- La corne d'Amalthée - Ամալտեյի եղջրափող (Ամալտեյի եղջրուրից հոսում են առատություն և բարիքներ. հարստության ու բարգավաճման խորհրդանիշ),
- La flèche de Cupidon - Կուպիդոնի նետ (սիրո նետ. խորհրդանշում է սիրահարվել կամ սիրո զգացմունք առաջացնել):
- Les liens d'Hyménée - Հիմենեյի կապերը (ամուսնության կապեր կամ ամուսնական կապեր. կապված է հունական ամուսնության աստված Հիմենեյի հետ):
- Les jardins suspendus de Sémiramis - Շամիրամի կախովի այգիները (Միջագետքում հայտնի կախովի այգիները, որոնք Շամիրամի անունով են կոչվում, խորհրդանշում են շքեղություն կամ բացառիկ գեղեցկություն):
- Le fil d'Ariane - Արիանդայի թել (խորհրդանշում է ելք գտնել դժվարին իրավիճակներում կամ առաջնորդության միջոց, ինչպես Արիանդեն Թեսևսին օգնեց դուրս գալու լաբիրինթոսից):

Հետո ուսանողներն առանձնացնում են այն դարձվածքները, որոնք հաճախակի են հանդիպում հայերենում: Հետո նրանք փորձում են

վերլուծել հայերենում գրեթե չկիրառվող ֆրանսերեն դարձվածքները: Հաջորդ փուլում տրված դարձվածքներով նրանք արդեն կազմում են նախադասություններ և փորձում են դրանք ֆրանսերեն մեկնաբանել:

Ուսանողներին հետաքրքրում է, երբ զուգահիշ ներկայացվում են նույնակառուցվածք կամ նման կառուցվածք ունեցող հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն և կամ գերմաներեն դարձվածքներ: Օրինակ՝ հայերը, ռուսները և ֆրանսիացիներն ասում են «մազից կախված լինել» (ռուս. висеть на волоске, ֆրանս. ne tenir qu'à un cheveu), մինչդեռ անգլիացիներն ու գերմանացիները՝ «թելից կախված լինել» (անգլ. hang by / on / upon a thread, գերմ. an einem Faden hängen) (Բեդիրյան, 1973, էջ 73):

Կարևոր է հաշվի առնել նաև դարձվածքների փոխներթափանցման և դրական փոխարկման դրսևորումները, այն առումով, որ հատկապես հին հունական լեզենդներում, առասպելներում, էպոսներում շրջանառվող մի շարք դարձվածքներ հայախոս ուսանողները հեշտությամբ են մեկնաբանում: Համատեքստում նրանց համար դժվար չէ գտնել, ճանաչել և վերլուծել այդ ժամանակաշրջանի վերաբերող դարձվածքները: Օրինակ՝ Կարթագենի պատմությունը իմացող մարդը հեշտությամբ է մտապահում Carthage doit être détruite - Կարթագենը պետք է ավերվի / կործանվի դարձվածքը: Նույնը վերաբերում է passer le Rubicon - Ռուբիկոնն անցնել դարձվածքին (նշանակում է «ճակատագրական քայլ անել») և այլն:

Հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել ժամանակակից ֆրանսերենի բառապաշարի մասին ընդհանրապես և դարձվածապաշարի մասին մասնավորապես, եթե հանգամանորեն չենք ուսումնասիրում աստվածաշնչյան ծագում ունեցող անուններ պարունակող դարձվածային միավորները: Դրանց ներմուծումը նույնպես հաստատում է դարձվածային միավորների ընտրության դիդակտիկական մատչելիության սկզբունքի արդյունավետությունը: Այսպես, *Nous sommes tous des enfants d'Adam, d'Ève* - սկսել Ադամից կամ սկսել Ադամից ու Եվայից, որ նշանակում է «աշխարհի սկզբից, շատ հեռավոր ժամանակներից կամ դեպքերից սկսել որևէ պատմություն», «շատ հեռվից սկսել. ավելորդ մանրամասնություններով համեմել որևէ պատմություն» (Սուքիասյան, Գալստյան, 1975, էջ 2): Ֆրանսերեն բացատրությունը օգնում է ուսանողներին՝ ճիշտ հասկանալու տվյալ դարձվածքի նշանակությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ նկարագրված ձևով դարձվածային միավորների ներմուծումն օգնում է ուսանողներին՝ առանձնացնելու տվյալ դարձվածքի մշակութային, ազգամշակութային բաղադրիչը:

Արդյունավետ է նաև հայերենից ֆրանսերեն ճանապարհով անցնելու հնարը: Այս դեպքում հարկավոր է ներմուծել հայերեն որևէ անձնանունով դարձվածք և առաջարկել, որ ուսանողները գտնեն դրանց ֆրանսերեն համարժեքները: Օրինակ՝ *Կայենի դրոշմ - Marque de Caïn*, *Կայենի զավակներ - Enfants de Caïn*, *Կայենի սպանություն - Le meurtre de Caïn*, *Կայենի մարդ - Un homme de Caïn*, Կայենից ավելի վատ - *Plus méchant que Caïn*:

Անշուշտ, ֆրանսերենի իմացության պատշաճ մակարդակից բացի ուսանողները պետք է ընդհանուր զարգացման որոշակի մակարդակ ունենան: Նկատելի է, որ ուսանողներից շատերը չեն ճանաչում ո՛չ հայերեն և ո՛չ էլ ֆրանսերեն աստվածաշնչյան բազմաթիվ դարձվածքներ: Օրինակ՝ հայ. *ամենաբեսաչք* - ֆրանս. *œil omniprésent* կամ ավելի հաճախ կիրառվող *œil de Dieu*, հայ. *Աստու գառ* - ֆրանս. *agneau de Dieu* (Բեդիրյան, 2016, էջ 17, 29):

Այս առումով նպատակահարմար է ուսանողներին առաջարկել, որ նրանք ձեռք բերեն հայերեն և ֆրանսերեն Աստվածաշունչը: Աստվածաշունչը տարբեր լեզուներով հասանելի է նաև համացանցում, ուստի ուսանողները կարող են դրանք ընթերցել էլեկտրոնային տարբերակներով, քանի որ ընդհանուր հենքային գիտելիքների բացակայությունը կամ ոչ բավարար լինելը կարող է մշտապես խոչընդոտել տվյալ լեզվի դարձվածային միավորների ուսուցմանը և յուրացմանը:

Հին աշխարհի դիցաբանությունից ծագած դարձվածքների պարագայում ևս նույն վիճակն է: Պատշաճ ընդհանուր գիտելիքների առկայության պայմաններում միայն կարող ենք խոսել դարձվածքները լիարժեք հասկանալու մասին: Օրինակներ՝ *l'épée de Damoclès* - դամոկլյան սուր, *le lit de Procuste* - պրոկրուստյան մահիճ, *les cuves d'Augias* - ավգյան ախոռ, *les Colonnes d'Hercule* - հերկուլեսյան սյուներ, *le talon d'Achille* - աքիլեսյան գարշապար, *le travail de Sisyphe* - սիզիֆյան աշխատանք, *l'arpa éolienne* - էոլայի տավիղ, *le serment d'Hannibal* - հաննիբալյան երդում, *la victoire de Pyrrhus* - պյուռոսյան հաղթանակ: Այս կարգի դարձվածքների ուսուցումը պետք է սկսել Ն. Կունի «Հին Հունաստանի լեզենդերն ու առասպելները» գրքի ընթերցումից հետո միայն: Կարծում ենք, որ ուսանողներին սա կարող է հանձնարարվել ինքնուրույն աշխատանքի շրջանակներում: Եվ առհասարակ դարձվածքների ծագման կամ ստուգաբանության հարցը օգտակար կլինի ոչ միայն լեզվի (լեզուների) ուսուցման առումով:

Հաշվի առնելով այն փաստը, որ ֆրանսերեն դարձվածային միավորների ուսուցման հիմնական նպատակներից մեկը

հաղորդակցական կարողությունների զարգացումն է, խնդիր է դրվում դարձվածքների ուսուցմամբ զարգացնել ուսանողների բոլոր լեզվական հմտությունները՝ խոսել, գրել, ընթերցել և ունկնդրել: Գաղտնիք չէ, որ հատկապես ունկնդրելու կարողությունը դասախոսները չեն զարգացնում դարձվածքների միջոցով: Շատ դեպքերում անգամ ուսուցման ավարտական փուլում ուսանողները դարձվածային միավորները ճիշտ հնչեցնանգով չեն արտասանում:

Կարևոր սկզբունք է դարձվածքների ուսուցման մեջ սովորողների խոսքն ավելի լակոնիկ դարձնելը: Կարելի է այն անվանել դարձվածային միավորի կիրառման միջոցների տնտեսման սկզբունք: Նշվում է դարձվածային միավորների միջոցով խոսքը հակիրճ, սեղմ դարձնելու գործառույթը: Այդ գործառույթը հիմնականում կատարում են գեղչված բաղադրիչներով դարձվածային միավորները: Օրինակ՝ Réaliser quelque chose - ինքն իրեն հաշիվ տալ - Ne réalises-tu pas que tu es amoureuse de lui? Լեզվական միջոցների տնտեսման սկզբունքի կիրառման շնորհիվ սովորողները գործ են ունենում «կրճատված կամ գեղչված» բաղադրիչներով բազմաթիվ դարձվածային միավորների հետ: Դրանց ներմուծումն արդյունավետ է նախ այն պատճառով, որ դրանք հիմնականում գործածվում են խոսակցական լեզվում:

Արդյունավետ է նաև ֆրանսերեն դարձվածային միավորները հուզազգայական մթնոլորտում կիրառելու մոտեցումը: Դա ենթադրում է այնպիսի դարձվածքների կիրառում, որոնք ստեղծում են դրական կամ բացասական հուզազգայական մթնոլորտ: Ուսանողը պետք է կարողանա դրանց միջոցով ցույց տալ իր վերաբերմունքը, զարմանքը, զայրույթը և այլն: Օրինակ՝ *ajouter de l'huile sur le feu* - կրակին յուղ լցնել, *sucer le sang* - արյունը ծծել, *briser le cœur* - սիրտը կոտրել:

Եզրակացություններ

Դարձվածային միավորների ուսուցումը կարևոր նշանակություն ունի ուսանողների հաղորդակցական կարողությունների զարգացման համար: Լեզուների դասավանդման մեթոդիկայի մեջ ընդհանուր առմամբ առանձնացնում են դարձվածային միավորների ընտրության տարբեր չափանիշներ՝ թեմատիկ, հաղորդակցական արժեքի, լեզվամշակութաբանական, հաճախականության, կիրառելիության, հոմանիշների բացառման և համարժեքության:

Դարձվածային միավորների ուսուցողական նպատակներով ընտրության կարևոր սկզբունք է բնագրայնությունը, որը ենթադրում է դրանք ընտրել գեղարվեստական բնագրերում: Այն ինչ-որ տեղ հիմնավորում է գիտակցականության սկզբունքի արդյունավետությունը և

կիրառվում է վերլուծական մակարդակում: Այդ համատեքստում կարևորվում է ոչ միայն բառապաշարի, այլև դարձվածային պաշարի՝ դարձվածանու նվազագույնի ընտրության սկզբունքները: Այդ սկզբունքները կարելի է դիտարկել տարբեր՝ ընդհանուր դիդակտիկական, մասնավոր մեթոդական, լեզվաբանական մակարդակներում:

Ակնհայտ է, որ առաջին պլան են մղվում դիդակտիկական գննականության, մատչելիության, հաջորդականության, կայունություն, գիտականության, գիտակցականության սկզբունքները:

Դարձվածային միավորների ընտրության կարևոր սկզբունք է հայեցակերպային մոտեցման կիրառումը, որը շեշտադրում է դարձվածքների ուսումնասիրության այս կամ այն՝ մշակութային, միջմշակութային, գործաբանական, ճանաչողական հայեցակերպը:

Դարձվածքների ընտրության սկզբունքները պետք է հնարավորիս չհակասեն նվազագույն բառապաշարի ընտրության սկզբունքներին: Այդուհանդերձ, միշտ չէ որ հնարավոր է դարձվածքներն ընտրել բառապաշարի նվազագույնի ընտրության սկզբունքներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

REFERENCES

1. Բադիկյան Խ. Գ. (1986), Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները (կառուցվածքային վերլուծություն), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 356 էջ:
Badikyan X. G. (1986), Jhamanakacic hayereni dard'vac'ayin miavorneri' (kar'owcvac'qayin verlowc'owt'yown), Erevan, Haykakan SSH GA hrat., 356 e'j: (in Armenian)
2. Բեդիրյան Պ. (2007), Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության, Երևան, «Ասողիկ», 128 էջ:
Bediryan P. (2007), Aknarkner jhamanakacic hayereni dard'vac'abanowt'yan, Erevan, «Asoghik», 128 e'j: (in Armenian)
3. Բեդիրյան Պ. Ս. (1973), Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, «Լույս», 232 էջ:
Bediryan P. S. (1973), Jhamanakacic hayereni dard'vac'abanowt'yown, Erevan, «Lowys», 232 e'j: (in Armenian)
4. Բեդիրյան Պ. Ս. (1982), Մայրենիի ուսուցման հարցեր, Երևան, «Լույս», 152 էջ:

- Bediryan P. S. (1982), *Mayrenii ousowcman harcer*, Erevan, «Lowys», 152 e'j: (in Armenian)
5. Բեդիրյան Պ. (2016), *Սուրբգրային թևավոր խոսքեր: Բառարան (ոուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն համարժեքներով)*, Երևան, 174 էջ:
Bediryan P. (2016), *Sowrbgrayin t'avor xosqer: Bar'aran (r'owseren, angleren, franseren, germaneren hamarjheqnerov)*, Erevan, 174 e'j: (in Armenian)
6. Դարաբյան Մ. Ա. (2010), *Անգլերենի դարձվածային միավորների ուսուցման հիմնախնդիրն օտար լեզուների ֆակուլտետի դպրոցում (թեկն. առենախոսություն)*, Երևան, 163 էջ:
Darabyan M. A. (2010), *Anglereni dard'vac'ayin miavorneri ousowcman himnaxndirn o'tar lezowneri fakowlteti dprocowm (t'ekn. atenaxosowt'yown)*, Erevan, 163 e'j: (in Armenian)
7. Սուքիասյան Ա. Մ. (1975), Գալստյան Ս. Ա, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 634 էջ:
Sowqiasyan A. M. (1975), Galstyan S. A, *Hayoc lezvi dard'vac'abanakan bar'aran*, Erevan, *Erevani hamalsarani hrat.*, 634 e'j: (in Armenian)
8. Беданокова С. К. (2007), *Фразеологические единицы с латинскими компонентами в современном французском языке / «Вестник АГУ», выпуск 4 (207), с. 1-6.*
Sowqiasyan A. M. (1975), Galstyan S. A, *Hayoc lezvi dard'vac'abanakan bar'aran*, Erevan, *Erevani hamalsarani hrat.*, 634 e'j: (in Russian)
9. Белая Е. Н. (2021), *Комплексное исследование национально-культурной специфики английских, французских и русских фразеологических единиц с компонентом «собака» // Коммуникативные исследования, т. 8, № 2, с. 265-280.*
Belaja E. N. (2021), *Kompleksnoe issledovanie nacional'no-kul'turnoj specifiki anglijskih, francuzskih i russkih frazeologicheskix edinic s komponentom «sobaka» // Kommunikativnye issledovanija, t. 8, № 2, s. 265-280.* (in Russian)
10. Губич П. А., Петрушевская Ю. А. (2022), *Фразеологические единицы в учебном пособии по иностранному языку // Фразеология и паремиология на пересечении эпох / Сборник научных статей, Гомель, ГГУ им. Ф. Скорины, с. 43-48.*

- Gubich P. A., Petrushevskaja Ju. A. (2022), Frazеologicheskie edinicy v uchebном posobii po inostrannomu jazyku // Frazеologija i paremiologija na peresechenii jepoh / Sbornik nauchnyh statej, Gomel', GGU im. F. Skoriny, s. 43-48. (in Russian)
11. Жуков А. В. (2010), О системности фразеологии / Мир русского слова. №3, с. 21-27.
Zhukov A. V. (2010), O sistemnosti frazeologii / Mir russkogo slova. №3, s. 21-27. (in Russian)
12. Лиходкина И. А. (2015), Фразеологизмы как элемент разговорной речи и особенности их перевода (Французско-русские параллели) / Филологические науки. Вопросы теории и практики, Тамбов, Грамота, №8 (50), ч. 1, с. 113-116.
Lihodkina I. A. (2015), Frazеologizmy kak jelement razgovornoj rechi i osobennosti ih perevoda (Francuzsko-russkie paralleli) / Filologicheskie nauki. Voprosy teorii i praktiki, Tambov, Gramota, №8 (50), ch. 1, s. 113-116. (in Russian)
13. Морковкин В. В., Шахсуварова Э. М. (1984), О фразеологическом минимуме для начального этапа обучения иностранцев русскому языку // Русский язык для студентов-иностранцев, вып. 23, Москва, с. 98-112.
Morkovkin V. V., Shahsuvarova Je. M. (1984), O frazeologicheskom minimume dlja nachal'nogo jetapa obuchenija inostrancev russkomu jazyku // Russkij jazyk dlja studentov-inostrancev, vyp. 23, Moskva, s. 98-112. (in Russian)
14. Назарян А. Г. (1968), Почему так говорят по-французски. Москва, Наука, 349 с.
Nazarjan A. G. (1968), Pochemu tak govorjat po-francuzski. Moskva, Nauka, 349 s. (in Russian)
15. Ghambarian V., Kaplanian A. (2007), Manuel de français, Erévan, Lingva, 184 p.
16. Rey A., Chantreau S., (1989) Dictionnaire Des Expressions Et Locutions-Le Robert, 1333 p. (<https://www.scribd.com/document/764648040/Les-Usuels-Du-Robert-Alain-Rey-Sophie-Chantreau-Dictionnaire-Des-Expressions-Et-Locutions-Le-Robert-1989>)
17. Stepanian V., (2005), À la découverte du texte, Erévan, Lingva, 177 p.

АШХЕН ГЮРДЖИНЯН - КРИТЕРИИ И ПРИНЦИПЫ ОТБОРА ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ В РАМКАХ ПРОФЕССИОНАЛЬНОГО КУРСА ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА

Ключевые слова: коммуникативная ценность, лингвокультурологическая ценность, принцип частотности, принцип применимости, принцип исключения синонимов, языковая культура, разговорная лексика

В данной статье рассматриваются критерии и принципы отбора единиц французского языка с учетом целей и задач профессионального курса французского языка. Анализ критериев и принципов отбора фразеологических единиц французского языка подкреплен соответствующими типичными примерами.

Освещается проблема структурно-семантической эквивалентности и несоответствия между родным и изучаемым языками. При определении принципов отбора фразеологических единиц учитывались трудности, возникающие в процессе их изучения и усвоения. Пристальное внимание уделялось изучению разговорной лексики, так как она является основным источником фразеологизмов.

В ходе обучения фразеологическим единицам возникает проблема овладения не только языковыми, но и ментально-мыслительными единицами. В этом контексте на первый план выходят фразеологические концепты. Акцент сделан на использовании концептуального подхода при анализе фразеологизмов, поскольку он предоставляет возможность рассмотрения французских фразеологизмов в рамках их семантико-ассоциативного поля.

Подчеркивается идея о том, что система преподавания французских фразеологизмов имеет не только коммуникативную, но и аналитическую направленность. Делается попытка соотнести фразеологический минимум с грамматическим, лексическим, тематико-ситуативным и страноведческим минимумами. Сделана попытка выявить содержательную и логическую связь основных критериев и принципов отбора французских фразеологизмов.

ASHKHEN GYURJINYAN - CRITERIA AND PRINCIPLES FOR THE SELECTION OF PHRASEOLOGICAL UNITS IN A PROFESSIONAL FRENCH LANGUAGE COURSE

Keywords: *communicative value, linguistic-cultural value, frequency principle, applicability principle, synonym exclusion principle, language culture, colloquial vocabulary*

The article examines the criteria and principles for selecting phraseological units in the French language, considering the goals and objectives of a professional French language course. The analysis of these criteria and principles is illustrated with relevant examples.

The article discusses the issue of structural-semantic equivalence and the mismatch between the native and target languages. When establishing principles for selecting idiomatic expressions difficulties encountered during the learning and mastery process are taken into consideration. Further, colloquial vocabulary is highlighted as the primary source of idiomatic expressions.

Learning idiomatic expressions involves not only mastering language units but also understanding underlying mental and conceptual frameworks. In this regard, idiomatic concepts are emphasized. A conceptual approach is suggested for analyzing idioms, enabling their study within their semantic-associative fields.

The system for teaching French idioms is characterized by both communicative and analytical orientations. . An attempt is made to correlate the idiomatic minimum with grammatical, lexical, thematic-situational, and country studies minimums.

Additionally, the article aims to identify the substantive and logical connections among the main criteria and principles for selecting French idioms.

Ներկայացվել է՝ 17.09.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.11.2024 թ.

**ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ
(«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Համառոտագիր

Ժամանակակից կրթության կարևոր առաքելություններից մեկը բազմակողմանի զարգացած, քննադատական, ստեղծագործական, հաղորդակցական հմտություններով օժտված անհատների ձևավորումն է, որոնք կկարողանան լուծել խնդիրներ և առաջ քաշել նոր գաղափարներ: Այդ նպատակին հասնելու համար կիրառվող կրթական արդիական մոտեցումներից է «միջառարկայական (միջգիտակարգային)» ուսուցումը, որն էլ հոդվածի ուսումնասիրության առարկան է: Միջառարկայությունը կրթական բազմազան մոտեցումների, մեթոդների, գիտելիքների միավորումն է, որի նպատակն է տարաբնույթ խնդիրների ավելի խոր ըմբռնումը, բազմակողմանի հետազոտությունը, նոր լուծումների փնտրտուքը: Հոդվածի նպատակն է ցույց տալ դասավանդման մեթոդիկայում միջառարկայական ուսուցման դերը: Միջառարկայական մոտեցումը նպաստում է գիտական աշխարհայացքի ընդլայնմանը, քանի որ հետազոտությունները կառուցվում են մեկ և ավելի գիտակարգերի շրջանակում: Ընդհանրապես, աշխարհում տեղի ունեցող բազմակողմանի փոփոխությունները և առկա բարդ խնդիրների լուծումները պահանջում են տարբեր ոլորտների մասնագետների երկխոսություն և սերտ համագործակցություն: Կրթական ոլորտն, այս տեսանկյունից, առաջնային հարթակ է:

Հոդվածում, բացի միջառարկայական ուսուցման սկզբունքների ընդհանուր վերլուծությունից, ներկայացվել է միջառարկայության կիրառման հաջող փորձ՝ Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանում իրականացված «Հայոց պատմություն» և «Հայոց լեզու և գրականություն» միջառարկայական նախագծի օրինակով:

Հիմնաբառեր՝ միջառարկայական ուսուցում, կրթական մոտեցում, մեթոդ, հետազոտություն, միջառարկայական կապեր, հմտությունների զարգացում:

Ներածություն

Հոդվածի նպատակն է հետազոտել և ներկայացնել կրթության մեջ միջառարկայական մոտեցումը՝ ցույց տալով, թե ինչպես են նման հետազոտությունները նպաստում սովորողների մոտ ընկալունակության բարձրացմանը, հմտությունների և կարողունակությունների զարգացմանը: Միջառարկայությունը կիրառվել է գրեթե բոլոր ժամանակներում, դեռևս հին հունական և հռոմեական կրթության մեջ, արևմտաեվրոպական դպրոցներում, ամերիկյան կրթական հաստատություններում, սակայն իր գիտական հիմնավորվածությունը ստացել է 20-րդ դարում: (https://books.google.am/books?id=4uM8fjxhjqs_C&pg=PA19&hl=ru&source=gbp toc r&cad=2#v=onepage&q=20th%20century&f=false):

Հայկական կրթական միջավայրին ևս խորթ չէր տարբեր առարկաները փոխկապակցության մեջ դասավանդելու մոտեցումը: Վարդապետարաններում դասավանդվել են յոթ ազատ արվեստները՝ եռյակ (Trivium) և քառյակ (Quadrivium): Հայ մեկնիչները, օգտվելով իրենց ստացած ահռելի գիտական պաշարից, փորձել են իրենց մեկնություններում օգտագործել մոտեցում, որը շատ նման է ժամանակակից միջգիտակարգային մեթոդին:

Հոդվածի խնդիրներն են՝ ուսումնասիրել և ընդհանուր գծերով ներկայացնել միջառարկայական ուսուցման փիլիսոփայությունը, ռազմավարությունը, միջառարկայական հետազոտական աշխատանքների միջոցով սովորողների ստեղծագործական հմտությունների, քննադատական մտածողության, համագործակցային կարողությունների զարգացումն ու տարբեր ոլորտի մասնագետների համագործակցությունը՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Հայագիտության ամբիոնի կողմից իրականացված «Հայոց պատմություն» և «Հայոց լեզու և գրականություն» միջառարկայական նախագծի օրինակով:

Մեր խնդիրն է ցույց տալ միջառարկայական հետազոտական նախագծերի կիրառման կարևորությունը բուհերում: Իսկ միջառարկայական կապերի գործածումն, ընդհանրապես, ցանկացած թեմայի ուսուցման մեջ նաև Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների պահանջներից է:

Հողվածի արդիականությունը

Միջառարկայական ուսուցման թեմայի հետազոտությունն այսօր արդիական է, քանի որ այն ժամանակակից կրթական գործընթացի կարևոր բաղադրիչներից է և նպաստում է կրթության արդյունավետության բարձրացմանը:

Միջառարկայական հետազոտական աշխատանքը բարձրացնում է գիտական գիտելիքների ընկալման և յուրացման աստիճանը, դրա արդյունքում զարգանում են սոցիալական հմտությունները և խրախուսվում է թիմային աշխատանքը, քանի որ ուսանողները հաճախ աշխատում են խմբերով և համագործակցում միմյանց հետ (<https://www.researchgate.net/publication/332464968> **TRANSDISCIPLINARN OST V VYSSEM OBRAZOVANII EKSPERTNYE OCENKI PROBLEMY I PRAKTICESKIE RESENIA TRANSDISCIPLINARITY IN HIGHER EDUCATION EXPERT ASSESSMENTS PROBLEMS AND PRACTICAL SOLUTIONS**):

Սույն հողվածում ուսումնասիրվող թեման և դրույթները կարող են ունենալ **տեսական և գործնական/կիրառական նշանակություն** դասախոսների, ուսուցիչների, միջառարկայական ուսուցմամբ հետաքրքրված հետազոտողների, կրթական ծրագրերի կազմակերպիչների և սովորողների համար՝ ուսումնական գործընթացում միջառարկայական նախագծերի մշակման, համագործակցության զարգացման և կրթության արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Միջառարկայական ուսուցման փոփոխությունը.

Միջառարկայությունը կրթական մոտեցում է, որը նախատեսում է միավորել տարբեր գիտակարգեր մեկ ընդհանուր նպատակին հասնելու համար: Այն սովորողին հնարավորություն է ընձեռում հետազոտվող նյութի վերաբերյալ միավորել մեկից ավելի առարկաներից ձեռք բերած գիտելիքները՝ արդյունքում ամբողջական պատկեր ունենալու և առաջադրված խնդիրները լուծելու նպատակով: (https://educa.fmleao.pt/wp-content/uploads/2022/02/Educa_6_111-126.pdf):

Այսպիսի նախագծերի իրականացման գործընթացում սովորողների համար ավելի տեսանելի են ոլորտների փոխհարաբերությունները. նրանք կարողանում են համեմատել և հակադրել տարբեր տեսակետներ:

Առանց միջառարկայական կապերի բացահայտման՝ դժվար է հասկանալ օբյեկտիվ աշխարհի առարկաների, երևույթների փոխկապակցություններն ու փոխազդեցությունները, և կրթության բովանդակության կառուցվածքային միասնության սկզբունքին համապատասխան՝ բոլոր առարկաները պետք է դիտել ինտեգրացիայի (միավորման) օրենքով (Ստեփանյան, 2015, էջ 81):

Նպատակը

Միջառարկայական ուսուցման նպատակն է՝

- հետազոտության մեջ միավորել և կիրառել տարբեր գիտակարգերում կիրառվող բազմազան մեթոդներ, մոտեցումներ, (<https://www.researchpublish.com/upload/book/INTERDISCIPLINARY%20APPROACH-5937.pdf>),
- լուծել բարդ խնդիրներ, որոնք անհնար է իրականացնել մեկ գիտակարգի շրջանակում,
- գտնել նորարար մոտեցումներ խնդիրների լուծման համար,
- զարգացնել քննադատական մտածողությունը,
- խթանել ստեղծարարությունը,
- գիտելիքների համադրմամբ հասկանալ, թե ինչպես են տարբեր գիտություններն ու ոլորտները փոխկապակցված միմյանց, ըմբռնել միջառարկայական կապերը (https://www.researchgate.net/publication/332464968_TRANSDISCIPLINAR_NOST_V_VYSSEM_OBRAZOVANII_EKSPERTNYE_OCENKI_PROBLEMY_I_PRAKTICESKIE_RESENIA_TRANSDISCIPLINARITY_IN_HIGHER_EDUCATION_EXPERT_ASSESSMENTS_PROBLEMS_AND_PRACTICAL_SOLUTIONS),
- բացահայտել և զարգացնել սեփական կարողությունները և հմտությունները (մասնավորապես, հետազոտական և համագործակցային),
- շեշտադրել հետադարձ կապը:

Ընդհանրապես, ինտեգրված դասերը նպաստում են սովորողների բազմակողմանի զարգացմանը, քանի որ նմանատիպ դասերի ընթացքում սովորողները պարբերաբար սկսում են կապ հաստատել տարբեր առարկաների, երևույթների, հասկացությունների միջև, նրանք սկսում են աշխարհը դիտարկել որպես մեկ ամբողջություն: Սրա շնորհիվ սովորողները ստանում են աշխարհի հոլիստիկ՝ ամբողջական պատկերը, որը հնարավորություն է տալիս հասկանալու համակարգը որպես իրար հետ փոխկապակցված ամբողջություն (Միլիտոսյան Լ., Գաբրիելյան Ա., Ինտեգրված դասերի դերն ամբողջական աշխարհայացքի զարգացման գործընթացում, 2021, էջ 88):

Միջառարկայական նախագծերի պլանավորում և իրականացում.

Միջառարկայական նախագծերի իրականացման համար անհրաժեշտ է՝

- աշխատանքային թիմի ձևավորում (տարբեր առարկաների փորձառու մասնագետների ներգրավում) և համագործակցություն,
- իրականացվող նախագծի նպատակի և հետազոտության հիմնական գաղափարի սահմանում,

- ուսումնական բնագավառների ճշգրտում (տարբեր առարկաներ դասավանդող մասնագետներն ընտրում են իրենց թեմաները, որոնց վերաբերյալ իրականացվելու է հետազոտությունը),
- հետազոտական մեթոդների համատեղում,
- աշխատանքի ընթացքի և արդյունքների մշտադիտարկում,
- հետազոտական աշխատանքի համար նախատեսված ժամաքանակի հստակեցում,
- հետադարձ կապ՝ անդրադարձ կատարված աշխատանքին, ուժեղ և թույլ կողմերի վերհանում, աշխատանքի որակի բարելավմանն ուղղված առաջարկությունների քննարկում (https://www.ibo.org/globalassets/new-structure/brochures-and-infographics/pdfs/myp-brief-interdisciplinary-learning_en.pdf):

Միջառարկայական ուսուցման արդյունքում ձեռք են բերվում նոր գիտելիքներ տարբեր ոլորտներից, բարձրանում է հետազոտության որակը, զարգանում են համագործակցային հմտությունները: Բացի այդ՝ հետազոտության արդյունքը, կախված ոլորտից, կարող է ունենալ կարևոր կիրառական նշանակություն: (http://publications.azimpremjiifoundation.org/2097/1/10_THE%20POWER%20OF%20AN%20INTER-%20DISCIPLINARY%20APPROACH%20TO%20SCIENCE%20EDUCATION%20%26%20RESEARCH.pdf):

Միջառարկայական նախագծերի դասակարգման տարբեր մոտեցումներ կան: Առաջինը միջգիտակարգային մոտեցումն է, որի էությունը տարբեր առարկաներից գիտելիքների և մեթոդների միավորումն է: Երկրորդ մոտեցումը կոչվում է վերառարկայական (տրանսդիսցիպլինար). այս եզրույթն առաջին անգամ օգտագործել է շվեյցարացի հոգեբան և փիլիսոփա Ժան Պիաժեն, 1970 թ.: Նա առաջարկում է ստեղծել հետազոտությունների համար ավելի բարձր հարթակ՝ ընդհանուր մեթոդաբանական հիմքի վրա ակադեմիական գիտակարգերից դուրս ոլորտների ուսումնասիրության և բարդ խնդիրների լուծման նպատակով (https://www.researchgate.net/publication/332464968_TRANSDISCIPLINARNOST_V_VYSSEM_OBRAZOVANII_EKSPERT_TNYE_OCENKI_PROBLEMY_I_PRAKTICESKIE_RESENIA_TRANSDISCIPLINARITY_IN_HIGHER_EDUCATION_EXPERT_ASSESSMENTS_PROBLEMS_AND_PRACTICAL_SOLUTIONS): Միջառարկայական մոտեցումներից է նաև խաչաձև-առարկայականը, երբ մի առարկայի նյութը ուսումնասիրվում է մեկ այլ առարկայի շրջանակներում:

**«Հայոց պատմություն» և «Հայոց լեզու և գրականություն»
միջառարկայական նախագիծ
(Ինքնուրույն գործնական աշխատանք)**

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Թարգմանության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողների հետ իրականացվել է միջառարկայական նախագիծ՝ «Հայոց պատմություն» և «Հայոց լեզու և գրականություն» առարկաներից:

Միջառարկայական նախագծի նախնական փուլ

Նախագծի իրականացման սկզբում դասախոսները ընտրել են թեմաները, սահմանվել են հետազոտության նպատակը, վերջնարդյունքները, առաջադրանքի տիպերը, մեթոդները, ձևակերպվել է հետազոտության հիմնական գաղափարը: Սահմանվել են ժամկետներ:

Իրականացված հետազոտության հիմնական գաղափարն է՝ «Ինքնության պահպանումը որպես մարտահրավեր»: Քննվող հարցերի առանցքում են ազգային ինքնության կորուստը և ինքնության պահպանման կարևորությունը:

Նախագծի նպատակն է երկու գիտակարգերի համատեքստում հետազոտել առաջադրված թեման, ուսումնասիրել հետազոտության հիմնական գաղափարին առնչվող պատմական իրադարձությունները և ընտրված գրական ստեղծագործությունները, վեր հանել ազգային ինքնության դեմ մարտահրավերները, հիմնավորել ինքնության պահպանման կարևորությունը բոլոր ժամանակներում:

Նախագծի ղեկավարները ներածական դասախոսություն են ունեցել թեմայի վերաբերյալ: Ուսանողները բաժանվել են խմբերի, նրանց բացատրվել է հանձնարարությունը և տրամադրվել համապատասխան ռեսուրսները: Նախագծի տևողությունը 4-6 շաբաթ էր:

Միջառարկայական հետազոտությունը կատարվել է Հայոց պատմության 19-րդ դարի 80-ական թթ. մինչև 20-րդ դարասկիզբն ընկած պատմական նյութի շրջանակում:

Վերջնարդյունքների սահմանում. ուսանողը պետք է կարողանա՝

- Վերլուծել 19-րդ դարի 80-ական թթ. մինչև 20-րդ դարասկիզբն ընկած պատմական իրողություններն Արևմտյան Հայաստանում (խնդրո առարկա հետազոտության հիմնական գաղափարի շրջանակում):
- Քննել ցեղասպանության, բռնի իսլամացման, ազգային ինքնության նկատմամբ ոտնձգությունների դրսևորումները և հետևանքները:
- Վերլուծել ընտրված գրական ստեղծագործությունները և դրանցում առկա գաղափարները:

- Դիտարկել թեման արդի ժամանակաշրջանի լույսի ներքո. կա՞ն արդյոք այսօր մարտահրավերներ, որոնք սպառնալիք են ազգային ինքնության համար:
- Վերլուծել ինքնության համար պայքարի կարևորությունը՝ հիմնավորելով սեփական կարծիքը:
- Գնահատել ինքնության պահպանման գործում մշակութային ժառանգության և հայոց լեզվի դերը:
- Կարողանալ ժամանակակից հայերենի կանոններին համապատասխանող գրավոր և բանավոր խոսք ստեղծել, վերլուծել տեքստը՝ փաստարկելով տեսակետը:

Նախագծի հիմնական փուլ (հետազոտական աշխատանքի իրականացում).

«Հայոց պատմություն» առարկայի շրջանակում ուսանողներին հանձնարարվել է ուսումնասիրել հետևյալ թեմաները՝ Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության իրականացրած հայահալած քաղաքականություն, բռնի իսլամացում, Հայոց ցեղասպանություն: Աղբյուրների ցանկում գետեղել ենք թեմայի վերաբերյալ հետևյալ գրականությունը՝ «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակ, («Հայոց պատմություն», 2015), Ռ. Մելքոնյանի ուսումնասիրությունները հայերի իսլամացման վերաբերյալ (Մելքոնյան, 2009, Մելքոնյան, 2010), Ռ. Մելքոնյանի և Մ. Աբրահամյանի մենագրությունն Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության հայերի բռնի իսլամացման քաղաքականության վերաբերյալ (Մելքոնյան, Աբրահամյան, 2015), Արևմտյան Հայաստանում Օսմանյան օրենքների մասին («Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», Սաֆրաստյան Ա., Զուլալյան Մ., 1964) և Թաներ Աքչամի՝ հայերի բռնի իսլամացման պետական քաղաքականության մասին աշխատությունները (Թաներ, 2016):

«Հայոց լեզու և գրականություն»-ից ուսանողներին առաջարկվել է ուսումնասիրել ռումինահայ գրող Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյան», Մարկ Արենի «Վայրի վարդեր», Ֆեթիհյե Չեթինի «Մեծ մայրս», Այշե Գյուլ Ալթընայի և Ֆեթիհյե Չեթինի «Թոռներ» ստեղծագործությունները: Գրական ստեղծագործությունների ընթերցումը օգնում է սովորողին պատկերացնել, թե ինչպես է պատմությունն արտացոլվում գեղարվեստական գրականության մեջ, համեմատել պատմական փաստերն ու դրանց գեղարվեստական վերարտադրությունը և գեղարվեստորեն ընկալել պատմական միջավայրը: Որպեսզի ուսումնասիրվող նյութը դիտվի, ընկալվի, հասկացվեն նրա բոլոր կապերը (Ամիրջանյան, Սահակյան, 2005, էջ 332):

Հետազոտության համար անհրաժեշտ նյութերը տրվել են և՛ դասախոսների կողմից, և՛ հայթայթվել են ուսանողների կողմից: Հետազոտության համար տրամադրվել են պատմական փաստաթղթային նյութեր (Փափազյան, 1989), (Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1991): Պատմության դասավանդման ընթացքում պատմական փաստաթղթերի օգտագործումը նպաստում է պատմական գիտակցության և տրամաբանության զարգացմանը, սովորողների մոտ ձևավորում ինքնուրույն աշխատանքի հմտություններ (Պապոյան, 2013, էջ 174):

Հետազոտության համար կիրառվել են հետևյալ մեթոդները, եղանակներն ու հնարները՝ քննարկում և բանավեճ, զրույցի մեթոդն իր տարատեսակներով, համեմատություն և համադրություն, աշխատանք սկզբնաղբյուրներով, վերլուծություն, խմբային աշխատանք, թանգարանային հետազոտություն (ուսանողներն այցելել են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ):

Համադրելով «Հայոց պատմություն» և «Հայոց լեզու և գրականություն» առարկաներից ձեռք բերած գիտելիքները՝ հայերի բռնի իսլամացման, Հայոց ցեղասպանության ընթացքում ինքնության դեմ ոտնձգությունների և ազգային ինքնության պահպանման համար պայքարի վերաբերյալ, սովորողները պատրաստել են վերլուծական աշխատանք՝ ներկայացնելով սահիկաշարով և տեսանյութով: Աշխատանքում ցույց է տրվել, թե ինչպես է պատմական համատեքստը արտացոլվել գրական ստեղծագործություններում:

Միջառարկայական նախագծի գնահատման չափանիշների մեջ ներառվել են հետևյալ բաղադրիչները, որոնք ներկայացվել են ուսանողներին որպես կարևոր պահանջներ՝

- հետազոտության խորություն և ճշգրտություն,
- աշխատանքի տրամաբանական փոխկապակցվածություն,
- քննադատական մտածողություն,
- միջառարկայական կապերի արտացոլում,
- լեզվական գրագիտություն,
- հաղորդակցական հմտություններ,
- թիմային աշխատանք և պատասխանատվության բաշխում,
- S<S միջոցների կիրառում,
- ստեղծարարություն և ինքնուրույնություն,
- ինքնակառավարման հմտություն,
- ինքնաանդրադարձ (հետադարձ կապ) և ինքնագնահատում:

Միջառարկայական նախագծի եզրափակիչ փուլ.

Այս փուլում կատարվել է հետազոտական աշխատանքների ներկայացում և քննարկում:

Այս փուլի կարևոր բաղադրիչ է հետադարձ կապը: Հետադարձ կապի համար ուսանողներին տրվել են հետևյալ հարցերը՝ ի՞նչ դժվարություններ ունեցա հետազոտական աշխատանքը կատարելիս, որո՞նք են իմ ձեռքբերումները, ի՞նչ հմտություններ զարգացրի, ի՞նչ արժեքներ ձեռք բերեցի, ի՞նչը այլ կերպ կանեի, եթե այս հետազոտությունը կրկին կատարեի:

Կատարված անդրադարձի արդյունքներն ամփոփելիս, ձեռքբերումների առումով, ուսանողների առավել հանդիպող պատասխաններն էին՝ զարգացրեցի համագործակցային հմտությունները, քննադատական մտածողությունը, կարողացա տեսնել «Հայոց պատմություն» ու «Հայոց լեզու և գրականություն» առարկաների կապը, հասկացա, որ երկու գիտակարգերի գիտելիքների միավորմամբ կարելի է թեման ավելի խոր և բազմակողմանի հետազոտել և կատարել վերլուծություններ՝ ավելի ամբողջական պատկեր ունենալով թեմայի վերաբերյալ: Ձեռքբերումների մեջ նշվել էր, որ առաջին անգամ հետազոտության նպատակով կազմակերպվել է թանգարանային այցելություն:

Հետադարձ կապի արդյունքում վերհանված դժվարությունների մեջ ուսանողները նշել էին հետևյալը՝ ինչպե՞ս ավելի արդյունավետ եղանակով ներգրավել ունկնդիրներին քննարկումների մեջ, ինչպե՞ս ավելի լիարժեքորեն ներկայացնել արդի ժամանակների մարտահրավերները քննարկվող հարցերի համատեքստում, ինչպե՞ս ապահովել համագործակցության ավելի բարձր մակարդակ խմբի ներսում:

Դասախոսների անդրադարձը միտված էր աշխատանքի կազմակերպման ընթացքում առկա թերությունների վերհանմանը և միջառարկայական հետազոտության որակի բարելավմանը: Նախագծի դրական կողմերից կարելի է նշել ուսանողների բարձր մոտիվացիան, նրանց հմտությունների բացահայտումը և զարգացումը, կիրառված թանգարանային հետազոտության մեթոդը, և մեր գնահատմամբ, միջառարկայական նախագծի արդյունավետ իրականացումը: Որպես հիմնական խնդիր՝ կարելի է շեշտել թիմային աշխատանքում մշտադիտարկման փուլը, որն ավելի հետևողականորեն և մանրակրկիտ պետք է իրականացվի:

Նախագիծը գնահատելիս կիրառել ենք առարկաների միջինացված գնահատման եղանակը: Միջառարկայական նախագծերի

գնահատման փուլում այժմ կիրառվում է միջառարկայական համատեղ սանդղակ, որի բաղադրիչներն են՝ գնահատում կամ գիտելիք, համադրում, անդրադարձ (հետադարձ կապ):

Գնահատման փուլում կիրառել ենք նաև նկարագրական գնահատումը՝ շեշտելով նախագծի ուժեղ ու կողմերը և անդրադառնալով բարելավման ենթակա ուղղություններին:

Միջառարկայական նախագծեր իրականացվում են միջազգային տարբեր կրթական հաստատություններում: Հայաստանում ևս դրանք կիրառվում են կրթական ծրագրերում, օրինակ՝ «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրում:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ միջառարկայական ուսուցման կիրառումը բուհական կրթական ծրագրերում ժամանակի պահանջն է:

Միջառարկայական նախագծերի կազմակերպումը հնարավոր է բուհերում դասավանդվող տարբեր գիտակարգերի միջև:

Միջառարկայական նախագծի իրականացումը մարտահրավեր է դասավանդող մասնագետների և սովորողների համար՝ գիտելիքների, փորձի, հմտությունների, փոխադարձ համագործակցության և ժամանակի կառավարման առումով:

Անդրադարձ կատարելով ներկայացված «Հայոց պատմություն» և «Հայոց լեզու և գրականություն» միջառարկայական հետազոտական աշխատանքին՝ կարող ենք եզրակացնել, որ միջառարկայական նախագծերը հնարավորություն են ընձեռում բարձրացնել սովորողի ուսումնական մոտիվացիան և ուսումնառության գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր և գրավիչ, զարգացնել հետազոտական հմտությունները, քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները և ստեղծարարությունը:

Անշուշտ, այս թեման ունի ավելի խոր ուսումնասիրման, հետազայում նոր նախագծերի իրականացման և դրանց հիման վրա արդյունքների վերլուծության կարիք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. (2005), Մանկավարժություն : (Ուսումնական ձեռնարկ), Երևան, ՄԱՆԿԱՎԱՐԺ հրատ., 456 էջ:
Amirjanyan Yow., Sahakyan A. (2005), Mankavarjhowt'yown: (Owsowmnakan d'er'nark), Erevan, MANKAVARJh hrat., 456 e'j: (in Armenian)
2. Թաներ Աքչամ (2016), Հայերի բռնի իսլամացումը. լրություն, ժխտում եւ ուժացում, թարգմանությունը՝ Մ. Անումյանի, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 293 էջ:
T'aner Aqcham (2016), Hayeri br'ni islamacowmy'. Ir'owt'yown, jhxtowm ew owc'acowm, t'argmanowt'yowny" M. Anowmyani, Erevan, Tigran Mec' hrat., 293 e'j: (in Armenian)
3. «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակ (2015): Երևան, ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Գիրք երկրորդ, Հատոր III, Երևան, Զանգակ հրատ., 760 էջ:
«Hayoc patmowt'yown» akademiakan bazmahatoryak (2015): Erevan, HH GAA Patmowt'yan institowt, Girq erkrord, Hator III, Erevan, Zangak hrat., 760 e'j: (in Armenian)
4. «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարու-թյան փաստաթղթերի» (1989): Ժողովածու, առաջաբանը, թարգմանական և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 256 էջ:
«Hayeri ceghaspanowt'yowny' y'st eritt'owrqeri datavarow-t'yan p'astat'ght'eri» (1989): Jhoghovac'ow, aoajabany', t'argmanakan & c'anot'agrowt'yownnery" A. H. P'ap'azyani, Erevan, HSSH GA hrat., 256 e'j: (in Armenian)
5. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (1991): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու /Կազմող, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Մ.Գ. Ներսիսյան, Ռ.Գ. Սահակյան; Թարգմանիչ՝ Հ.Ա. Հարյան, Ռ.Ա. Այվազյան., Երևան, Հայաստան հրատ., 758 էջ:
Hayeri ceghaspanowt'yowny' O'smanyanyan kaysrowt'yownowm (1991): P'astat'ght'eri & nyowt'eri jhoghovac'ow / Kazmogh, xmbagir & ar'ajabani heghinak՝ M.G. Nersisyan, R'.G. Sahakyan; T'argmanich՝ H.A. Haryan, R'.A. Ayzazyan., Erevan, Hayastan hrat., 758 e'j: (in Armenian)

6. Մելքոնյան Ռ. (2009), Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, «Նորավանք» հրատ., 112 էջ:
Melqonyan R'. (2009), Islamacvac' hayeri xndirneri showrj, Erevan, «Noravanq» hrat., 112 e'j: (in Armenian)
7. Մելքոնյան Ռ. (2010), Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, Հեղինակային հրատ., 184 էջ:
Melqonyan R'. (2010), Hayeri br'ni islamacowmy' ceghaspanowt'yan tarinerin. y'nt'acqy' & het&anqneri', Erevan, Heghinakayin hrat., 184 e'j: (in Armenian)
8. Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ. (2015), Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք | ՎՄՎ-Պրինտ հրատ., 240 էջ:
Melqonyan R', Abrahamyan M. (2015), O'smanyanyan kaysrowt'yan & T'owrqiayi Hanrapetowt'yan br'ni islamacman qaghaqakanowt'yowny' hayeri nkatmamb orpes ceghaspanakan ararq | VMV-Print hrat., 240 e'j: (in Armenian)
9. Միլիտոսյան Լ., Գաբրիելյան Ա. (2021), Ինտեգրված դասերի դերն ամբողջական աշխարհայացքի զարգացման գործընթացում, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, 2(57), Երևան, Վ. Բրյուսովի անվ. պետ. համալսարանի «Լինգվա» հրատ.:
Militosyan L., Gabrielyan A. (2021), Integrvac' daseri dern amboghjakan ashxarhayacqi zargacman gorc'y'nt'acowm, Banber V. Bryowsovi anvan petakan hamalsarani, 2(57), Erevan, V. Bryowsovi anv. pet. hamalsarani «Lingva» hrat.: (in Armenian)
10. Պապոյան Հ. (2013), Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, (դասախոսությունների նյութեր), Եր., «Տիր» հրատ., 304 էջ:
Papoyan H. (2013), Patmowt'yan dasavandman met'odikan dprocowm, (dasaxosowt'yowneri nyowt'er), Er., «Tir» hrat., 304 e'j: (in Armenian)
11. Ստեփանյան Ա. Գ. (2015), Տեղեկատվական տեխնոլոգիաները ֆիզկուլտուրային կրթության համակարգում, Երևան, Հեղինակային հրատ., 176 էջ:
Step'anyan A. G. (2015), Teghekatvakan texnologianery' fizkowltowrayin krt'owt'yan hamakargowm, Erevan, Heghinakayin hrat., 176 e'j: (in Armenian)

12. «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դդ. կանոննամներ») (1964): Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Ջուլայանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 138 էջ:
«O'smanyān o'renqner'y' Ar&mtyan Hayastanowm (XVI-XVII dd. kanownnamener») (1964): T'argmanowt'yowny', ar'ajabany' & c'anot'agrowt'yownnery' A. X. Safrastyani & M. K. Zowlalyani, Er&an, HSSR' GA hrat., 138 e'j: (in Armenian)
13. Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ (նախագիծ)
<https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf> (Դիտված՝ 18.10.2024):
Hanrakt'akan «Hayoc patmowt'yown» ar'arkayi owsowmnar'owt'yan hayecakarg (naxagic') <https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf>
14. ТРАНСДИСЦИПЛИНАРНОСТЬ В ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ: ЭКСПЕРТНЫЕ ОЦЕНКИ, ПРОБЛЕМЫ И ПРАКТИЧЕСКИЕ РЕШЕНИЯ
TRANSDISCIPLINARITY IN HIGHER EDUCATION: EXPERT ASSESSMENTS, PROBLEMS AND PRACTICAL SOLUTIONS, May 2014, Vladimir Mokiy, Mikhail Stefanovich Mokiy.
https://www.researchgate.net/publication/332464968_TRANSDISCIPLINAR_NOST_V_VYSSEM_OBRAZOVANII_EKSPERTNYE_OCENKI_PROBLEMY_I_PRAKTICESKIE_RESENIYA_TRANSDISCIPLINARITY_IN_HIGHER_EDUCATION_EXPERT_ASSESSMENTS_PROBLEMS_AND_PRACTICAL_SOLUTIONS (Դիտված՝ 01.10.2024):
15. (Interdisciplinarity, History, Theory, and Practice, Julie Thompson Klein, Wayne State Univ Pr (January 1, 1990)
https://books.google.am/books?id=4uM8fjxhjqsC&pg=PA19&hl=ru&source=gbs_toc_r&cad=2#v=onepage&q=20th%20century&f=false (Դիտված՝ 28.10.2024):
16. INTERDISCIPLINARY APPROACH TO EDUCATION WITH SPECIAL REFERENCE TO COMMERCE STREAM 1Ms. Manisha Sharma (Research Scholar), 2Dr. Neetu. M. Shukla (Asst. Prof.) Amity Institute of Education, Amity University, Noida, 2018.
<https://www.researchpublish.com/upload/book/INTERDISCIPLINARY%20APPROACH-5937.pdf> (Դիտված՝ 11.10.2024):

17. THE POWER OF AN INTERDISCIPLINARY APPROACH TO SCIENCE EDUCATION & RESEARCH DHANASHREE PARANJP, 2019. <http://publications.azimpremjifoundation.org/2097/1/10THE%20POWER%20OF%20AN%20INTER-%20DISCIPLINARY%20APPROACH%20TO%20SCIENCE%20EDUCATION%20%26%20RESEARCH.pdf> (Դիտված՝ 25.09.2024):
18. INTERDISCIPLINARY EDUCATION: MEMORIALISING. LEARNING EXPERIENCES, Julie Harvie. EDUCA - International Catholic Journal of Education, 6, 2021, 111-126 https://educa.fmleao.pt/wp-content/uploads/2022/02/Educa_6_111-126.pdf (Դիտված՝ 17.09.2024):
19. Interdisciplinary teaching and learning in the MYP https://www.ibo.org/globalassets/new-structure/brochures-and-infographics/pdfs/myp-brief-interdisciplinary-learning_en.pdf (Դիտված՝ 30.09.2024):

АШХЕН ГРИГОРЯН - МЕЖДИСЦИПЛИНАРНОЕ ОБУЧЕНИЕ КАК СОВРЕМЕННЫЙ ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ПОДХОД (НА ПРИМЕРЕ МЕЖДИСЦИПЛИНАРНЫХ ПРОЕКТОВ “ИСТОРИЯ АРМЕНИИ” И “АРМЯНСКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА”)

Ключевые слова: *междисциплинарное обучение, образовательный подход, метод, исследование, междисциплинарные связи, развитие навыков*

Одной из важных задач современного образования является формирование личности, наделенной критическими, творческими, коммуникативными навыками, способными решать проблемы и разрабатывать новые идеи. Свое уникальное место в образовательных реформах занимает внедрение “междисциплинарной” модели обучения. “Междисциплинарность” — это объединение разных подходов, методов и знаний, цель которого — более глубокое понимание существующих проблем, многостороннее исследование и поиск новых решений.

Междисциплинарный подход способствует расширению научного мировоззрения, поскольку исследования строятся в рамках нескольких дисциплин. Со временем междисциплинарное сотрудничество и междисциплинарная среда обучения становятся все более популярными в школах и высших учебных заведениях. Таким опытом является реализация междисциплинарного проекта «История Армении» и «Армянский язык и литература». В целом, изменения, происходящие в

мире, и решение существующих сложных проблем, требуют диалога и тесного сотрудничества специалистов разных областей. Образовательный сектор играет важнейшую роль в этом отношении.

ASHKHEN GRIGORYAN - INTERDISCIPLINARY LEARNING AS A MODERN EDUCATIONAL APPROACH

Keywords: *Interdisciplinary learning, educational approach, method, research, interdisciplinary connections, skills development*

One of the key missions of modern education is to develop individuals with multifaceted, critical, and creative communication skills, enabling them to solve problems and generate new ideas. The introduction of the "interdisciplinary" learning model occupies a unique place in education reforms. "Interdisciplinarity" is the unification of traditional approaches, methods and knowledge. It aims at a deeper understanding of various problems, multifaceted research and finding new solutions. The interdisciplinary approach contributes to the expansion of scientific worldview, as research is based on one or more disciplines. Over time, the ideas of "interdisciplinary cooperation" and "interdisciplinary learning environment" are increasingly becoming popular in public schools and higher education institutions. The implementation of the interdisciplinary project "Armenian History" and "Armenian Language and Literature" is an example of such experience. In general, the multifaceted changes taking place in the world and the solutions to existing complex problems require a dialogue and close cooperation among specialists from different fields. The educational sector is a primary platform in this respect.

Ներկայացվել է՝ 08.10.2024 թ.
Գրախոսվել է՝ 20.11.2024 թ.

**ՏԱՐԱՏԱՐԻՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ**

ԱՐԱՔՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համառոտագիր

Կրթության որակի բարձրացման հիմնախնդիրը մշտապես եղել է և մնում է կրթության ոլորտի ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Դրանով են պայմանավորված տարբեր ժամանակներում կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ նոր ուսումնական ծրագրեր, հանրակրթության պետական չափորոշիչներ, դասագրքեր և այլն: Սակայն արդիական են չափորոշիչներում ներկայացված գիտելիքների և կարողունակությունների ձևավորման և զարգացման հարցերը:

Հոդվածում ներկայացրել ենք տարատարիք ուսումնական խմբերում հանրակրթության նպատակների իրականացման համար անհրաժեշտ ուսուցման գործընթացի կազմակերպման հնարավորությունները և հիմնահարցերը:

Հիմնաբառեր՝ կրթության որակ, հանրակրթություն, չափորոշիչ, վերառարկայական կարողունակություններ, տարատարիք ուսումնական խումբ, կոլեկտիվ ուսումնական պարապմունք:

Ներածություն

Հոդվածում քննարկել և վերլուծել ենք հանրակրթության նպատակների իրականացման հիմնահարցերը, մասնավորապես չափորոշչային վերջնարդյունքների ձևավորման և զարգացման նպատակով ուսուցման գործընթացի կազմակերպման բնույթի կարևորության հարցը: Եվ այդ նպատակով դիտարկել ենք տարատարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման հնարավորությունները:

Հեղազոտության նպատակը

Ուսումնասիրել տարատարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման անհրաժեշտության և հնարավորությունների հիմնահարցերը:

Հեղափոխության խնդիրները

1. Ուսումնասիրել և պարզել հանրակրթության որակի բարձրացման հիմնահարցերը:
2. Ուսումնասիրել և բացահայտել տարատարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի հնարավորությունները:
3. Պարզել կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունները տարատարիք ուսումնական խմբերով ուսուցման գործընթացն իրականացնելիս:

Հեղափոխության նորոյթը

1. Հետազոտության արդյունքում ձևակերպվել են հանրակրթության հիմնախնդիրների լուծման մոտեցումները:
2. Վերլուծվել են տարատարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման հնարավորությունները՝ որպես հանրակրթության հիմնախնդիրների լուծման արդյունավետ միջոց:
3. Վերլուծվել և ընդհանրացվել են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունները տարատարիք և տարամակարդակ ուսումնական խմբերում ուսուցում իրականացնելու նպատակով:

Հեղափոխության տեսական նշանակությունը

Հետազոտության արդյունքները և ձևակերպված հիմնահարցերը հնարավորություն են տալիս հանրակրթության նպատակների իրականացման և բարեփոխման նպատակով առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուսուցման գործընթացի կազմակերպման բնույթին: Նման մոտեցումը կարող է էական նշանակություն ունենալ կրթության որակի բարձրացման հարցում և նպաստել չափորոշչային պահանջների իրականացմանը:

Հեղափոխության մեթոդները

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտվել ենք հետազոտության հետևյալ մեթոդներից.

- տեսական մեթոդներ՝ մանկավարժական, մասնագիտական, մեթոդական, իրավական ակտերի ուսումնասիրություններ, վերլուծություններ և ընդհանրացումներ:
- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցազրույց:

Կրթության որակի բարձրացմանն ուղղված բարեփոխումները

Կրթության և հանրակրթության որակի բարձրացման խնդիրները բոլոր ժամանակներում եղել են կրթության ոլորտի ներկայացուցիչների՝ մանկավարժների, գիտնականների, փորձագետների ուշադրության կենտրոնում: Կրթության որակը նաև հասարակության կողմից

ձևավորված պահանջմունք է՝ որպես ապագա հասարակության իրավագիտակցության բարձր ցուցանիշի ապահովման գրավական: Այս հանգամանքներով պայմանավորված՝ տարբեր ժամանակներում կրթության և հանրակրթության ոլորտներում իրականացվել են տարաբնույթ բարեփոխման փորձեր և կիրառվել տարբեր մեխանիզմներ՝ նոր ուսումնական ծրագրերի, դասագրքերի, կրթակարգի, չափորոշիչների, ուսուցման տեխնոլոգիաների ձևով: Ակնհայտ է, որ այդ բարեփոխումներն իրականանում են պետական մակարդակով և կրում են համընդհանուր բնույթ, սակայն կրթության որակի բարձրացման նկատմամբ հասարակության պահանջները չեն դադարում: Կրթության ոլորտի ստուգատեսների արդյունքների վերլուծությունները ևս փաստում են, որ կրթության որակի բարձրացման խնդիրը մնում է արդիական: Կրթության և հանրակրթության ոլորտներում առկա հիմնախնդիրները քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ երկու եզրույթների էական տարբերությունները և վերջիններիս նպատակները (Մկրտչյան, 2022, էջ 20): Դրանով են պայմանավորված հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները, որոնք վերջին տասնամյակներում դրսևորվում են ոչ միայն առարկայական ծրագրերի կամ դասագրքերի բովանդակության, այլև հանրակրթության պետական չափորոշիչների բովանդակության փոփոխություններով: Եվ պատահական չէ, որ այսօր առավել քան պարտադիր է դարձել չափորոշչահենք կրթության իրականացումը, քանի որ, ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ Կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը («Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999, Հոդված 4):

Չափորոշիչների բովանդակությունը ներառում է ոչ միայն այն գիտելիքների նվազագույն և առավելագույն պաշարը, որոնք սովորողները դպրոցական դասընթացի արդյունքում պետք է յուրացնեն, այլ նաև այն վերառարկայական կարողունակությունները, որոնք անհրաժեշտ են սովորողներին կյանքի տարբեր իրավիճակներում (Հանրակրթության պետական չափորոշիչ 2010): Հետևապես հանրակրթության հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հանրակրթության պետական չափորոշիչների բովանդակության և դրանց իրականացման հիմնահարցերին:

***Հանրակրթության պետական չափորոշիչների բովանդակության
իրականացման դժվարությունները***

Այսօր առավել քան արդիական դարձած վերառարկայական կարողունակությունների կամ կոմպետենցիաների ձևավորման և զարգացման հարցերը քննարկելիս և դրանց իրականացմանն ուղղված գործունեություն ծավալելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ այդ կարողունակությունները սահմանված են յուրաքանչյուր սովորողի համար, և դրանց ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է այնպիսի ուսումնական գործընթացի կազմակերպում, որին ակտիվ մասնակցություն կունենա յուրաքանչյուր սովորող: Իսկ նշված կարողունակությունների ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ է ուսուցման գործընթացում ապահովել համապատասխան նպաստավոր պայմաններ, որպեսզի սովորողները գտնվեն տարբեր իրավիճակներում, իրականացնեն տարաբնույթ աշխատանքներ տարբեր ձևերով և միջոցներով: Հատկապես կարևոր է ապահովել սովորողների գործուն ընդգրկվածությունը (Մկրտչյան, 2011, էջ 24):

Հանրակրթությունը միտված է ապահովելու յուրաքանչյուր սովորողի որակյալ կրթություն ստանալու իրավունքը: Իսկ երբ քննարկում ենք յուրաքանչյուր սովորողի մոտ սահմանված վերջնարդյունքների ձևավորման և զարգացման հարցերը, ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր սովորողի համար դրանց ձևավորումն ու զարգացումը միատեսակ չէ՝ պայմանավորված սովորողի տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկություններով: Փաստորեն առաջ է գալիս յուրաքանչյուր սովորողի կրթության և չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովման խնդիրը: Իսկ երբ հարցը վերաբերում է յուրաքանչյուր սովորողին, ապա անհրաժեշտ է քննարկել նաև ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները, քանի որ ներկայումս հանրակրթական հաստատություններում տարածված և կիրառվող ավանդական-խմբային պարապմունքները սահմանափակում են իրականացնելու անհատական մոտեցման սկզբունքը (Մկրտչյան, 2022): Այդ հանգամանքով պայմանավորված՝ այժմ ուսուցիչներն ունեն ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերի ընտրության ազատ իրավունք. խրախուսվում է տարբեր նորարարական մոտեցումների կիրառումը ուսումնական գործընթացում:

***Տարափարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի
կազմակերպման անհրաժեշտությունը***

Ուսուցման գործընթացի կազմակերպման մի շարք տեխնոլոգիաներ, մեթոդիկաներ և նորարարական մոտեցումներ միտված

են ապահովելու յուրաքանչյուր սովորողի ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում ու ցուցաբերելու անհատական մոտեցում: Եվ պատահական չէ, որ երբ խոսվում է անհատական մոտեցման սկզբունքի մասին, հաճախ մատնանշվում են ուսուցման գործընթացի կազմակերպման այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են, օրինակ, շերտավորված ուսուցումը, աշխատանքը փոքր խմբերում, նախագծային, մոդուլային ուսուցումները և այլն (Միլիտոսյան, 2007, էջ 66): Այս բոլոր մոտեցումները իրականացվում են դաս-դասարանային համակարգում: Իսկ դաս-դասարանային համակարգին բնորոշ ուսուցման գործընթացի առանձնահատկությունները սահմանափակում են անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը (Մկրտչյան, 2011, էջ 28):

Այսպիսով, առաջ է գալիս ոչ դաս-դասարանային համակարգում ուսուցման գործընթացի կազմակերպման անհրաժեշտություն, որի հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը: Դաս-դասարանային համակարգում առկա են միատարիք և միամակարդակ ուսումնական խմբեր, հետևապես ոչ դաս-դասարանային համակարգին բնորոշ է ուսումնական խմբերի՝ տարատարիք և տարամակարդակ սկզբունքով ձևավորումը: Մանկավարժության մեջ և պրակտիկայում գոյություն ունեն տարատարիք և տարամակարդակ ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման մի շարք փորձեր և մոտեցումներ (Лебединцев 2010, с. 55, Крауц 2006, с. 23): Սակայն տարատարիք և տարամակարդակ ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման հիմնահարցը դեռ միայն տեսական բնույթ է կրում. դրանց լուծումները գործնականում ամբողջապես բացահայտված չեն:

Տարատարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման հնարավորությունները

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների կազմակերպման ընթացքում բացակայում են դաս-դասարանային համակարգին հատուկ բնութագրիչներ: Ինչպես արդեն նշեցինք, եթե դաս-դասարանային համակարգում ուսումնական խմբերը միատարիք են և միամակարդակ, իսկ ուսուցման հիմնական ձևը խմբային ուսուցումն է, որի ընթացքում առկա է ընդհանուր ճակատի առկայության իրավիճակ, ապա կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին հատուկ են տարատարիք և տարամակարդակ ուսումնական խմբեր, և առկա է ընդհանուր ճակատի բացակայության իրավիճակ: Վերջինս հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացը կազմակերպել յուրաքանչյուր սովորողի համար և յուրաքանչյուրին համապատասխան անհատական ուսումնական ծրագրով: Այսպիսով, կոլեկտիվ ուսումնական պարապմունքների

արդյունքում իրականացնելով անհատական մոտեցման սկզբունքը՝ հնարավորություն է ստեղծվում ուսուցման գործընթացը կազմակերպել յուրաքանչյուր սովորողի համար:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին հատուկ է փոփոխական կազմով զույգային աշխատանքներ, որն ունենում է տարբեր նպատակներ՝ նոր նյութի ուսումնասիրություն, ուսուցում, փոխուսուցում, ստուգում, փոխստուգում և այլն: Սովորողները, հայտնվելով տարբեր իրադրություններում, հարկադրված են կատարել տարաբնույթ աշխատանքներ: Արդյունքում սովորողները ուսումնական գործընթացում պասիվ ընկալողներից վերածվում են ակտիվ մասնակիցների, և ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորող ձեռք է բերում գործուն ընդգրկվածություն: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի առանձնահատկությունները և սովորողների իրականացրած աշխատանքի բնույթը հաշվի առնելով՝ հնարավորություն է ստեղծվում սովորողների մոտ ձևավորել և զարգացնել հանրակրթական պետական չափորոշիչներում ներկայացված մի շարք վերառարկայական կարողունակություններ՝ համագործակցություն, հանդուրժողականություն, անձանոթ իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողություն, ստուգվելու և ինքնաստուգվելու որակներ, ինքնակառավարվելու և ինքնանդրադարձ վերլուծություն կատարելու հմտություններ և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է առանձնացնել տարատարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման անհրաժեշտության մի քանի հիմնահարցեր.

- Հանրակրթության նպատակների իրականացման հարցը դեռ արդիական է, և պարբերաբար իրականացվում են բարեփոխումներ՝ այն հնարավորինս լուծելու նպատակով:
- Դաս-դասարանային համակարգում խմբային ուսումնական պարապմունքներին բնորոշ ընդհանուր ճակատի առկայությունը սահմանափակում է յուրաքանչյուր սովորողի անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը ուսուցման գործընթացում:
- Յուրաքանչյուր սովորողի անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը հանրակրթության առաջնային նպատակներից է:
- Տարատարիք ուսումնական խմբերը հնարավորություն են տալիս կազմակերպել այնպիսի ուսուցման գործընթաց, որի հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը:
- Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներն ունեն տարատարիք ուսումնական խմբերում ուսուցման գործընթացի կազմակերպման և

անհատական մոտեցման սկզբունքի ապահովման լայն հնարավորություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Միլիտոսյան Լ. Խ. (2007), Մոդուլային ուսուցումը իբրև կրթության որակի բարձրացման նոր տեխնոլոգիա, «Վասն արդարութեան», N 1, էջ 66 - 73:
Militosyan L. X. (2007), Modulayin usowcumy' ibr& krt'ut'yan oraki bard'racman nor texnologia, «Vasn ardarut'ean», N 1, e'j 66 - 73: (in Armenian)
2. Մկրտչյան Մ. Ա. (2022), Հանրակրթության դիդակտիկայի հիմնահարցերը /Մ.Մկրտչյան.-Եր.: «Զանգակ» հրատ., - 88 էջ:
Mkrtchyan M.A. Hanrakrt'ut'yan didaktikayi himnaharcery'/M.Mkrtchyan.- Er.: «Zangak»hrat.- 88 e'j: (in Armenian)
3. Մկրտչյան Մ. Ա. (2011), Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը // Երևան, -148 էջ:
Mkrtchyan M. A. (2011) Usucman kolektiv eghanaki irakanacman met'odabanakan, tesakan & gorc'nakan harcery' // Erevan, - 148 e'j: (in Armenian)
4. Մկրտչյան Մ. Ա. (2011), Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը // Երևան, - 148 էջ:
Mkrtchyan M. A. (2011) Usucman kolektiv eghanaki irakanacman met'odabanakan, tesakan & gorc'nakan harcery' // Erevan, - 148 e'j: (in Armenian)
5. Մկրտչյան Վ. Զ. (2022), Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում: ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության՝ Սեղմագիր: Երևան:
Mkrtchyan V. J. (2022), Anhatakan motecman skzbunqi irakanacman djhvarut'yunnern u dranc hagh't'aharman ughinery' tarrakan dprocum:

JhG.00.01 «Mankavarjhut'yan tesut'yun & patmut'yun» masnagitut'yamb mankavarjhakan gitut'yunneri t'eknac'ui gitakan astitwani haycman atanaxosut'yan' Seghmagir: Erevan: (in Armenian)

6. Лебединцев В. Б., Горленко Н. М., Запятая О. В., Клепец Г. В. (2010). Новые модели обучения в малочисленных сельских школах; под ред. В.Б. Лебединцева.-Крацноярск.-152 с.
Lebedincev V. B., Gorlenko N. M., Zapjataja O. V., Klepec G. V. (2010). Novye modeli obuchenija v malochislennyh sel'skih shkolah; pod red. V.B. Lebedinceva.-Krasnojarsk.- 152 s. (in Russian)
7. Крауц В. Н. (2006). Организация разновозрастного обучения в Гмирянской школе. Не классно-урочное обучение: модели, содержание образования, управление: Сборник статей/ Редактор-составители В. Б. Лебединцев, О. В. Запятая, Н. М. Горленко, Г. В. Клепец- Крацноярск. - 124с.
Крауц В. Н. (2006). Organizacija raznovozrastnogo obuchenija v Gmirjanskoj shkole. Ne klassno-urochnoe obuchenie: modeli, sodержание obrazovanija, upravlenie: Sbornik statej/ Redaktor-sostaviteli V. B. Lebedincev, O. V. Zapjataja, N. M. Gorlenko, G. V. Klepec- Krasnojarsk.- 124 s. (in Russian)
8. ՀՀ «Կրթության մասին» օրենք.-1999.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299>
(Դիտված՝ 26.06.2024)
ՀՀ «Կրտ'ut'yan masin» օ'renq.-1999.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299>
9. ՀՀ «Հանրակրթության պետական չափորոշիչ».-2010.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=182022>
(Դիտված՝ 02.05.2024)
ՀՀ «Hanrakt'akan petakan chap'oroshich».-2010.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=182022>

ԱՐԱԿՍ ԱՐՄԵՆՅԱՆ - ՓՐՈԲԼԵՄՆԵՐ ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ

Կլյուչեւեա սլուա: *կազմակերպման որակ, ընդհանրակրթական դաստիարակում, ստանդարտ, մետադիսցիպլինար կարողութեան, բեՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ, կոլեկտիւային սովորման մեթոտ*

Մեթական խնդիր դաստիարակման փրոցեսսի - որակի բարձրացումը - եղած է և մնայ ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ կենտրոնում։ Երկրորդում պայմանաւորուած են ռեփորմները ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ կարգում: նոր դաստիարակման փրոցրամներ, ընդհանրակրթական պետական ստանդարտներ, դասագրքեր և ըր. Երկրորդում, սեյ Երկրորդում խնդիրները կազմակերպման և բարձրացման կարողութեան և կոմպետենցիաների, որոնք ներկայացուած են ստանդարտներում, մնայ ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ։ Երկրորդում քննարկուած են կարողութեան, ինչպէս և հնարաւորութեան իրականացումը ընդհանրակրթական խնդիրներում ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ կարգում։

ԱՐԱԿՍ ԻՐԱՄԵՆՅԱՆ - խՆԴԻՐՆԵՐ ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ

Կլյուչեւեա սլուա: *կազմակերպման որակ, ընդհանրակրթական դաստիարակում, ստանդարտներ, ընդհանրակրթական կարողութեան, բեՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ, կոլեկտիւային դաստիարակման*

Խնդիրը կազմակերպման որակի բարձրացումը միշտ էլ կենտրոնական կետ է եղած դաստիարակման փրոցեսսում։ Երկրորդում խնդիրները կազմակերպման փրոցեսսում, ինչպէս և նոր դասագրքեր, պետական ստանդարտներ ընդհանրակրթական դաստիարակման, և նոր դասագրքեր։ Երկրորդում, խնդիրները մնայ ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ իրականացումը և կազմակերպման կարողութեան և կարողութեան ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ։

Երկրորդում քննարկուած են կարողութեան և հնարաւորութեան կազմակերպման դաստիարակման փրոցեսսում ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ կարգում։ Երկրորդում խնդիրները կազմակերպման փրոցեսսում ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ իրականացումը ԵՐԱՆՈՒՄԻ ՎԵՐԱՆՈՒՄԻ ՓՐՈՑԵՍՍ ԵՆ ԲԵՐՆՈՒՄԻ ՍԵՐԻՆԵՐ։

Ներկայացուել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսուել է՝ 22.11.2024 թ.

**ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ**

ԼԻԼԻԹ ԼԱԶԻՆՅԱՆ

Համառոտագիր

Կառավարման բնագավառի հետազոտություններն ուղղված են միջգիտակարգային խնդիրների, մասնավորապես կազմակերպչական վարքի, տեղեկատվական տեխնոլոգիաների, ինժեներիայի, նորարական մենեջմենթի, իրավական և էթիկական հայեցակետերի ուսումնասիրություններին, ֆինանսների և տնտեսական ռեսուրսների կառավարմանը, մարքեթինգի, հաղորդակցության միջոցների մշակման և խթանման սոցիալ-հոգեբանական հայեցակետերի իմացությանը: Կառավարման բնագավառի խնդիրների հիմքում դրված են միջգիտակարգային ուսումնասիրությունները, իսկ տեսամեթոդաբանական հիմքերը կառուցվում են մենեջմենթի, տնտեսագիտության, հոգեբանության, սոցիալական գիտությունների հենքի վրա: Այս տեսանկյունից կարևորում ենք կառավարման բնագավառի միջգիտակարգային փոխգործակցության երկու եղանակների դիտարկումը. առաջինը գիտաճյուղային գիտելիքի համակարգերի միջև փոխգործակցության ստեղծումն է, երկրորդը՝ միևնույն օբյեկտի տարբեր հայեցակետերի ուսումնասիրությունը հետազոտողների փոխգործակցության արդյունքում:

Հոդվածում կարևորում ենք կառավարման խնդիրների ուսումնասիրությունը միջգիտակարգային գիտելիքների ինտեգրման և հաղորդակցության դժվարությունների կարգավորման տեսանկյունից, որտեղ տարբեր գիտակարգեր կարող են ունենալ իրենց հասկացություններն ու մեթոդաբանական ընդհանրությունները՝ կառավարման միջգիտակարգային համագործակցության ու դրա կազմակերպման գործընթացը իրականացնելու ընթացքում:

Հիմնաբառեր՝ կառավարում, կառավարման հոգեբանություն, միջգիտակարգային մոտեցում, կազմակերպչական վարք, ռազմավարական պլանավորում, համակարգային մոտեցում

Ներածություն

Կառավարման գործընթացը սուկ հոգեբանական երևույթ չէ, այլև միջգիտակարգային, որի ուսումնասիրությունը պահանջում է տարբեր գիտաճյուղերից գիտելիքների և հետազոտման մեթոդների ներգրավման անհրաժեշտություն:

Սակայն մինչ կոնկրետ կառավարման միջգիտաճյուղային ուսումնասիրության հիմնախնդրին անցնելը համառոտ դիտարկենք, թե ինչ է միջգիտաճյուղային ուսումնասիրությունը և նրա եղանակները:

Միջգիտաճյուղային ուսումնասիրությունը գիտական հետազոտության կազմակերպման եղանակ է, որը միևնույն օբյեկտի ուսումնասիրության ընթացքում ենթադրում է տարբեր գիտաճյուղերի ներկայացուցչականություն և փոխգործակցություն:

Միջգիտաճյուղային ուսումնասիրությունների նկատմամբ ուշադրությունը և հետազոտական գործունեության մեջ դրանց առանձնացումը կատարվել է 20-րդ դարի կեսերից, չնայած որ միջգիտաճյուղային փոխգործակցության տարբեր հայեցակետերի քննարկումը մշտապես եղել է գիտության ուշադրության կենտրոնում: Կարևորում ենք այն հանգամանքը, որ կառավարման խնդիրների ուսումնասիրություններում դիտարկվում էին հիմնականում միջգիտաճյուղային փոխգործակցության երկու եղանակներ.

1. գիտաճյուղային գիտելիքի համակարգերի միջև փոխգործակցությունը գիտությունների գործառնության, ինտեգրման և տարբերակման գործընթացում,

2. հետազոտողների փոխգործակցությունը միևնույն օբյեկտի տարբեր հայեցակետերի համատեղ ուսումնասիրության ընթացքում (Мирский, 2001):

Կառավարման բնագավառի խնդիրների հիմքում դրված են միջգիտակարգային ուսումնասիրությունները, իսկ տեսամեթոդաբանական հիմքերը կառուցվում են մենեջմենթի, տնտեսագիտության, հոգեբանության, սոցիալական գիտությունների հենքի վրա: Այս տեսանկյունից **հեղափոխության նպատակն է** միջգիտակարգային փոխգործակցության եղանակների՝ գիտաճյուղային գիտելիքների համակարգերի միջև փոխգործակցության ստեղծման արդյունքում տարբեր հայեցակետերի ուսումնասիրությունը:

ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Ջաքոբսի և Ջ. Բորլանդի կարծիքով միջգիտակարգային մոտեցումը ներառում է որոշակի հիմնախնդրի կամ երևույթի վերաբերյալ մի քանի գիտաճյուղերի տեսամեթոդաբանական հիմքերը (Jacobs, p. 159):

Գ.Մ. Տուլչինսկին նշում է, որ միջգիտաճյուղայնությունը դրսևորվում է հիմնախնդրի առաջադրման, դրանց լուծման մոտեցումների, տեսությունների միջև կապերի բացահայտման, նոր գիտաճյուղերի ձևավորման ընթացքում (Тульчинский, 2003):

Է. Մ. Միրսկիի կարծիքով՝ միջգիտաճյուղային ուսումնասիրությունների իրագործումը ենթադրում է երեք տեսակի խնդիրների միաժամանակյա լուծում՝ *մեթոդաբանական* (ուսումնասիրության առկայի ձևավորում, որտեղ օբյեկտը պետք է արտացոլված լինի այնպես, որ այն հնարավոր լինի ուսումնասիրել բոլոր մասնակից գիտությունների միջոցներով, իսկ ուսումնասիրության արդյունքում ստացված արդյունքները կարողանան հստակեցնել ու կատարելագործել ելակետային պատկերը), *կազմակերպչական* (հետազոտողների հաղորդակցության և փոխգործակցության ցանցի ձևավորում, որպեսզի հնարավորություն ունենան մասնագիտական մասնակցություն ունենալ փոխանակման և քննարկման ընթացքում, նաև ներգրավեն համապատասխան գիտաճյուղերից գործընկերների), *տեղեկատվական* (միջգիտաճյուղային հետազոտության կիրառական արդյունքների կայացման ընթացքում որոշումների ներդրման ու դրանց տեխնոլոգիական ապահովում և միաժամանակ մասնակիցների կողմից ստացված գիտական արդյունքների փոխանցում միջգիտաճյուղային գիտելիքի համակարգերի մեջ՝ փորձագիտության նպատակով) (Тульчинский, 2003):

Կառավարման ավանդական մոդելը ղեկավարի ուշադրությունը կենտրոնացնում է բացառապես տնտեսական նպատակներին հասնելու վրա: Կառավարման նոր մոդելը, արտացոլելով տնտեսական և սոցիալական գործընթացների մեկտեղումը, ուշադրության կենտրոնում է պահում ղեկավարի նպատակները և սոցիալական խնդիրները՝ զբաղվածության ապահովում, աշխատանքի պայմանների բարելավում, կառավարման գործընթացում սեփական մասնակցության ընդլայնում և այլն:

Աշխատակազմի կառավարման ռազմավարական հայեցակարգի հիմքում մարդն է, որը դիտարկվում է որպես կազմակերպության առավելագույն արժեք: Բովանդակային տեսանկյունից աշխատակազմի կառավարման այդ նոր ռազմավարական հայեցակարգը դեպի ապագա ուղղված կազմակերպություններում հիմնականում կառուցվում է հետևյալ սկզբունքներով.

1. սոցիալական և հոգեբանական նորարությունները նույնքան կարևոր են, որքան տնտեսական և տեխնոլոգիական նորարարությունները,

2. աշխատակիցների համակարգված ակտիվությունն առաջանում է փոխըմբռնման հիման վրա,

3. ընդհանուր խնդիրները լուծվում են աշխատակիցների համատեղ ջանքերով,

4. պետք է գերակշռի աշխատանքի համագործակցային ոճը:

Կառավարման միջգիտակարգայնությունն արտացոլում է հիմնախնդիրների և խնդիրների համալիր բնույթը, որոնք այն լուծում է տարբեր գիտաճյուղերի գիտելիքների և մեթոդների մեկտեղման արդյունքում: Այդ մոտեցումը թույլ է տալիս հաշվի առնել բազմաթիվ գործոններ և հեռանկարներ, ինչը նպաստում է կառավարչական խնդիրների առավել արդյունավետ լուծմանը:

Անդրադառնանք կառավարման՝ որպես միջգիտակարգային ուսումնասիրության հիմնախնդրի մի քանի առանցքային փաստարկների:

1. Համալիր մոտեցման անհրաժեշտությունը: Կառավարումը որպես գործընթաց առերեսվում է բազմազան մարտահրավերների, որոնք պահանջում են տնտեսագիտությունից, հոգեբանությունից, սոցիոլոգիայից, մանկավարժությունից, տեխնիկական գիտություններից և այլ ոլորտներից գիտելիքների մեկտեղում: Դա թույլ է տալիս հաշվի առնել կազմակերպչական գործունեության տարբեր հայեցակետերը և ընդունել հիմնավորված կառավարչական որոշումներ: Այս տեսանկյունից Պ. Ռ. Լոուրենսի և Հ. Ե. Քլեյնի «The Challenge of Interdisciplinary Research» (2009) հոդվածում փաստարկվում է այն գաղափարը, որ կառավարման հիմնախնդրի լուծման համար միջգիտակարգային մոտեցումը անհրաժեշտ է համալիր ռազմավարությունների և քաղաքականության ստեղծման նպատակով, որոնք հաշվի են առնում սոցիալական, հոգեբանական, տնտեսական և տեխնիկական գործոնները (Lawrence & Klein, 10):

2. Միջգիտակարգային մոտեցումը թույլ է տալիս կառավարման գործընթացի վերլուծության համար կիրառել բազմազան մեթոդներ և գործիքներ՝ մաթեմատիկական մոդելավորում, որակական և քանակական հետազոտություններ, քեյս-մեթոդներ և այլն: Յուրաքանչյուր գիտակարգ իր սեփական ներդրումն է կատարում՝ հարստացնելով կառավարման խնդիրների լուծման հնարավորությունները: Այս տեսանկյունից «Interdisciplinary Research: Process and Theory» (2012) աշխատության մեջ Ա. Ֆ. Ռեպկոն նշում է, որ միջգիտակարգային մոտեցումներն օգնում են հաղթահարելու այն հիմնախնդիրները, որոնք հնարավոր չէ արդյունավետությամբ լուծել մի գիտակարգի շրջանակներում: Այդ մոտեցումը ենթադրում է տարբեր

ոլորտներից գործիքների և մեթոդների կիրառություն խնդիրների համալիր վերլուծության և լուծման համար (Repko, 2012, p. 42):

3. Նորարությունները հաճախ առաջանում են տարբեր գիտակարգերի հատման արդյունքում: Միջգիտակարգային հետազոտությունները նպաստում են կառավարման նոր մոտեցումների զարգացմանը, ինչը շատ կարևոր է հարափոփոխ տնտեսական և սոցիալական միջավայրի պայմաններում: Այս տեսանկյունից «Handbook of Interdisciplinary Research» (2012) աշխատության մեջ բազմաթիվ հաջողված նախագծերի օրինակներ են բերվում, որտեղ միջգիտակարգային մասնագիտական թիմերը կարողացել են մշակել նորարական լուծումներ՝ հիմնվելով տարբեր գիտական ոլորտների գիտելիքների վրա (Van Beek, Frutinho, Smith & Hellström, 2012, p. 115):

Կառավարման բարդ և բազմամակարդակ հիմնախնդրի լուծման համար միջգիտակարգային մոտեցումները ենթադրում են տարբեր հայեցակետեր: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Կազմակերպչական վարք: Կազմակերպություններում մարդու վարքի ուսումնասիրությունը պահանջում է հոգեբանության, սոցիոլոգիայի և մարդաբանության գիտելիքների կիրառություն: Այդ գիտակարգերն օգնում են հասկանալու, թե ինչպես են մարդիկ փոխգործակցում, ընդունում որոշումներ և մոտիվացվում աշխատանքային միջավայրում:

2. Տնտեսագիտություն: Ֆինանսների և տնտեսական ռեսուրսների կառավարումը պահանջում է տնտեսագիտության ոլորտի գիտելիքներ: Այդ գիտելիքներն օգնում են լավարկել ռեսուրսների օգտագործումը և ընդունել հիմնավորված տնտեսական որոշումներ:

3. Տեխնոլոգիաներ և նորարարություններ: Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիաներն առանցքային դեր են խաղում կառավարման մեջ: Տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարագիտության և նորարարական մենեջմենթի ոլորտում գիտելիքներն անհրաժեշտ են տեխնոլոգիական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և նոր որոշումների ներդրման համար:

4. Իրավունք և էթիկա: Կառավարումը պետք է հաշվի առնի իրավական և էթիկական հայեցակետերը: Իրավունքի և էթիկայի ոլորտներում գիտելիքները ղեկավարներին օգնում են գործել օրենքի սահմաններում և պահպանել բարձր էթիկական չափորոշիչներ:

5. Մարքեթինգ և հաղորդակցական հմտություններ: Արդյունավետ կառավարումը պահանջում է մարքեթինգի և հաղորդակցության հմտությունների իմացություն: Այդ գիտակարգերն օգնում են մշակելու արտադրանքի և ծառայությունների խթանման

գործընթացը, նաև ձևավորելու արդյունավետ հաղորդակցական հմտություններ կազմակերպության ներսում և նրանից դուրս:

6. Ռազմավարական պլանավորում: Կառավարումն ընդգրկում է ռազմավարությունների մշակում և իրագործում: Մրցակցային միջավայրի վերլուծության և երկարաժամկետ պլանավորման համար անհրաժեշտ են գիտելիքներ ռազմավարական մենեջմենթի ոլորտում:

7. Սոցիալական և բնապահպանական գիտելիքներ: Ժամանակակից կառավարումը պետք է հաշվի առնի սեփական գործունեության սոցիալական և բնապահպանական հետևանքները: Սոցիոլոգիայի, բնապահպանության և կայուն զարգացման ոլորտի գիտելիքներն օգնում են սոցիալական և բնապահպանական պատասխանատվությանն ուղղված ռազմավարությունների մշակմանը և իրագործմանը:

Այսպիսով՝ կառավարումը բավական բարդ գործընթաց է, որը պահանջում է միջգիտակարգային մոտեցում: Դրա լուծման համար կազմակերպության ամբողջական և արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է տարբեր գիտակարգերից գիտելիքների և մեթոդների ներգրավում:

Վերը բերված կառավարման հիմնախնդրի ուսումնասիրության հայեցակետերից տեսնում ենք, որ այն կապված է բազմաթիվ գիտակարգերի հետ (Мирский, 2001), որոնցից հիմնականներն են.

1. Տնտեսագիտություն: Տնտեսագիտությունն ուսումնասիրում է ռեսուրսների արդյունավետ բաշխումը, ֆինանսավորումը, տնտեսական մոդելները և ռազմավարությունները, որոնք օգնում են կազմակերպությունների արդյունավետ գործառնությանը: Տնտեսագիտական վերլուծությունն օգնում է հասկանալու կառավարչական որոշումների ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի և կայունության վրա:

2. Սոցիոլոգիա: Սոցիոլոգիան ուսումնասիրում է սոցիալական կառուցվածքները, մարդկանց փոխհարաբերությունները և վարքը կազմակերպություններում: Սոցիոլոգիական հայեցակետերի իմացությունն օգնում է աշխատակիցների մոտիվացիայի, կոնֆլիկտների կառավարման և կորպորատիվ մշակույթի բարելավման արդյունավետ միջոցների մշակման գործում:

3. Հոգեբանություն: Հոգեբանությունն ուսումնասիրում է անհատական և խմբային վարքը, մոտիվացիան, լիդերությունը և որոշումների ընդունման հոգեբանական հայեցակետերը: Այդ գիտելիքները կարևոր են անձնակազմի կառավարման

ռազմավարությունների մշակման, արտադրողականության և աշխատակիցների բավարարվածության բարձրացման համար:

4. Քաղաքագիտություն: Քաղաքագիտությունը դիտարկում է իշխանության, ազդեցության և լիզերության հարցերը կազմակերպությունների կառավարման գործընթացում: Քաղաքագիտական տեսություններն օգնում են հասկանալ կազմակերպություններում իշխանության բաշխման և ռազմավարական որոշումների ընդունման հարցերը:

5. Իրավագիտություն: Իրավունքը կարգավորում է կազմակերպությունների գործունեությունը օրենքների և նորմատիվ ակտերի միջոցով: Իրավագիտական գիտելիքներն անհրաժեշտ են կազմակերպության շահերի իրավական պաշտպանության ապահովման, աշխատանքային օրենսդրության պահպանման և ռիսկերի կառավարման համար:

6. Տեղեկատվական տեխնոլոգիաներ: Տեղեկատվական տեխնոլոգիաներն առանցքային դեր են խաղում ժամանակակից կազմակերպությունների կառավարման գործում՝ ապահովելով գործընթացների ավտոմատացումը, տվյալների վերլուծությունը և որոշումների ընդունումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումն օգնում է նորարական որոշումների ներդրմանն ու կառավարչական գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

7. Նախագծերի կառավարում: Նախագծերի կառավարումն ուսումնասիրում է նախագծերի պլանավորման, կազմակերպման և վերահսկման մեթոդները: Այդ գիտելիքները շատ կարևոր են ժամանակի և ֆինանսների արդյունավետ կառավարման համար:

Այսպիսով՝ կառավարումը՝ որպես միջգիտակարգային ուսումնասիրության հիմնախդիր, պահանջում է տարբեր ոլորտներից գիտելիքների մեկտեղում կազմակերպությունների կառավարչական խնդիրների արդյունավետ լուծման և մրցունակության բարձրացման համար: Մեր աշխատանքում առավելապես կարևորում ենք հոգեբանական գիտելիքների դերն ու նշանակությունը կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման գործում:

Կառավարման բնագավառի միջգիտակարգային ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա հնարավոր է առանձնացնել նրա առավելությունները և մարտահրավերները:

Միջգիտակարգային ուսումնասիրության հիմնական առավելություններն են.

1. Հիմնախնդրի համալիր ընկալում: Միջգիտակարգային մոտեցումը թույլ է տալիս կառավարման ոլորտի հիմնախնդիրները

դիտարկել տարբեր տեսանկյուններից, ինչը նպաստում է ավելի խոր և բազմակողմանի գնահատմանը:

2. Նորարարական լուծումներ: Տարբեր գիտակարգերի գիտելիքների համակցումը նպաստում է նորարարական և ավելի արդյունավետ լուծումների մշակմանը:

3. Հարմարվողականություն և ճկունություն: Միջգիտակարգային գիտելիքները հնարավորություն են ստեղծում կազմակերպությունների համար՝ լինելու ավելի ճկուն և հարմարվող՝ հասարակության և շրջապատող միջավայրի փոփոխությունների նկատմամբ:

Միջգիտակարգային ուսումնասիրության հիմնական մարտահրավերներն են.

1. Գիտելիքների մեկտեղման դժվարությունը: Բավական բարդ է տարբեր գիտակարգերի գիտելիքների և մեթոդների՝ միասնական ամբողջության մեջ միավորելը:

2. Հաղորդակցության արգելքները: Տարբեր գիտակարգեր կարող են ունենալ իրենց հասկացությունները և մեթոդները, ինչը բավական դժվարացնում է հաղորդակցումն ու համագործացությունը:

3. Բազմակողմանի կրթության անհրաժեշտությունը: Գիտնականները պետք է օժտված լինեն տարբեր ոլորտներից խոր գիտելիքներով և հմտություններով, ինչն իր հերթին պահանջում է լրացուցիչ ժամանակ և ջանքեր ուսուցման համար:

Ինչպես վերը նշեցինք, կառավարումը՝ որպես միջգիտակարգային մոտեցում, միավորում է գիտակարգերի տարբեր ոլորտներ, այդ թվում՝ հոգեբանական: Այդ պատճառով առավել նպատակահարմար ենք համարում կառավարման և հոգեբանության միջգիտակարգային ուսումնասիրությունները առանձին դիտարկելը:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հոգեբանական գիտության զագացման մեջ յուրաքանչյուր պատմական փուլ բնութագրվում է իր գերակա ուղղություններով ու հիմնախնդիրներով, առաջատար մեթոդաբանական սկզբունքների իրագործման տարբեր մակարդակով, անհամաչափ զարգացումով և հետազոտության հիմնական մեթոդների կիրառությամբ: Ներկայումս հիմնական գերակայությունը միջգիտակարգային ուսումնասիրություններին է տրվում:

Ա. Լ. Ժուրավյովը գիտությունների համակարգում հոգեբանության տեղի մասին գրում էր, որ այն կարելի է բացատրել երեք գործոններով: Առաջինը *միջգիտակարգային կիրառական գործոնն է:* Հոգեբանական հետազոտությունները համոզիչ կերպով ապացուցում են, որ օբյեկտիվ

պահանջմունքներով առաջացած հոգեբանական գիտական հետազոտությունների մեջ հասարակական պահանջարկը իրենց էությամբ եղել են համակարգային և ընդգրկում են մի շարք գիտաճյուղեր: Որպես ակնհայտ օրինակներ կարելի է բերել նման պահանջարկների հետևյալ թեմաները՝ ճգնաժամային հասարակության մեջ անհատական և խմբային գիտակցության ձևավորումը, մարդկանց զանգվածային հարմարումն արմատականորեն փոփոխվող տնտեսական և քաղաքական պայմաններին, ժամանակակից տեխնիկայի և նորագույն տեխնոլոգիաների յուրացումը և այլն: Հոգեբանական գիտության և հասարակական փորձի այդ փոխգործակցությունը վերջին տարիներին հոգեբաններին հանգեցրեց միջգիտակարգային հետազոտությունների խիստ անհրաժեշտության գիտակցմանը (Жыравлев, 2002, с. 2): Երկրորդը *միջգիտակարգային ներքին գործոնն է*: Եթե արտամիջարկենք միջգիտաճյուղայնության գաղափարը հոգեբանական գիտելիքի ոլորտ, ապա պարզ կդառնա, որ ոչ միայն հարակից (օրինակ՝ մանկավարժություն), այլև փոխհեռավոր գիտությունները (օրինակ՝ ֆիզիկա) այլ գիտություններին դիմելու պահանջ ունեն: Դա գիտության զարգացման ներքին օրինաչափությունների արդյունք է, այդ թվում՝ հոգեբանության, և դրանով բնութագրում է նրա ժամանակակից կարգավիճակը (Жыравлев, 2002, с. 3): Երրորդը *միջգիտակարգային արտաքին գործոնն է*: Այլ գիտությունների՝ բժշկության, մանկավարժության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի ներկայացուցիչները գիտակցում են, որ գիտության ինքնուրույն ու ինքնաբավ զարգացման ճանապարհն ունի նաև ակնհայտ սահմանափակումներ (Жыравлев, 2002, с. 3):

Հոգեբանական մոտեցման տեսանկյունից կառավարման հիմնախնդրի ուսումնասիրության հիմքում հոգեբանական տեսությունների և մեթոդների կիրառումն է կառավարչական գործընթացներում, ինչպես նաև աշխատակիցների՝ կառավարչական սկզբունքների օգտագործումը հոգեբանական բարեկեցության ապահովման գործում: Ուստի կարևորում ենք կառավարման հոգեբանական հիմնական հայեցակարգերը:

1. Կազմակերպչական հոգեբանություն: Ժամանակակից սոցիալական հոգեբանության հայեցակարգերից մեկի հիմնադիր Կուրտ Լևինն ուսումնասիրում էր սոցիալական խմբերը և կազմակերպություններում խմբային փոփոխությունների շարժընթացը: Նրա աշխատությունները, հատկապես «Field Theory in Social Science» (1951), ընդգծում են մարդկային վարքի ընկալման կարևորությունը կազմակերպչական փոփոխությունների համատեքստում (Lewin, 1951, p.

236): Ապա Էդգար Շեյնն իր «Organizational Culture and Leadership» (1985) գրքում ներկայացնում է կազմակերպությունների վարքի և գործունեության արդյունավետության վրա մշակույթի և լիդերության ազդեցության ուսումնասիրությունը (Schein, 1985, p. 358):

2. Կառավարման տեսություններ: «General and Industrial Management» (1916) աշխատության մեջ Անրի Ֆայոլն առանձնացնում է կառավարման հիմնական գործառույթները՝ պլանավորում, կազմակերպում, դեկավարում, համակարգում և վերահսկողություն (Fayol, 1916): Պիտեր Դրուքերն իր «The Practice of Management» (1954) աշխատության մեջ կառավարումը դիտարկում է որպես բազմաբնույթ գործառույթ՝ ընդգծելով նպատակների և մոտիվացիայի կարևորությունը (Drucker, 1954, p. 416):

3. Մոտիվացիա և լիդերություն: Աբրահամ Մասլոուի՝ պահանջմունքների հիերարխիայի տեսությունը հաճախ կիրառվում է կառավարման գործընթացում աշխատակիցների մոտիվացիան հասկանալու և մեկնաբանելու համար (Maslow, 1943, p. 96): Դուգլաս ՄաքԳրեգորը «The Human Side of Enterprise» (1960) աշխատության մեջ նկարագրում է X և Y տեսությունը՝ բացատրելով տարբեր մոտեցումները կառավարման և մոտիվացիայի գործում:

4. Վարքային տնտեսագիտությունը և կառավարումը: Դանիել Քանեմանը «Thinking, Fast and Slow» (2011) աշխատության մեջ ներկայացնում է որոշումների ընդունման վրա ազդող կոգնիտիվ և հուզական գործոնները (Kahneman, 2011, p. 499): Ռիչարդ Թալերը և Քաս Սանսթեյնը «Nudge: Improving Decisions About Health, Wealth, and Happiness» (2008) գրքում ներկայացնում են, թե շրջապատում կատարվող նույնիսկ փոքր փոփոխություններն ինչպես կարող են ազդել մարդկանց վարքի վրա (Thaler, 2008, p. 304):

5. Համակարգային մոտեցումը կառավարման նկատմամբ: Լյուդվիգ Ֆոն Բերթալանֆիի կողմից մշակված մոտեցումը կազմակերպությունը դիտարկում է որպես փոխկապակցված մասերի համակարգ, որը թույլ է տալիս հաշվի առնել հոգեբանական և կառավարչական հայեցակետերը մեկտեղված (Von Bertalanffy Ludwig General System Theory, 1968):

6. Ինքնորոշման տեսություն: Է. Դեսիի և Ռ. Ռայանի կողմից մշակված այս տեսությունն ընդգծում է կառավարման մեջ ինքնավարության, կոմպետենտության և կապակցելիության կարևորությունն աշխատակիցների մոտիվացման և արդյունավետության համար (Deci & Ryan, 1985):

Այսպիսով՝ միջգիտակարգային հոգեբանական մոտեցումը կառավարման հիմնախնդրի նկատմամբ միավորում է հոգեբանական և կառավարչական գիտելիքները կառավարման առավել համալիր ու արդյունավետ ռազմավարությունների ստեղծման համար: Վերը բերված տեսությունների հիման վրա կարելի է առանձնացնել այս մոտեցման առավել տարածված օրինակներ:

1. Ուսուցում և զարգացում: Ուսուցման հոգեբանական մեթոդները (օրինակ՝ կոգնիտիվ-վարքային թերապիան) կարող են օգտագործվել աշխատակիցների մասնագիտական զարգացման ծրագրերի մշակման համար:

2. Կազմակերպչական մշակույթի փոփոխություն: Կազմակերպչական վարքի հոգեբանությունն օգնում է հասկանալ և փոփոխել կազմակերպչական մշակույթը արդյունավետության և հարմարվողականության բարձրացման նպատակով:

3. Կոնֆլիկտների կառավարում: Հաղորդակցման և կոնֆլիկտաբանության հոգեբանական տեսություններն օգնում են կառավարիչներին արդյունավետորեն հանգուցալուծելու կոնֆլիկտները և բարելավելու թիմային փոխգործակցությունը:

4. Նորարարություն և ստեղծարարություն: Ստեղծարարության հոգեբանական ուսումնասիրությունները կարող են կիրառվել կազմակերպությունում կառավարչական պրակտիկայի մեջ նորարարությունների խթանման նպատակով:

Եզրակացություն

Կառավարման գործընթացում միջգիտակարգային, մասնավորապես հոգեբանական մոտեցումը թույլ է տալիս հաշվարկել աշխատակիցների վարքի հոգեբանական առանձնահատկություններն ի նպաստ արդյունավետ ղեկավարման և կազմակերպչական մշակույթի բարելավման: Այդ ոլորտում ուսումնասիրությունները շարունակում են զարգանալ՝ առաջարկելով կազմակերպություններում արդյունավետության և բարեկեցության բարձրացման նոր մեթոդներ և կառավարման մոդելներ:

Հոգեբանության և կառավարման գիտելիքների միավորումը թույլ է տալիս ստեղծել կառավարման առավել ամբողջական և հարմարողական մոտեցումներ, որի արդյունքում կարող է բարձրանալ կազմակերպությունների կառավարման արդյունավետությունը և կայունությունը:

Այսպիսով՝ կառավարման միջգիտակարգային ուսումնասիրության հիմնախնդրի կարևորությունը այն է, որ վերջինս ընդգրկում է ոչ միայն

վարչական և կազմակերպչական հայեցակետեր, այլև սոցիալական, հոգեբանական, տնտեսական և տեխնոլոգիական գիտելիքներ: Միջգիտակարգային ուսումնասիրությունը թույլ է տալիս միավորել հարակից գիտակարգերի գիտելիքներն ու մեթոդները, ինչը նպաստում է կառավարման համալիր ռազմավարությունների առավել խոր հասկանալուն ու նոր գործիքակազմի մշակմանը, օգնում է ստեղծելու առավել արդյունավետ ու կայուն կառավարչական մոդելներ, որոնք հնարավորություն կտան արդյունավետորեն հակազդել հարափոփոխ աշխարհի պայմաններին ու մարտահրավերներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Журавлев А.Л. (2002). Специфика междисциплинарных исследований в современной психологии. //Психологический журнал. № 6. С.2.
Zhuravlev A. L. (2002). Specifika mezhdisciplinarnyh issledovanij v sovremennoj psihologii. //Psihologicheskij zhurnal. № 6. S.2.(In Russian)
2. Мирский Э. М. (2001). Междисциплинарные исследования. //Новая философская энциклопедия. Т. 2. М.: С. 518.
Mirskij Je. M. (2001). Mezhdisciplinarnye issledovanija. //Novaja filosofskaja jenciklopedija. Т. 2. М.: S. 518. (In Russian)
3. Тульчинский Г.Л. (2003). Проективный философский словарь: Новые термины и понятия (Текст) /Г.Л. Тульчинский. - СПб.: Алетей. - 432 с.
Tul'chinskij G. L. (2003). Proektivnyj filosofskij slovar': Nove termíny i ponjatija (Tekst) /G.L. Tul'chinskij. - SPb.: Aleteja.- 432 s. (In Russian)
4. Deci, E. L., & Ryan, R.M. (1985). Intrinsic motivation and self-determination in human behavior. Springer. 372 p.
5. Drucker, P.F. (1954). The Practice of Management. Harper & Row, New York. 416. p.
6. Fayol, H. (1916). General and Industrial Management. Institute of Electrical and Electronics Engineering, Paris.
7. Jacobs H. H. (1986). The Interdisciplinary Concept Model: Theory and Practice (Text) /H.H. Jacobs, J.H. Borland //Gifted Child Quarterly. - No. 4. - p. 159–163.

8. Kahneman, D. (2011). Thinking, fast and slow. Farrar, Straus and Giroux. 499 p.
9. Lewin K. Field (1951). Theory in Social Science: Selected Theoretical Papers, Cartwright D., Ed. (Harper and Row, New York, 236 p.
10. Lawrence, P.R.H., & Klein, H.E. (2009). The challenge of interdisciplinary research. Accounting, Auditing & Accountability Journal, 22(7), 1027-1030. <https://doi.org/10.1108/09513570910987369>
11. Maslow, A. (1943). A Theory of Human Motivation Psychological Review 50, 370–96.
12. Repko A.F. (2012). Interdisciplinary research: process and theory. 2nd ed. Los Angeles: SAGE. 509 p.
13. Schein, Edgar H. (1985). Organizational Culture and Leadership. San Francisco: Jossey-Bass, 358 p.
14. Thaler, Richard H., and Cass R. Sunstein (2008). Nudge: Improving Decisions About Health, Wealth, and Happiness. Yale University Press. 304 p.
15. Van Beek, F., Frutinho, J., Smith, C., & Hellström, M. (2012). Handbook of Interdisciplinary Research. Springer.
16. Von Bertalanffy Ludwig (1968). General System Theory: Foundations, Development, Applications. George Braziller. 296 p.

ЛИЛИТ ЛАЧИНЯН - УПРАВЛЕНИЕ КАК ОБЪЕКТ МЕЖДИСЦИПЛИНАРНЫХ ИССЛЕДОВАНИЙ

Ключевые слова: менеджмент, психология менеджмента, междисциплинарный подход, организационное поведение, стратегическое планирование, системный подход

Исследования в области менеджмента сосредоточены на изучении междисциплинарных проблем, особенно в таких областях, как организационное поведение, информационные технологии, инженерия, инновационный менеджмент, юридические и этические вопросы, управление финансовыми и экономическими ресурсами, а также социально-психологические аспекты разработки и продвижения инструментов коммуникации и маркетинговой стратегии. Вопросы,

связанные с управлением, рассматриваются при опоре на междисциплинарный подход, подкрепленный теоретическими и методологическими основами, таких сфер знаний как менеджмент, экономика и психология. С этой точки зрения мы можем выделить две формы междисциплинарного взаимодействия: во-первых, интеграцию систем знаний этих дисциплин и, во-вторых, изучение различных точек зрения исследователей, занимающихся одной и той же проблемой.

В настоящей статье мы подчеркиваем важность изучения проблем управления с точки зрения интеграции междисциплинарных знаний и коммуникативных барьеров, которые возникают, когда разные научные дисциплины привносят свои собственные концепции и методологии для решения процессов междисциплинарного сотрудничества в рамках менеджмента и процесса его организации.

LILIT LACHINYAN - MANAGEMENT AS AN OBJECT OF INTERDISCIPLINARY RESEARCH

Keywords: *management, management psychology, interdisciplinary approach, organizational behavior, strategic planning, systematic approach.*

Management research focuses on exploring interdisciplinary challenges, particularly in areas such as organizational behavior, information technology, engineering, innovative management, legal and ethical issues, financial and economic resource management, as well as the socio-psychological aspects of developing and promoting communication tools and marketing strategies. As a result, management issues are examined through interdisciplinary approaches, with theoretical and methodological foundations grounded in fields such as management, economics, and psychology. From this perspective, we can identify two forms of cross-disciplinary interaction: first, the integration of knowledge systems from these disciplines, and second, the examination of diverse perspectives from researchers addressing the same issue.

In this article, we emphasize the importance of studying management issues from the perspective of interdisciplinary knowledge integration and the communication barriers that arise when different scientific disciplines bring their own concepts and methodologies to address the process of interdisciplinary cooperation in management and its organization.

Ներկայացվել է՝ 13.11.2024 թ.

Գրախոսվել է՝ 18.11.2024 թ.

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ
ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՍԹՐԵՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ**

**ԳԱՐԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվում են պատերազմի մասնակից հայ, ասորի, եզդի զինծառայողների էթնիկական նույնականության տեսակի և սթրեսակայունության կապի համեմատական վերլուծության արդյունքները: Աշխատանքի տեսամեթոդաբանական հիմք են կազմել էթնիկական նույնականությանը և անձի սթրեսակայունությանը վերաբերվող հոգեբանական տեսություններն ու հայեցակարգերը, որոնց հիման վրա ընտրվել են հետազոտության համապատասխան մեթոդներ և մեթոդիկաներ: Ստացված արդյունքների համահարաբերակցային կապերի վերլուծությունները ցույց են տալիս, որ արտակարգ իրավիճակներում սթրեսակայունության բարձր մակարդակ ունեցող՝ պատերազմի մասնակից զինծառայողները կարողանում են պահպանել սեփական ազգային նույնականության զգացումը, և հակառակը՝ սթրեսակայունության ցածր մակարդակում թուլանում են ազգային նույնականության դրսևորումները: Հետազոտության արդյունքները հաստատում են այն ենթադրությունը, որ գոյություն ունի ուղիղ համահարաբերակցային կապ դրական էթնիկական նույնականության և սթրեսակայունության մակարդակի միջև: Պատերազմի մասնակիցների շրջանում էթնիկական նույնականության և սթրեսակայունության միջև դրական կապը կարող է բացատրվել նրանով, որ ուժեղ դրական էթնիկական նույնականություն ունեցող զինծառայողները գտնում են աջակցություն նշանակալի խմբի անդամներից, ինչը նպաստում է նաև սթրեսակայունության մակարդակին: Պատերազմի պայմաններում նշանակալի խմբի աջակցությունն առավել կարևոր է դառնում, քանի որ սթրեսային պայմաններում խմբի հետ էթնիկական նույնականությունը դրսևորվում է որպես հոգեբանական պաշտպանական մեխանիզմ:

Հիմնաբառեր՝ էթնիկական ինքնագիտակցություն, մարտական սթրես, պատերազմ, պատերազմի մասնակից, էթնոնիհիլիզմ, էթնիկական անտարբերություն, էթնոէգոիզմ, էթնոմեկուսացում, էթնոֆանատիզմ:

Ներածություն

Զինված ուժերի մարտունակության, հոգեբանական, հոգեվերականգնողական աշխատանքների արդյունավետության բարձրացման տեսանկյունից հոգեբանական գիտության խնդիրներից մեկը վերաբերում է այս բնագավառում զինծառայողների հոգեհուզական ոլորտի, սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություններին: Այս տեսանկյունից մեր աշխատանքի նպատակն է բացահայտել պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական նույնականության և սթրեսակայունության փոխադարձ կապը, ինչը կարող է բացահայտել, թե ինչպես են սոցիալական և մշակութային գործոնները նպաստում պատերազմի մասնակից զինծառայողների հոգեբանական կայունության և մարտական պատրաստվածության բարձրացմանը:

Էթնիկական ինքնագիտակցության ուսումնասիրություններում հանդիպում ենք «ազգային ինքնագիտակցություն», «էթնիկական գիտակցություն», «էթնիկություն», «էթնիկական նույնականություն», «էթնիկական նույնականացում» հասկացություններին: Վերջին տարիներին էթնոհոգեբանների ուսումնասիրության առարկա է դարձել ոչ թե էթնիկական ինքնագիտակցությունը, այլ էթնիկական նույնականությունը՝ կապված տվյալ երևույթի էմպիրիկ ուսումնասիրության ծրագրի կառուցման հետ, որտեղ որպես ընդհանուր մեթոդաբանական հիմք սովորաբար հանդես են գալիս սոցիալ-հոգեբանական տեսությունները (Է. Էրիքսոնի՝ հոգեսոցիալական նույնականության (Эриксон, 1996), Չ. Կուլիի՝ նույնականության (Cooley, 1902), Հ. Թէջֆելի և Ջ. Թյորների՝ սոցիալական նույնականության տեսությունները (Tajfel Henri & John C. Turner, 1979): Այդ տեսությունների միջոցով էթնիկական նույնականության ուսումնասիրությունը հնարավոր է դիտարկել տարբեր սոցիալ-հոգեբանական տեսանկյուններից, ինչն օգնում է ավելի լավ հասկանալու՝ ինչպես է ձևավորվում էթնիկական նույնականությունը և ինչ դեր է խաղում այն հասարակության մեջ:

Օ. Գ. Լոպուխովան նույնացնում է էթնիկություն, էթնիկական նույնականություն և էթնիկական ինքնագիտակցություն հասկացությունները: Էթնիկությունը (էթնիկական նույնականությունը, էթնիկական ինքնագիտակցությունը)՝ մարդու պատկերացումն է սեփական անձի մասին որպես որոշակի էթնիկական խմբի անդամի՝ այդ

խմբային պատկանելիությանը վերագրվող հուզական և արժեքային նշանակության հետ մեկտեղ (Понхова, 2015, с. 11):

Գ. Ու. Սոլդատովան էթնիկական նույնականությունը սահմանում է որպես ինքնագիտակցության կոգնիտիվ-մոտիվացիոն միջուկ, որը միջնորդավորում է միջէթնիկական փոխգործողությունը (Солдатова, 1998, с. 43): Մեր հետազոտության մեջ հիմնվում ենք Գ.Ու. Սոլդատովայի կողմից առաջարկված էթնիկական նույնականության տեսակների դասակարգման վրա, որը բավական մանրամասնորեն ներկայացնում է նույնականացման տարբեր մակարդակները:

էթնիկական նույնականությունն անձի սոցիալական նույնականության բաղկացուցիչ մաս է, որը բերում է որոշակի էթնիկական հանրության սեփական պատկանելության գիտակցման: Դրա հետ միասին անհրաժեշտ է տարբերակել էթնիկական նույնականության և էթնիկության սոցիոլոգիական հիմքերը, որը սահմանվում է էթնիկական պատկանելության մի շարք օբյեկտիվ հատկանիշներով՝ ծնողների էթնիկական պատկանելությամբ, ծննդավայրով, լեզվով, մշակույթով, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ իրական կյանքում այն ոչ միշտ է համընկնում իրական էթնիկության հետ: Էթնիկական նույնականությունը որոշակի էթնոսի ներկայացուցչի կոգնիտիվ-հուզական գործընթացի գիտակցման, սեփական անձի՝ տվյալ էթնիկական խմբի հետ նույնականացման և այլ էթնոսներից առանձնանալու արդյունք է:

Գ. Գ. Շպետը նշում էր, որ մարդու պատկանելությունը որոշակի էթնոսին չի սահմանվում կենսաբանական ժառանգականությամբ, այլ հոգևոր տեսանկյունից՝ մշակութային արժեքներին և սրբություններին նրա հաղորդակից լինելով: Հեղինակը էթնիկական նույնականությունը սահմանում է որպես սեփական նույնականության վերապրում՝ հանրության մեջ ինքն իրեն մյուսներից առանձնացնելով (Шпет, 2014):

Գ. Ու. Սոլդատովայի և Ս. Վ. Ռիժովայի էթնիկական նույնականության հայեցակարգում դիտարկվում են էթնիկական ինքնագիտակցության տեսակները և դրա փոխակերպումները բազմամշակութային փոխգործողության ու միջէթնիկական լարվածության պայմաններում: Էթնիկական անհանդուրժողականության աճը էթնիկական նույնականության վերափոխման ցուցանիշներից է: Ժողովուրդների միջև լարվածության աճի պայմաններում հանդուրժողականությունը կամ անհանդուրժողականությունը միջէթնիկական հարաբերությունների հիմնական խնդիրներից են: Նույնականության տեսակները էթնիկական հանդուրժողականության արտահայտվածության տարբեր որակով և աստիճանով առանձնացված

են էթնոցենտրիզմի հիման վրա. նույնականության մերժումը, անհանդուրժողականությունը սեփական էթնիկական խմբի նկատմամբ, ազգային ֆանատիզմը կրում են էթնիկական խմբերի նկատմամբ անհանդուրժողականության և նեգատիվիզմի բարձրագույն դրսևորում: էթնիկական նույնականությունը ներառում է՝

1. էթնոնիհիլիզմ՝ սեփական էթնիկական խմբից հեռացում է և կայուն սոցիալ-հոգեբանական կազմավորումների որոնում ոչ էթնիկական չափորոշչով:

2. էթնիկական անտարբերություն՝ էթնիկական պատկանելության անորոշություն, անձի համար էթնիկության անկարևորություն:

3. Նորմա (դրական էթնիկական նույնականություն)՝ սեփական ժողովրդի նկատմամբ դրական վերաբերմունքի համակցությունն այլ ժողովուրդների նկատմամբ նորմալ վերաբերմունքի հետ: Բազմաէթնիկ հասարակության մեջ դրական էթնիկական նույնականությունն ունի նորմայի բնույթ և բնորոշ է ճնշող մեծամասնությանը: Այն առաջադրում է հանդուրժողականության հավասարկշռություն սեփական և այլ էթնիկական խմբերի նկատմամբ, ինչը թույլ է տալիս վերջինս դիտարկել որպես էթնիկական խմբի ինքնուրույնության, կայուն գոյության և խաղաղ միջմշակութային փոխգործողության պայման բազմաէթնիկ աշխարհում:

4. էթնոէգոիզմ՝ նույնականության տվյալ տեսակը կարող է արտահայտվել անվնաս ձևով խոսքային մակարդակում «իմ ժողովուրդ» կառույցի տեսանկյունից, սակայն կարող է լարվածություն առաջացնել այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների հետ հաղորդակցման ընթացքում, կամ էլ սեփական էթնոսի խնդիրները «ուրիշի» հաշվին լուծելու իրավունքի ընդունման տեսանկյունից:

5. էթնոմեկուսացում՝ վստահությունը սեփական ժողովրդի գերազանցության մեջ, ազգային մշակույթի «մաքման» անհրաժեշտության պնդումը, բացասական վերաբերմունքը միջէթնիկական ամուսնություններին, քսենոֆոբիան:

6. էթնոֆանատիզմ՝ հանուն էթնիկական շահերի ցանկացած գործողությունների դիմելու պատրաստակամություն, ընդհուպ՝ էթնիկական գտումներ, այլ ժողովուրդներին հնարավորություններից ու սոցիալական արտոնություններից օգտվելու իրավունքից մերժում, մարդու իրավունքների նկատմամբ ժողովրդի էթնիկական իրավունքների գերակայության ընդունում, սեփական ժողովրդի բարեկեցության համար ինքնազոհության արդարացում (Солдатова, 1998):

Պատերազմական իրադրությունը՝ որպես առանձնահատուկ սթրեսածին գործոն, կարող է անդրադառնալ դրան մասնակից

զինճառայողների էթնիկական նույնականությանը կամ էթնիկական ինքնագիտակցությանը: Պատերազմի անբարենպաստ ելքին բախված զինճառայողները, եթե խախտվել են իրենց ազգային արժեքները և իդեալները, կարող են ունենալ էթնիկական նույնականության կորուստ, որը հանգեցնում է հիասթափության և կասկածների սեփական ազգի և նրա արժեքների նկատմամբ (Sareen, & et al., 2014): Արդյունքում պատերազմի ելքը կարող է առաջացնել պատմական հեռանկարի վերանայում զինճառայողների շրջանում: Նրանք կարող են վերագնահատել պատերազմի նշանակությունը և արժեքները, որոնք կապում էին էթնիկական նույնականության հետ և վերաիմաստավորել վերաբերմունքը սեփական երկրի և նրա քաղաքականության նկատմամբ: Պատմական հեռանկարի վերանայումը կարող է զինճառայողներին խթանել էթնիկական նույնականության նոր ձևերի որոնման: Այսինքն՝ դիմել նույնականության այլ աղբյուրների՝ համամարդկային արժեքներ, աշխարհաքաղաքականություն, գլոբալիստական պատկանելություն, և վերաիմաստավորել սեփական տեղը էթնիկական հանրության մեջ (Лопыхова, 2015):

Անդրադառնալով անձի սթրեսակայունությանը, պետք է նշել, որ ժամանակակից մարտական գործողությունները, որպես կանոն, զինճառայողների մոտ ուղեկցվում են բարձր սթրեսաձին ներգործությամբ: Գոյություն ունեն տարբեր մոտեցումներ մարտական սթրեսի էության վերաբերյալ: Մարտական սթրեսը զինճառայողի կենսագործունեության համար անբարենպաստ պայմաններին հարմարվելու ընթացքում վերապրվող վիճակների համախումբ է, որը վտանգի տակ է դնում զինճառայողի կենսականորեն կարևոր արժեքները (Арзамаскин, Вакаров, 2004): Մարտական սթրես ապրելու հաճախականությունը կախված է երկու հիմնական գործոնների փոխգործողությունից՝ զինճառայողի հոգեկանի վրա մարտական սթրեսաձին ներգործության ուժից ու տևողությունից և դրանց զինճառայողի հակազդման առանձնահատկություններից (Зеленков, 2000):

Մարտական իրադրության սթրեսաձին ներգործությանը զինճառայողի հակազդումը կախված է և՛ դրանց նշանակությունից մարտական գործողությունների կոնկրետ մասնակցի համար, և՛ հաղթահարող վարքի առանձնահատկություններից: Զինճառայողի հոգեկանին մարտական սթրեսորների ներգործության նշանակությունը որոշվում է անհատական առանձնահատկություններով, մարտական գործողություններ վարելու հոգեբանական և մասնագիտական պատրաստականությամբ, մարտական մոտիվացիայի բնույթով և

մակարդակով, զինծառայողի կողմից պատմության մեջ և նրա կենսագործունեության համակարգի հեռանկարում մարտական գործողությունների տեղի և դերի ընկալման առանձնահատկություններով (Арзамаскин, Бублик, 2002):

Պատերազմի մասնակից զինծառայողների հաղթահարող վարքը և սթրեսակայունությունը կախված է նրանց ակտիվության մակարդակից, որն ուղղված է մարտական իրադրության սթրես-գործոնների նեգատիվ ներգործություններին հակազդեցության, վարքի և կենսագործունեության վրա մարտական սթրեսածին գործոնների ապակայունացնող ներգործության հաղթահարմանն ուղղված օգտագործվող եղանակների բնույթից, նաև զինծառայողների՝ մարտական իրադրության մեջ հաղթահարող վարքի փորձով և նրա բովանդակությամբ:

Զինծառայողների շրջանում մարտական սթրեսի դրսևորումների ուժի և հաճախականության վրա ազդող մի շարք իրադրային և անձնային գործոնների հետ միասին առանձնացվում են նաև որոշ սոցիալական, բարոյական, կրոնական, ընտանեկան, էթնիկական և այլ հանգամանքներ: Այսինքն՝ անձի էթնիկական նույնականության վրա կարող են ազդել հետևյալ արտաքին և ներքին գործոնները.

1. Պատերազմի նկատմամբ բացասական վերաբերմունքն այն երկրում, որի քաղաքացին մարտական գործողություններին մասնակից զինծառայողն է,

2. զինծառայողի՝ անցյալում մարտական սթրեսի ապրման բացասական փորձը,

3. զինծառայողի՝ մինչմարտական կենսագործունեությունը հաղթահարող վարքի աննշան անձնական փորձը,

4. մարտի մասնակցի էթնիկական պատկանելությունը հակառակորդի զինվորների համար, հատկապես, եթե զինծառայողը պատկանում է ազգային փոքրամասնության,

5. մարտական գործողությունների մասնակցի կրոնական դավանանքի նմանությունը հակառակորդի զինվորների կրոնական դավանանքին, հատկապես, եթե զինծառայողն իր երկրում պատկանում է կրոնական փոքրամասնության,

6. մարտական գործողությունների մասնակցի իզական սեռին պատկանելը,

7. զինծառայողի բարդ ընտանեկան վիճակը,

8. զինծառայողի կամ նրա ընտանիքի անդամների նյութական և սոցիալական բարդ դրությունը (Опыт морально-психологического обеспечения действий группировки войск в операции по восстановлению конституционного порядка в Чеченской Республике, 2001):

Այսպիսով, ենթադրում ենք, որ պատերազմական սթրեսի ազդեցության պայմաններում ազգային արժեքների, իդեալների փոփոխությունները նպաստում են զինծառայողների էթնիկական նույնականության տեսակի և սթրեսակայունության միջև փոխադարձ կապին:

Հետազոտություն

Հետազոտության կատարման համար կիրառվել են Գ.Ու. Սոլդատովայի և Ս.Վ. Ռիժովայի՝ էթնիկական նույնականության տեսակների որոշման և Սթրեսակայունության բոստոնյան հարցարանները՝ նպատակ ունենալով բացահայտելու հետպատերազմյան շրջանում պատերազմի մասնակիցների էթնիկական նույնականության գերակշիռ տեսակը և սթրեսակայունության հետ դրա կապը: Հետազոտությանը մասնակցել է երկու խումբ՝ փորձարարական (ՓԽ)՝ մարտական գործողությունների մասնակից զինծառայողների և ստուգիչ (ՍԽ)՝ մարտական գործողություններին չմասնակցած: Հետազոտական երկու խմբերում էլ ընդգրկված են երեք ազգությունների ներկայացուցիչներ՝ հայ, եզդի և ասորի, որոնք ՀՀ բնակիչներ են (տես՝ աղյուսակ 1.):

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքը

		մարտական գործողությունների մասնակցած	մարտական գործողությունների չմասնակցած	ընդհանուր
ազգություն	ասորի	33	35	68
	եզդի	49	45	94
	հայ	123	125	248
ընդհանուր		205	205	410

Գ. Ու. Սոլդատովայի և Ս.Վ. Ռիժովայի՝ էթնիկական նույնականության տեսակների որոշման և Սթրեսակայունության բոստոնյան հարցարաններից ստացված տվյալները ենթարկելով համահարաբերակցային վերլուծության՝ պարզեցինք, որ պատերազմին մասնակցած ու չմասնակցած զինծառայողների սթրեսակայունության և ազգային նույնականության տեսակների միջև առկա են որոշակի կապեր (տես՝ աղյուսակ 2.): Հետազոտության արդյունքները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության SSPS ծրագրով: Համահարաբերակցային գործակիցը որոշվել է 2. Է. Սպիրմենի կողմից առաջադրված բանաձևով:

Աղյուսակ 2. Գ. Ու. ՍոլբափոՎայի և Ս.Վ. Ռիժովայի՝ Էթնիկական նույնականության տեսակների որոշման և Սթրեսակայունության բուստոնյան հարցարաններից ստացված համահարաբերակցային կապերը

Էթնիկական նույնականության տեսակը	Փխ սթրեսակայունություն համահարաբերակց. կապ	Սխ սթրեսակայունություն համահարաբերակց. կապ
Էթնոնիիլիզմ	0,1	-0,1
<i>Ասորի</i>	0,05	0
<i>Եզդի</i>	0,1	-0,05
<i>հայ</i>	0,1	-1
Էթնիկական անտարբերություն	-0,3	0,1
<i>Ասորի</i>	-0,2	0,2
<i>Եզդի</i>	-0,2	0,1
<i>հայ</i>	-0,4	0,1
Դրական էթնիկական նույնականություն (նորմա)	0,5	0,3
<i>Ասորի</i>	0,6	0,4
<i>Եզդի</i>	0,6	0,5
<i>հայ</i>	0,5	0,3
Էթնոէզդիզմ	0,3	0,2
<i>Ասորի</i>	0,3	0,2
<i>Եզդի</i>	0,4	0,3
<i>հայ</i>	0,3	0,2
Էթնոմեկուսացում	-0,2	-0,3
<i>Ասորի</i>	-0,1	-0,4
<i>Եզդի</i>	-0,2	-0,2
<i>հայ</i>	-0,2	-0,3
Էթնոֆանատիզմ	-0,1	0,2
<i>Ասորի</i>	-0,2	0,1
<i>Եզդի</i>	-0,1	0,2
<i>հայ</i>	-0,1	0,2

Էթնիկական անտարբերության և սթրեսակայունության միջև կապը ($r=-0,3$) բացատրում ենք հետևյալ կերպ. զինժառայողների էթնիկական անտարբերության բարձր մակարդակի դեպքում սթրեսակայունությունն իջնում է: Այս կապը հատկապես նկատվում է հայ զինժառայողների շրջանում և կարող է ցույց տալ, որ պատերազմի ընթացքում էթնիկական անտարբերությունը կարող է փոքր-ինչ իջեցնել սթրեսակայունության մակարդակը: Դա կարող է պայմանավորված լինել պատերազմի ոչ ցանկալի ընթացքով և դրա բովանդակությամբ, որի դեպքում էթնիկական անտարբերությունը բերում է բացասական հույզերի, ինչը բացասաբար է անդրադառնում անձի սթրեսակայունության վրա: Դրական էթնիկական նույնականության և սթրեսակայունության միջև կապը ուղիղ համեմատական է, որը բացատրում ենք այն բանով, որ բարձր դրական էթնիկական նույնականությունը կապված է ավելի բարձր սթրեսակայունության հետ: Այս կապն արտահայտվում է պատերազմի մասնակցած հետազոտված բոլոր ազգերի զինժառայողների շրջանում: Սա կարող է ցույց տալ, որ էթնիկական նույնականությունն օգնում է զինժառայողներին առավել ուժեղ աջակցություն զգալ, նպաստել սթրեսի դիմակայմանը: Ստուգիչ խմբում դրական էթնիկական նույնականության և սթրեսակայունության միջև ստացված կապն ավելի թույլ է, ինչը վկայում է այն մասին, որ պատերազմին չմասնակցած զինժառայողների մոտ էթնիկական նույնականության դրական ազդեցությունը սթրեսակայունությանը նկատելի է, բայց ոչ այնքան ուժեղ, որքան պատերազմին մասնակցածների շրջանում:

Էթնոէգոիզմի և սթրեսակայունության միջև կապը (ՓԽ՝ $r=0,3$; ՍԽ՝ $r=0,2$) թույլ դրական կապ է, ինչը նշանակում է, որ զինժառայողների մոտ բարձր էթնոէգոիզմի դեպքում սթրեսակայունությունը մի փոքր ավելի բարձր է, և որոշ չափով էթնոէգոիզմը կարող է ունենալ դրական ազդեցություն սթրեսակայունության վրա, թեպետ առկա է թույլ կապ:

Էթնոմեկուսացման և սթրեսակայունության միջև հետազոտության արդյունքում ստացվել է (ՓԽ՝ $r=-0,2$; ՍԽ՝ $r=-0,3$) թույլ հակադարձ կապ, ինչը նշանակում է, որ ավելի բարձր էթնոմեկուսացումը կապված է ցածր սթրեսակայունության հետ: Դա ցույց է տալիս, որ թեպետ ստացված կապը թույլ է, բարձր էթնոմեկուսացումը կարող է ազդել սթրեսակայունության մակարդակի նվազմանը: Էթնոֆանատիզմի և էթնոնիհիլիզմի հետ սթրեսակայունության էական կապ չի գրանցվել, ինչը վկայում է, որ էթնոֆանատիզմի և էթնոնիհիլիզմի մակարդակները ոչ միայն չեն ազդում սթրեսակայունության վրա, այլև հնարավոր է, որ դրանք չեն ունենում էական ազդեցություն սթրեսակայունության վրա:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ պատերազմը զգալիորեն փոխում է էթնիկական նույնականության ազդեցությունը պատերազմի մասնակից զինծառայողների սթրեսակայունության վրա: Դրական էթնիկական նույնականությունն այն կարևոր գործոններից է, որ օգնում է բարձրացնել անձի սթրեսակայունությունը: Մինչդեռ էթնիկական անտարբերությունը և էթնոմեկուսացումն ավելի թույլ են արտահայտված, իսկ էթնոֆանատիզմը և էթնոնիհիլիզմն այս դեպքում արտահայտված չեն:

Պատերազմի մասնակիցների շրջանում էթնիկական նույնականության և սթրեսակայունության միջև ուժեղ դրական կապը կարող է բացատրվել նրանով, որ ուժեղ դրական էթնիկական նույնականություն ունեցողները գտնում են աջակցություն նշանակալի խմբի անդամներից, ինչն իր հերթին նպաստում է սթրեսակայունությանը: Պատերազմի ժամանակ այս աջակցությունն ավելի կարևոր է դառնում, քանի որ սթրեսային իրադրության, պատերազմական լարվածության պայմաններում էթնիկական նույնականությունը կարող է դրսևորվել որպես հոգեբանական պաշտպանական մեխանիզմ:

Եզրակացություն

Պատերազմը՝ որպես սոցիալ-հոգեբանական տրավմատիկ իրողություն, էապես անդրադառնում է պատերազմի մասնակից զինծառայողների էթնիկական ինքնագիտակցության, սեփական էթնիկական նույնականության ընկալման վրա:

Հայտնվելով բարդ իրավիճակում՝ անձը երբեմն ունենում է ներքին կոնֆլիկտ և բարոյական խնդիրներ: Դրանք կարող են կապված լինել հաճախ պատերազմի պատճառների, նպատակների և ելքերի հետ, բռնության կիրառման և սեփական անձնական պատասխանատվության հետ, ինչը ևս կարող է էթնիկական նույնականության նկատմամբ կասկածներ և հիասթափություն առաջացնել:

Էթնիկական նույնականության զգացումն անձին տալիս է ներքին հոգեբանական աջակցություն, որն օգնում է հաղթահարելու սթրեսային իրավիճակները: Էթնիկական նույնականության բարձր մակարդակ ունեցող զինծառայողները կարող են առավել մեծ սոցիալական աջակցություն ունենալ, որն էլ նպաստում է ստեղծված իրադրությունում զինծառայողի անձի սթրեսակայունության բարձրացմանը:

Այսպիսով, վերլուծության ենթարկելով ստացված արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ պատերազմի մասնակից զինծառայողների սթրեսակայունության ու էթնիկական նույնականության միջև գոյություն ունի ուղիղ համեմատական կապ, որը կարող է փոխադարձաբար

ուժեղացնել և ամրապնդել վերոնշյալ երկու հոգեբանական բաղադրիչների փոխազդեցությունները: Սթրեսակայունության բարձր մակարդակ ունեցող պատերազմի մասնակից զինծառայողներն արտակարգ իրավիճակներում կարողանում են պահպանել սեփական ազգային նույնականության զգացումը և հակառակը՝ սթրեսակայունության ցածր մակարդակում թուլանում է ազգային նույնականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Арзамаскин Ю. Н. (2004). Вакаров А. Ф. Морально-психологическое обеспечение боевых действий частей и соединений в вооруженных конфликтах, локальных и региональных войнах. - М., ВУ. С. 37-39.
Arzamaskin Ju. N. (2004). Vakarov A. F. Moral'no-psihologicheskoe obespechenie boevyh dejstvij chastej i soedinenij v vooruzhennyh konfliktah, lokal'nyh i regional'nyh vojnah.- М.,VU. S.37-39. (In Russian)
2. Арзамаскин Ю. Н. (2002). Бублик Л. Д. Морально-психологическое обеспечение Вооруженных Сил России. - М., ВУ. С. 122-124.
Arzamaskin Ju. N. (2002). Bublik L. D. Moral'no-psihologicheskoe obespechenie Vooruzhennyh Sil Rossii.- М., VU. S.122-124. (In Russian)
3. Зеленков М. Ю. (2000). Можно ли уменьшить психогенные потери. //Красная звезда,. - № 191 от 10 октября.
Zelenkov M. Ju. (2000). Mozhno li umen'shit' psihogennye poteri. //Krasnaja zvezda,. - № 191 ot 10 oktjabrja. (In Russian)
4. Эриксон Э. (1996). Детство и общество. СПб.: Ленто, АСТ. - 592 с.
Jerikson Je. (1996). Detstvo i obshhestvo. SPb.: Lento, ACT. - 592 s. (In Russian)
5. Лопухова О. Г. (2015). Психология этнического самосознания и межкультурного общения. Учебное пособие. - Казань: Издательство «Бриг», - 124 с.
Lopuhova O. G. (2015). Psihologija jetnicheskogo samosoznaniya i mezhkul'turnogo obshheniya. Uchebnoe posobie. - Kazan': Izdatel'stvo «Brig», - 124 s. (In Russian)

6. Шпет Г. Г. (2014). Введение в этническую психологию: учебное пособие /Г. Г. Шпет. - Санкт-Петербург: П.Э.Т при участии «Алетейя». - 160 с.
Shpet G. G. (2014). Vvedenie v jetnicheskiju psihologiju: uchebnoe posobie /G. G. Shpet. - Sankt-Peterburg: P.Je.T pri uchastii «Aletejja». - 160 s. (In Russian)
7. Солдатова Г.У. Психология межэтнической напряженности: учебник. - Москва: Смысл, 1998. - 389 с.
Soldatova G.U. Psihologija mezhjetnicheskoy naprjazhennosti: uchebnik. - Moskva: Smysl, 1998. - 389 s. (In Russian)
8. Опыт морально-психологического обеспечения действий группировки войск в операции по восстановлению конституционного порядка в Чеченской Республике (2001). М., ГУВР, с. 55-58.
Opyt moral'no-psihologicheskogo obespechenija dejstvij gruppировки vojsk v operacii po vosstanovleniju konstitucionnogo porjadka v Chechenskoj Respublike (2001). M., GUVR, s. 55-58. (In Russian)
9. Cooley, C. (1902). Human Nature and Social Order. New York: Scribners,.
10. Tajfel Henri and John C. Turner (1979). An Integrative Theory of Intergroup Conflict //The Social Psychology of Intergroup Relations, edited by W. Austin and S. Worchel. Monterey: Brooks-Cole. P. 33-47.
11. Sareen, J., et al. (2014). Prevalence and correlates of PTSD in the Canadian Armed Forces. Canadian Journal of Psychiatry, 59(9), 468-479.;
MacNair, R. (2002). Perpetration-induced traumatic stress in combat veterans. Peace and Conflict: Journal of Peace Psychology, 8(1), 63-72.;
Shay, J. (2010). Achilles in Vietnam: Combat trauma and the undoing of character. Simon and Schuster.
12. Wertsch, J. V. (2002). Voices of collective remembering. Cambridge University Press.;
Van Dyke, N., & Van Dyke, P. (2006). Traumatic memories of war veterans. Journal of Traumatic Stress, 19(3), 399-408.;
Riexinger, M., et al. (2018). Consequences of war: A systematic review of studies on veterans' experiences and adjustment after deployment to war zones. Trauma, Violence, & Abuse, 19(5), 519-534.

ГАРИК ОВАКИМЯН, ЛИЛИТ СТЕПАНЯН, ЛЕВОН САРГСЯН - ВЗАИМОСВЯЗЬ ТИПА ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И СТРЕССОУСТОЙЧИВОСТИ УЧАСТНИКОВ ВОЙНЫ

Ключевые слова: *этническое самосознание, боевой стресс, война, участник войны, этнонигилизм, этническая индифферентность, этноэгоизм, этноизоляция, этнофанатизм*

В статье представлены результаты сравнительного анализа связи типа этнической идентичности и стрессоустойчивости у военнослужащих армянской, ассирийской и езидской национальностей, участвовавших в военных действиях. Теоретико-методологической основой работы послужили психологические теории и концепции, связанные с этнической идентичностью и стрессоустойчивостью личности, на основе которых были выбраны соответствующие методы и методики исследования. Анализ корреляционных связей полученных результатов показывает, что военнослужащие с высоким уровнем стрессоустойчивости в чрезвычайных ситуациях способны сохранять чувство своей национальной идентичности, и наоборот - при низком уровне стрессоустойчивости проявления национальной идентичности ослабевают. Результаты исследования подтверждают гипотезу о существовании прямой корреляционной связи между положительной этнической идентичностью и уровнем стрессоустойчивости. Сильная положительная связь между этнической идентичностью и стрессоустойчивостью среди участников войны может объясняться тем, что военнослужащие с сильной положительной этнической идентичностью находят поддержку в первичных группах, что также способствует уровню их стрессоустойчивости. В условиях войны поддержка первичных групп становится особенно важной, так как этническая идентичность в стрессовых условиях в данном случае проявляется как психологический защитный механизм.

GARIK HOVAKIMYAN, LILIT STEPANYAN, LEVON SARGSYAN - THE RELATIONSHIP BETWEEN THE TYPE OF ETHNIC IDENTITY AND STRESS RESISTANCE OF WAR PARTICIPANTS

Keywords: *ethnic self-awareness, combat stress, war, war participant, Ethnonihilism, ethnic indifference, ethno-egoism, ethno-isolation, ethno-fanaticism.*

The article presents the results of a comparative analysis of the relationship between the type of ethnic identity and stress resistance of the Armenian, Assyrian, and Yezidi soldiers participating in the war. The theoretical and methodological basis of the work was the psychological theories and concepts related to the ethnic identity and stress resistance of the person, on the basis of which appropriate research methods and methodologies were chosen. Correlational analyzes of the obtained results show that in emergency situations, the servicemen participating in the war with a high level of stress resistance are able to maintain their sense of national identity, and on the contrary, at a low level of stress resistance, the manifestations of national identity weaken. The results of the study support the assumption that there is a direct correlation between positive ethnic identity and the level of stress resistance. The strong positive association between ethnic identity and stress resilience among combatants may be explained by the fact that servicemen who have a strong positive ethnic identity find support from members of the primary group, which also contributes to the levels of stress resilience. In the conditions of war, the support of the primary group becomes more important, because in stressful conditions, the ethnic identity with the group is manifested as a psychological defense mechanism.

Ներկայացվել է՝ 14.10.2024 թ.
Գրախոսվել է՝ 21.11.2024 թ.

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

**ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԺԱՄԿՈՑՅԱՆ**

Համառոտագիր

Այս հոդվածում անդրադարձել ենք հոգեկան առողջությանը, նրան սպառնացող գործոններին և այս համատեքստում ինքնակառավարմանը և նրա առանձնահատկություններին:

Առողջությունը մեր ողջ կյանքի հիմքն է, հաջողության և բարեկեցության բանալին, կյանքի նպատակներին հասնելու կարևորագույն պայմանը: Դա ոչ միայն մարդու հիմնական արժեքն է, այլև հասարակության և պետության:

Հոգեկան առողջության խթանումը պետք է ընդգրկի անձի կառուցվածքային բոլոր ոլորտները, այդ թվում ինքնակառավարման համակարգն իր բոլոր բաղադրամասերով: Առողջ հոգեկանի տեր մարդը չի ընդունում որոշումներ, որոնք հակասում են հասարակության մեջ հաստատված վարքագծի սովորական կանոններին: Այլ կերպ ասած, եթե մարդու բարոյական կարգավիճակը դեֆորմացված չէ, ապա մենք կարող ենք ակնկալել, որ նրա կայացրած որոշումները օգուտ կբերեն իրեն, շրջապատող մարդկանց և այն գործին, որին նա իրեն նվիրել է:

Հիմնաբառեր՝ հոգեկան կայունություն, հոգեբանական առողջություն, նպատակադրում, ինքնավերահսկում, կանխատեսում, հակասությունների վերլուծություն:

Ներածություն

Ներկա ժամանակներում առանձնակի արդիականություն է ձեռք բերել հոգեկան առողջության հիմնախնդիրը: Մենք այսօր ապրում ենք անընդհատ և արագորեն փոփոխվող աշխարհում, որում գրեթե ամեն օր նոր իրադարձություններ են տեղի ունենում՝ հաճախ փոխելով մեր կյանքը անցանկալի ուղղությամբ՝ բնածին և տեխնոգեն աղետներ, ռազմական գործողություններ, վթարներ, համավարակներ և այլն: Այս աշխարհադադաքական, սոցիալական, տնտեսական բարդ իրավիճակներն ուղեկցվում են անընդհատ և տևական անորոշությամբ, անկայունությամբ, բացասական և չճշտված լուրերի մեծաքանակ հոսքով, առօրյա կյանքի

բազմաբնույթ փոփոխություններով: Այս իրավիճակին բնութագրական է տազնապայնություն, անհանգստություն, լարվածություն, վախեր, որոնք կարող ենք համարել հոգեկան առողջության սպառնալիքներ: Գուցե որոշ մարդիկ կարողանում են վերահսկել իրենց հուզական ոլորտը, ավելի արագ հարմարվել փոփոխվող իրավիճակներին, սակայն շատերի հոգեկան առողջությունը սասանվում է: Ուստի ներկայումս առանձնակի արդիականություն է ձեռք բերել հոգեկան առողջության հիմնախնդիրը:

Հոգեբանության մեջ առողջությունը դիտարկվում է երկու տեսանկյունից՝ *հոգեբանական* և *հոգեկան*:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ հին ժամանակներում շատ գիտնականներ (Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը, Էպիկուրը, ստոիկները) ուսումնասիրել են բարոյական վարքի խնդիրը, որը հոգեկան առողջության հետ նույնական էր դիտարկվում:

Նրանք նախազգուշացնում էին կյանքի բարոյական հիմքերի անկման սպառնալիքի մասին՝ փաստելով հասարակության կյանքում կենսաբանական պահանջմունքների բավարարման գերակշռության փաստերը՝ ի վնաս հոգևոր պահանջմունքների:

Ա. Ա. Կոիլովը (2005) հոգեկան առողջության գնահատման չափանիշների հիմքում դնում էր հոգեկան դրսևորումների ձևերը՝ *հարկությունները, վիճակները, գործընթացները*: Ա. Ա. Կոիլովը հոգեկան առողջությունը սահմանում է որպես առողջության անբաժանելի տարր, որը ներառում է հոգեկան բնութագրերի մի շարք, որոնք ապահովում են դինամիկ հավասարակշռություն և անձի սոցիալական գործառույթները կատարելու հնարավորություն: Հոգեպես առողջ մարդը հարմարված է հասարակությանը և դրա ակտիվ մասնակիցն է:

«Հոգեկան առողջություն» գիտական կատեգորիան առավել մանրամասն ներդրվել և մշակվել է Ի. Վ. Դուբրովինան (2018): Ըստ հեղինակի, եթե «*հոգեկան առողջություն*» տերմինը վերաբերում է առաջին հերթին առանձին հոգեկան գործընթացներին և մեխանիզմներին, ապա «*հոգեբանական առողջություն*» եզրը վերաբերում է անհատին որպես ամբողջություն և սերտորեն կապված է մարդու ոգու բարձրագույն դրսևորումների հետ:

Ի. Վ. Դուբրովինան նշում է, որ հոգեբանական առողջությունը մարդուն դարձնում է ինքնաբավ, այն զինում է նրան ինքնաըմբռնման, ինքնընդունման և ինքնազարգացման միջոցներով՝ այլ մարդկանց հետ փոխգործակցության համատեքստում:

Ի. Վ. Դուբրովինան (2009) հոգեկան առողջությունը սահմանում է որպես մարդու հոգեկան հատկությունների դինամիկ ամբողջություն, որն ապահովում է ներդաշնակություն անհատի և հասարակության

պահանջմունքների միջև և անձի կենսական առաջադրանքների կատարման հարցում կարևոր նախապայման է:

Ըստ Ա. Միխայելովայի (2007)՝ հոգեկան առողջություն ասելով՝ հասկանում ենք մարդու մտավոր զարգացման մեջ նորմայի առկայությունը, ընկալման իրատեսությունը և ինքնակարգավորվելու կարողությունը, հաղորդակցական մշակույթը և բարոյական վարքագիծը:

Հոգեկան առողջությունը մարդու հիմնական իրավունքներից է: Այն որոշիչ դեր ունի ոչ միայն անձի, այլև հասարակության, սոցիալ-տնտեսության զարգացման համար: Ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության (Դիտված՝ 01.07.2022)՝ հոգեկան առողջությունը մարդու անօտարելի և անփոխանցելի ոչ նյութական բարիք է, որը ներառում է շրջակա միջավայրի համապատասխան ընկալումը, որոշումներ կայացնելու ու իրագործելու ունակությունը, կայուն հուզականության դրսևորումը և պահպանումը:

Հոգեկան առողջության շրջանակում փորձենք բացատրել նորմալ և ոչ նորմալ վարքագիծ հասկացությունները:

Ըստ Լ.Բ. Շնայդերի (2005, էջ 8)՝ վարքագծի նորմայի և շեղման գնահատման նորմա (*նոմոցենտրիկ*) մոտեցումը մարդու գործունեությունը դիտարկում է նորմային համապատասխանության, մյուսը՝ *հոգեբուժական* (*նոզոցենտրիկ*) մոտեցումը, մարդու վարքը դիտարկում է հիվանդության, հոգեպաթոլոգիական ախտանիշների արտահայտվածության տեսանկյուններից:

«Նորմա» հասկացության հետ կապված առավել տարածված է *վիճակագրական-ադապտացիոն մոտեցումը*, որը.

1. ինչ-որ միջին, ընդհանրացված, ընդհանուրից չառանձնացվող մի բան է,

2. մի բան, որը շրջակա միջավայրին քիչ թե շատ հարմարված է:

Դեռահասների և պատանիների համար վիճակագրորեն հոգեկան առողջության նորման մի փոքր այլ է, քան՝ մեծահասակներինը:

Հոգեպես առողջ մարդը ձգտում է հավասարակշռել և զարգացնել իր ես-ի բոլոր կողմերը՝ ֆիզիկական, հոգեկան, կոգնիտիվ, հուզական, վարքային: Հոգեկան առողջությանը չի սահմանափակվում հոգեկան խանգարումների բացակայությամբ:

Ինքնակառավարումը, ընդհանուր առմամբ, հոգեկան առողջության կարևորագույն չափանիշներից մեկն է: Մարդու կյանքում հոգեկան ինքնակառավարման տեղն ու դերը բավականին ակնհայտ են, եթե հաշվի առնենք այն փաստը, որ նրա ամբողջ կյանքը գործնականում գործունեության, արարքների, շփման ակտերի և նպատակաուղղված ակտիվության այլ տեսակների անսահման բազմազանություն է:

Ինքնակառավարումը համակարգված, կազմակերպված հոգեկան գործընթաց է, որը ղեկավարում է արտաքին և ներքին ակտիվության բոլոր ձևերը և ուղղված է սուբյեկտի կողմից որոշված նպատակներին հասնելուն (Кремень, 2001):

Ինքնակառավարումը ուսումնասիրվել է բազմաթիվ հեղինակների կողմից: Ըստ Պ.Ս. Գուրևիչի (2007)՝ ինքնակառավարումը հիմնականում ենթադրում է անձի իմացություն իր և իր վարքի, արարքների, մտքերի, հույզերի և շարժառիթների մասին: Ա.Ա. Կոնիովի (2005) կարծիքով՝ հոգեկան ինքնակառավարումը ներառում է մարդու գիտակցված ազդեցությունը նրա հոգեկան գործընթացների, վիճակների, հատկությունների, ինչպես նաև սեփական վարքի վրա: Ըստ Ն.Մ. Պեյսախովի (1991)՝ ինքնակառավարման կարողությունը հասկացվում է որպես անձի կողմից իր գործունեության ձևերի՝ հաղորդակցության, վարքագծի, գործունեության, փորձի նպատակային ինքնափոփոխություն կամ կառավարում:

Ինքնակառավարումը կապվում է հավասարակշռության, հոմեոսթազի, ադապտացիայի հասկացությունների հետ: Ի. Պ. Պավլովը 1903թ. գրում է, որ ֆիզիոլոգիական հետազոտության խնդիրներն ու նպատակները կայանում են նրանում, թե ինչպես պարզ և բարդ օրգանիզմները, չնայած իրենց բարդ կառուցվածքին, կարողանում են պահպանել իրենց ամբողջականությունը՝ միջավայրի հետ հավասարակշռություն պահպանելու գործընթացում: Ի. Պ. Պավլովը մարդուն բնորոշեց որպես ինքնակառավարվող համակարգ, որն ինքն իրեն ուղղորդում է, դաստիարակում և կատարելագործում:

Ըստ Լ. Ալեքսեևայի՝ ինքնառավարումը դիտարկելով որպես սուբյեկտիվ ակտիվության ձևերից մեկը:

Ըստ Օ.Ա. Կոնոպկինի՝ ինքնակառավարումը կարող է դրսևորվել մի դեպքում որպես ինքնուրույն գործընթաց, որպես գործունեության ակտիվության տեսակ, մյուս դեպքում՝ որպես գործողությունների համակարգ, որը մարդու կողմից կարող է լինել գիտակցված կամ չգիտակցված:

Շագիվալևա Գ. Ռ., Բիլդանովա Վ. Ռ. գրում են, որ հոգեբանական ինքնակառավարումը իրենից ներկայացնում է հնարների և մեթոդների ամբողջություն, որն ուղղված է հոգեֆիզիոլոգիական վիճակների շարժմանը, ինչի շնորհիվ հոգեկան և սոմատիկ գործառույթները բարելավվում են, միաժամանակ իջնում է հուզական լարվածության մակարդակը, բարձրանում է աշխատունակությունը և հոգեբանական դրական տրամադրվածության աստիճանը:

Որպես նորագոյացություն՝ ինքնակառավարումը առաջին անգամ հայտնվում է նախադպրոցական տարիքի վերջում, իսկ հետո կրտսեր դպրոցական տարիքում կենտրոնական տեղ է զբաղեցնում ոչ միայն վարքը, այլև հոգեկան գործընթացները կառավարելու ունակությունը: Արդյունքում ձևավորվում են մտածողությունը, ուշադրությունը, կամային է դառնում նաև երեխայի գործունեության կազմակերպումը:

20-րդ դարի սկզբին հոգեկան առողջության ապահովման գործում ինքնակառավարման գաղափարը նկատելիորեն գրավեց հոգեբանների և հոգեբույժների ուշադրությունը: Նրանք կարծում էին, որ առողջ մարդը կարողանում է կառավարել իր հոգեկան աշխարհն ու հսկողության տակ պահել այն: Հոգեկան ինքնակառավարումը, ընդհանուր առմամբ, համարվում է հոգեկան առողջության կարևորագույն չափանիշներից մեկը:

Ինքնակառավարումն իրականանում է հետևյալ շարժընթացով՝ հակասությունների վերլուծություն, կանխատեսում, նպատակադրում, պլանավորում, հաջողության գնահատում, որոշման ընդունում, ինքնավերահսկում, շտկում: Յուրաքանչյուր փուլում ծավալվում են գործընթացներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ հոգեկան առողջության ապահովման վրա:

Հակասությունների վերլուծության /իրավիճակի մեջ կողմնորոշման/ փուլում ձևավորվում է իրավիճակի սուբյեկտիվ մոդելը, որտեղ մարդը պետք է պատասխանի ի՞նչ է կատարվում ինձ հետ, ինչու՞ այժմ չի ստացվում, ինչպես առաջ, ինչը՞ փոխվեց և այլ նման հարցերի:

Կանխատեսման փուլում մարդն ստեղծում է ուղղման ցանկալի նպատակի պատկերը, որը հիմնված է անցյալի և ներկայի վրա: Այստեղ, մարդը վերադառնալով անցյալ, փորձում է կանխատեսել գործողությունների հետագա ընթացքը և ցանկալի գործողությունները՝ պատասխանելով հետևյալ հարցերին՝ ի՞նչ կլինի, եթե ոչինչ չանեմ, իսկ եթե ինչ-որ բան անեմ, ի՞նչ կլինի, իսկ ի՞նչ անեմ, որ ճիշտ լինի:

Նպատակադրման փուլում կանխատեսման շնորհիվ ստեղծվում է գործունեության հետագա ընթացքի ցանկալի նպատակների համակարգը, որտեղ պետք է ընտրություն կատարել: Ընտրությունը կատարվում է «ի՞նչ պետք է կոնկրետ փոխել՝ իրավիճակը, թե՞ ինքն իրեն» հարցերի պատասխանների հիման վրա:

Նպատակադրումը, որպես անձնային համակարգ ձևավորող հատկություն, ներառում է նպատակներ դնելը, որոնց անունից գործում է անձը: Կյանքի նպատակների ճիշտ ընտրությունը հոգեկան առողջության ապահովման որոշիչ պայմաններից է: Օրինակ՝ կյանքի գլխավոր նպատակի, ապագա մասնագիտության ընտրությունը և կյանքում իր ոչ

պատահական տեղը որոշելը ամենակարևոր որոշումներից մեկն է, որը մարդ պետք է կայացնի: Ի դեմս իր գործով չգրադված, աշխատանքի մեջ չհայտնված մարդու՝ հասարակությունը կրում է անդառնալի հոգևոր և նյութական կորուստներ: Միևնույն ժամանակ անհատն ինքն է կրում ահռելի հոգեբանական վնաս: Երկար ժամանակ իր համար ոչ սիրելի աշխատանքով զբաղվելը կարող է հանգեցնել ներքին հոգեկան հավասարակշռության խախտման և անձնական դեֆորմացիաների:

Պլանավորման փուլում մարդը պատասխանում է՝ նպատակին հասնելու համար ինչ միջոցներ են անհրաժեշտ և ինչպիսի հաջորդականությամբ այն պետք է իրականացնել և մշակում նպատակին հասնելու գործողությունների հաջորդականությունը:

Հաջողության գնահատման չափանիշների ընտրության փուլում մարդը պետք է ցուցանիչներով գնահատի իր հաջողությունները՝ պլանի իրականացման համար: Ինչպես գնահատել այն, ինչ անհրաժեշտ էր անել: Ինչպես գնահատել իր արարքների ու գործողությունների բավարար լինելը: Չափանիշների հապճեպ ընտրությունը կարող է հանգեցնել անհիմն գործողությունների:

Որոշման ընդունման փուլում պլանից անցում է կատարվում դեպի գործողությունները, այսինքն՝ գործելու որոշում է ընդունվում: Բայց դրա համար մարդուն անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին. ամե՞ն ինչ եմ արդյոք կանխատեսել, ունե՞մ արդյոք ժամանակ, սկսե՞մ արդյոք գործել, թե՞ մի փոքր էլ սպասեմ: Այս դեպում ժամանակ կորցնել չի կարելի: Երբ մարդն ի վերջո որոշում է անցնել ակտիվ գործողությունների, հաճախ պարզվում է, որ այդ պահին ամեն ինչ արդեն այնքան է փոխվել, որ ամեն, նույնիսկ շատ պատրաստված գործողությունը կորցնում է իր իմաստը:

Ինքնավերահսկման փուլում ինֆորմացիա է հավաքագրվում այն մասին, թե ինչպես է կատարվում ծրագիրը շփման, վարքի, գործունեության ընթացքում: Մարդը պատասխանում է հետևյալ հարցերին՝ ինչպե՞ս է ընթանում գործը, կա՞ր արդյոք շարժ նպատակին հասնելու համար, իմ արարքներում սխալներ չկա՞ն արդյոք:

Շտկման փուլում կատարվում է ռեալ գործողությունների, վարքի, շփման, ապրումների, ինչպես նաև հենց կառավարման համակարգի փոփոխություն: Մարդը պատասխան է փնտրում հետևյալ հարցին՝ ինչպե՞ս շարունակել գործընթացը: Այդ հարցի պատասխանը կախված է ինքնավերահսկման արդյունքներից (Շահինյան, 2016):

Մարդը պետք է կարողանա «վերձանել» իր հոգեվիճակը և անհրաժեշտ ազդեցություն գործադրել դրա վրա, իմանա իր ամենաուժեղ և թույլ բնավորության առանձնահատկությունները, կարողանա անաչառ

և համարժեք գնահատել իր ֆիզիկական և մտավոր կարողությունների իրական մակարդակը: Նա պետք է կարողանա կառավարել իր հոգեկան առողջությունը: Վերջինս ներառում է նաև սեփական հոգեկանի մարզում, նրա պաշարների և զարգացման բացահայտում, մտավոր գործընթացների (հիշողություն, ուշադրություն, երևակայություն և այլն) բարելավում, մտքի և զգացմունքների կարգապահության զարգացում: Մարդուն պետք է կրթել միտված լինելու ակտիվ, գիտակից կյանք վարելու՝ հասկանալով դրա նպատակները և հոգեկան ինքնակարգավորման ազդեցության բնույթը և սովորեցնել տիրապետել դրա տեխնիկան՝ որպես վարքագծի մշակույթի անբաժանելի բաղադրիչ:

Կայացված որոշման իրականացումը պահանջում է, որ անհատը պատրաստ լինի դրսևորել այս փուլի համար անհրաժեշտ որակները: Դրանցից որով և որքանով են դրանք հստակ արտահայտված, կարելի է որոշ չափով դատել նրա հոգեկան առողջության վիճակի մասին: Ենթադրվում է, որ մարդը պասիվ է, չի կարողանում գործնականում ապահովել հանձնարարված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ գործունեությունը, հոգեպես անառողջ է: Սակայն, ինչպես ծուլությունը, որը կաթվածահար է անում ակտիվ վարքը, այն բնութագրվում է որպես հոգու հիվանդություն:

Հոգեկան առողջությունը յուրաքանչյուր մարդու համար *անհատական* է, որի շրջանակներում մարդը բախվում է տարբեր աստիճանի բարդությունների և ապրում սթրեսի տարբեր մակարդակներ:

Հոգեկան առողջությունը խաթարող գործոնները բազմաթիվ են, որոնք միևնույն ժամանակ կարող են հանգեցնել հոգեկան խանգարումների՝ սոցիալական, տնտեսական, աշխարհաքաղաքական, էկոլոգիական իրավիճակները՝ ներառյալ աղքատությունը, բռնությունը, անհավասարությունը և սոցիալական անբարենպաստ պայմանները:

Հոգեկան առողջության խաթարմանը նպաստող գործոնները կարող են ի հայտ գալ կյանքի բոլոր փուլերում, սակայն նրանք, որոնք առաջանում են մարդու զարգացման համար ամենակարևոր ժամանակաշրջաններում, հատկապես վաղ մանկության շրջանում, ունեն ուժեղ բացասական ազդեցություն: Օրինակ՝ հայտնի է, որ դաժան դաստիարակությունը և ֆիզիկական պատիժը խաթարում են երեխաների հոգեկան առողջությունը, իսկ դպրոցական տարիքում՝ ծաղրը:

Հոգեկան առողջության ամրապնդումը խթանում է հոգեկան խանգարումների կանխարգելումը: Այն ենթադրում է՝

1. Հոգեկան առողջության խաթարման ռիսկի նվազեցում,
2. Հոգեկան կայունության բարձրացում,
3. Հոգեկան առողջության համար բարենպաստ միջավայրի ստեղծում:

Այս ուղղությամբ աշխատանքները կարող են ներառել առանձին անհատներին, հասարակության կոնկրետ խմբերին, ողջ հանրությանը:

